

ԳՐԵԿՈ-ՀԱՅԻ

ՊԱՏԱՎԱԾԹՆԵՐ

851.99
17-35

ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

350Y-4B

η-35

-35 ytisfpjml
mcysfjlp

542

8/11 79 p



ПК з. 243 т. 3.000.000

891.99 ար
7-35.

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

15 NOV 2011

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

ԿՈՐՄԻՐ ԲՈՆՈԿԻ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

ԸՆԿԵՐՆԵՐ

Նրանք մտերիմ ընկերներ եյին՝ Ղոնդին ու Գլուխը, յերկու հարեան ընտանիքների «կաթնախապեր» զավուկներ։ Դա նշանակում է որորոցից ընկերներ։

Աչքերը, վոր բաց արին ու առաջին զգացումն ունեցան թե աշխարհ են յեկել՝ առաջին անդամը իրար եր վոր տեսան։ Դեռ աշխարհը աղոտ մի բան եր այն ժամանակ, — վերևը կապույտ, ներքեւը կանաչ։

Դյուզը ինքը մի մեծ աշխարհ եր, ուր խաղում, վազվզում յերգում, ծեծկվում եյին Ղոնդին ու Գլուխը մյուս յերեխաների հետ։ Զարածնի եյին յերկուսն ել։ Ու միշտ միասին, ինչպես մարդը շվաքի հետ։ Հենց փողոցի ծայրից մինը յերեար՝ հարց կտային նայողները։

— Ես՝ Ղոնդին. բա Գլուխը^o։

— Այ, Գլուխը։

Մյուսը ժամանակ չեր կորցնում — իսկույն յերեւում եր նրա հետեւից։


Քա՞նի անդամ են նրանք մեկ մեկու բացակայության ժամանակ իրար պաշտպանելու համար ծեծել ծեծվել։

— Ղոնդի^o, քիթդ ինչի^o յե ջարդվել։

— Զիուց վեր ընկա։

Նույն բանը պատասխանում եր Գլուխը, յերբ ջարդվողը ինքն էր լինում Ղոնդուն պաշտպանելու համար։ Բայց վոր իրար եմին հանդիպում՝ այս մասին վոչ մի խոսք։

Մի անդամ Ղոնդենց տանը հարիսա եյին ուտում։ Գլուխը դնացել եր սար, հնար չկար նրան կանչելու։ Ղոնդին շատ ներս ու գուրս արավ, փնթվնթմց, անհանդիստ յեղավ։ Մայրը նկատեց այդ, հասկացավ մղամֆառը, բայց ձայն չհանեց։ Ղոնդին չհամբերեց ու մտահոգ հարցեց։



5507-48

— Բա Գըդըլը ի՞նչ պետք ե ուստի:

— Վոտներս, —անփուլթ պրատասխաննեց Ղոնդուց մի քիչ մեծ յեղբայրը:

Հարիսով ամանը թուալ գեպի հանդպնողի ճակատը: Կերակուրը խառնվեց վերքից հոսող արյան հետ, վիրավորն ընկազ ուշաթափ: Ղոնդին, վոր բարկությունից դողում եր՝ նկատեց անդամ մյուս՝ ավելի մեծ յեղբոր ձեռքի թափահարումը իր դվիսի վրա, բայց չպաշտպանվեց, ընդունեց հարվածը, և միաժամանակ անսասան կանգնեց ու աչքերը չուած նայում եր թե ինչպես են ուշքի բերում իր ձեռքով վիրավորված յեղբայրը: Մի քանի հարված ել ստացավ Ղոնդին, բայց վոչ աեզից թնդաց, վոչ ել բողոքեց: Նա միայն դոհ եր, վոր Գըդըլին վիրավորիշ խոսք ասողը պատժված եր իր ձեռքով:

Բայց յերբ Գըդըլը ձիռ մերկ մեջքին նստած սարից յեկազ և Ղոնդենց դռան առջեռվ անցավ գնաց իրենց առւնը՝ Ղոնդին հազիվ լսելի հարցրեց.

— Հը՞ , յեկա՞ :

— Հա, —թթու պրատասխաննեց Գըդըլը և անդամ չնայեց Ղոնդուն:

Յեզ նույն յերեկո Գըդըլը իր փոքրիկ յեղբորն ուղարկեց Ղոնդուն կանչելու իրենց տուն, վոր միասին ընթրեն և միասին ել այնուեղ քննեն: Մի որ եր սարում ապրել առանց Ղոնդու և սաստիկ կարուտել եր նրան:

Քնեցին կտրանը մի վերմակի տակ և յերկար ժամանակ Գըդըլը փսխոցով պատմում եր թե ինչպես եր սարում սիրտը ճանելիս յեղել:

— Ինչի՞ , —հարցրեց Ղոնդին մեքենաբար:

— Զեմ իմանում:

Բայց Գըդըլը շատ լավ եր իմանում: Ղոնդին այնուեղ չեր:

Յերբ Ղոնդուն դպրոց ավին, նա իսկույն տուն փախավ, յերբ տեսավ, վոր Գըդըլին ել չեն բերել այնուեղ. մինչ մի որ առաջ նրան հայտնել եցին, վոր Գըդըլն ել պիտի դպրոց գնա:

Համառեց Ղոնդին, չգնաց դպրոց, մինչև Գըդըլին ել դպրոց տարան: Բարեբախտաբար յերկուսին ել միննույն դասարան ընդունեցին —այլապես ել չեր լինի բնականաբար, —և թեև մի նստարանին չնստեցրին և նրանք ել ինչ վոր չկարողացան այդ

պահանջը դնել, բայց չուտ չուտ Ղոնդին ծռվում հետ եր նայում Գըդըլին.

— Գըդըլ:

— Հա, եստեղ եմ:

Շարունակ, դասի ժամանակ, այնուհետեւ նրանք երար եյն նայում: Այլպես վոչ միայն հաջելի յեր, այլև դասն այսպես եր միայն հասկանալի դառնում:

Ավարտեցին ծխական դպրոցը, և միասին մտան կյանք: Կյանքն ել ինչ եր՝ գյուղական աշխատանք—առաջ դառնարած, հետո հոտաղ և միշտ ել մեջընդմեջ ամեն բան: Գյուղի պատունին այս կողմից ամենագետ է: Հետո ընկան պղնձի հանքերը, բանվոր դառնան: Հետո ել հազիվ եյին հասել սիրո առաջին պտուղներին, վոր մի մեծ փոթորիկ վրա հասավ և ամբողջ տշխարհը վոտքի հանեց: Համաշխարհային պատերազմը պոկեց գյուղից ու քշեց տարավ միլիոնների հետ գյուղի յերիտասարդներին: Հերթը նոր եր հասնում նաև Ղոնդուն և Գըդըլին, վոր պատերազմը Ռուսաստանում փոխվեց քաղաքացիական կոիվների, Հայաստանը անցավ դաշնակցականների ձեռքը, սկսվեց յեղբայրական կոտորածները և լեռնամասը անջատվեց մնացած Հայաստանից իր հոտով, կոիվներով ու կյանքով:

Ղոնդին ու Գըդըլը ծանոթացան ընդհատակյա բոլցեվիկների հետ և ընդունվեցին կոմյերիտականներ: Յեզ յերբ նոյեմբերին Հայաստանը ըսորհրդայնացվեց, լեռնամաս ուղարկվեց մի կարմեր զորամաս:

Սրանց մոտենալը իմանալով՝ յերկուսն ել փախան գյուղից և մտան պարտիզանական մի խմբի մեջ, վոր ուղեկցում եր զորամասին:

Լեռնային գյուղը ձորերում դառնում է մրցաստան, մինչ յերեք դարու արտերն են ծփում: Գիշեր ե: Գյուղական տան անշուք պատշգամը բացվում է այգու վրա, վոր իջնում է դեպի ձորը: Մրոտ ծրագը հազիվ ե լուսավորում սեղանը, վորի հետեւ նստած է կարմիր զորամասի հրամանատար Դավթյանը, հնամաշ զգեստներով և խիտ սե մորուքով: Նա հոգնած, բայց յե-

սանդու դեմք ունի: Նրա գիմաց նստել են կրտսեր հրամանատար Ռուբենը, քաղղեկ Ավետը:

Ավետը յերկար բացատրելուց հետո յեզրակացրեց.

— Դուք գիտեք, բայց յես հարմար եմ համարում պարտի զաններից այդ յերկու հոգուն:

— Յես ճանաչում եմ դրանց, շատ կարիճ տղերք են, — ասաց Ռուբենը. Դավթյանը մորուքն եր շփում և աչքերը պատռւհանի մթության հառած՝ մտածում եր:

— Կտրիճ լինելը դեռ քիչ է: Դաշնակցականների շտաբում հստած ե Աստուրովը՝ դենիկինյան գնդապետ, նա պահակներ կլինի դրած կամուրջի վրա՝ նշանակություն չունի թե կամուրջը թիկունքումն է: Մեծ խումբ չենք կարող ուղարկել՝ կնկատվի: Մեզ պետք են յերկու մարդ, կտրիճ, բայց տեղանքին շատ լավ ծանոթ, քանի վոր պիտի անցնեն հակառակորդի թիկունքը և կամուրջին մոտենան, սատանան դիտե ինչ կողմնակի տեղերով: Ի՞նչ տղաներ են, պայմուցիկ նյութերին ձանո՞թ են: Սա յե ամենից գլխավորը:

— Ծանօթ են, — պատասխանեց Ռուբենը, — պղնձահանքերում աշխատել են:

— Յենթադրո՞ւմ ես, թե հաստատ գիտես:

— Հաստատ դիտեմ:

— Գրագետ ե՞ն:

— Ծխականն են ավարտել, ի՞նչ ես սոսում, — բացատրեց Ավետը մեծ բավականությամբ:

— Կանչիր ներս, — ասաց Դավթյանը:

Ռուբենը դուրս դնաց:

— Յեթե կամուրջը պայթեցնենք, հոգեբանությունը միանգամայն կփոխվի կամուրջի թե այս և թե այն կողմում: Յես իսկույն պրոպագանդիստներ կուղարկեմ: Բայց կարծո՞ւմ ես, վոր հակառակորդի հրետանին մինչև պայթեցնելը չի անցնի կամուրջը:

— Կարող ե և անցնել, — ասաց Դավթյանը, — այդ գեպքում դորձը տանուլ կտան գոնե յերկար ժամանակ: Կամուրջը պիտի վճռի ամեն բան: Բայց պիտի կարողանան... տնայինագործություն չանենք. այ կետն տղերքը՝ կտեսնենք, — ժամաց Ավետը՝ հիշելով ինչ վոր կոմիկ գեպքեր յեկողների մասին:

Ներս մտավ Ռուբենը՝ հետեւից բերելով Ղոնդուն և Գլութը: Դավթյանը խոդու, բայց բարի հայացքով նայեց նրանց և հարցրեց.

— Վո՞րտեղացի յեք:

— Վերնաշենցի, — պատասխանեց Գլութը:

— Ի՞նչ ընտանիքից եք:

— Յերկուսս ել մի տեսակ ընտանիքից ենք, — ասաց Ղոնդին:

— Զքավո՞ր ընտանիքից:

— Ուրիշ ի՞նչ կարող ելինք լինել:

— Ուրիշ ի՞նչ, — կուլակ, միջակ...

— Կոմյերիտականներ ենք, — ժպտալով ասաց Ղոնդին:

— Այդպես ասեցեք, — հանդուտավ Դավթյանը: — Լավ: Զեղութիւնը ուղարկենք մի շատ պատասխանատու գործի: Դուք պայմուցիկ նյութեր բանեցրե՞լ եք:

Ղոնդին պատասխանեց զարմացածի պես:

— Բանեցրել ենք, ի՞նչպես չենք բանեցրել:

— Շատ պարզ ինչո՞ւ պետք ե բանեցրելիք: Վորտեղո՞ղ եք բանեցրել:

— Պղնձի հանքերում ամենքն ել գիտեն, ընկեր հրամանատար, — նույն տոնով պատասխանեց Ղոնդին:

— Շատ լավ, — ասաց Դավթյանը, — հիմա ձեզ կտամ մի առաջդրանք: Պետք ե նամակը հայի խմորում տանեք հասցնեք Վերնաշեն ընկեր Վերդանին: Շատ կարեոր նամակ ե: Մյուս առաջդրանքն ե պայթեցնել գնդապետ Ասա տուրովի թիկունքի Շուշանաձորի կամուրջը: Յերկուսով եք գնուլու, կամուրջը պետք և պայթեցնեք, չպիտի բռնվեք, նամակը պետք ե տեղ հասցնեք, գարճյալ չպիտի բռնվեք և պատասխանը բերեք ինձ: Ամենաշատ յերեք որ ե ժամկետը: Յերեք որը վոր անցնի՝ ել ոգուտ չունի համարյա: Կարո՞ղ եք:

— Կարող ենք, — այս անգամ խոսեց Գլութը, վոր մինչ այդ լրւու եր:

Հրամանատարը փորձել ուղեց.

— Յեթե չեք կարող, հանձն մի առնեք:

— Կենդանի չենք վերադառնա, ընկեր հրամանատար, — ասաց Գլութը:

Դավթյանը կնճռուեց ճակատը:

— Դործ ե պետք: Ինչվոր կդա ձեռքնելից՝ պիտի անեք,

մոչ մի վտանգի առաջ չպիտի կանգնեք և սռաջաղբանքը պիտի կտտարեք: Անպատճա՛ռ: Անպայմա՛ն: Կրկին եմ ասում՝ կար՞ք եք:

— Կարող ենք, — ասաց Գլութը հանգիստ ձայնով:

— Կարող ենք, — կրկնեց Ղոնդին, պակաս չմնալու համար:

Դավթյանը զնող հայացքով նայեց ընկերներին: Նրան դուր էր գալիս նրանց միամիտ ու պարզ վտահությունը, բայց կըշ-քաղաքում եր թե վո՞րքան ընդունակ են նաև գործը կատարելու:

— Շատ լավ, — ասաց նա, — ձեզ կտանեն հիմա սակրավորների մոտ, նրանք մանրամասն կրացատրեն:

Հետո նամակը: Ծխախոտի թղթի վրա յէ, զդույշ գրեք հացի խմորի մեջ: — Դե, հիմա կդնաք: Ինձ նայեցեք: Զդուշ, վերին ստուժանի, չքոնվե՞ք:

— Ինչո՞ւ պիտի բռնվենք, ընկեր հրամանատար, — մի քիչ միրափորված հարցրեց Գլութը:

Դավթյանը քննող հայացքը այս անգամ զցեց Գլութի վրա.

— Ի՞նչպես թե ինչու: Պայթեցնողները չե՞ն բռնվում: Յեթե բռնվե՞ս՝ ի՞նչ կանես:

— Յերկուսս ել կսպանվենք՝ գաղտնիք չենք դուրս տա:

— Յերկուսս ել... սկսեց Ղոնդին:

Բայց հրամանատարը ընդհատեց նրանց.

— Դուք իրար հաջի խոսք մի տաք: Յերկուսս ել Հո իրար կպած չեք ծնվել: Հետո գարձավ Գլութին — Ա՛յ կոնկրետ, քեզ եմ հարցնում: Դու Ե՞նչ կանես:

— Մինք իրար կխիմնեք, ընկեր հրամանատար, — ասաց Գլութը:

Դավթյանը հապիվ նկատելի ժողովաց:

— Լավ, ինչպես յերեսում ե՛ մեկդ առանց մյուսի չեք պատկերացնում: Թող այդպես լինի:

— Մանկուց ընկերներ են, — ծիծաղեց մյուրենը քթի տակ:

Դավթյանը կանգնից.

— Շատ ուրախ կլինեմ ձեզ կենդանի տեսնել, կտրիմ տղերք եք, բայց կամուրջը պետք ե պայթեցվի և նամակը տեղ հասցվի: Սա յէ ամենադիմավորը:

Գլութը հուզվեց.

— Յեթե այդպես ե՝ խմացած յեղեք, ընկեր հրամանատար վոր տասը կրակ ու ջուր կանցնենք և գործը մաքուր կկատարենք:

— Յեթե գործը փչացնեք, ամբողջ դրույթը փչացած կլինի: Խմացած յեղեք, վոր հազարավոր կյանքեր ձեզ կսպասեն, — ասաց Դավթյանը:

Հետո մոտենալով Գլութին՝ ձեռքը դրեց նրա ուսին: — Յեւ մեծ հույս ունեմ... դու կառաջնորդես:

Ապա գարձավ Ղոնդուն.

— Նրան մի բան յեղավ դու կանես... հասկանո՞ւմ եք: Դուք յերկուսդ ել ժողովրդի զավակներ եք: Վերջապես դուք կոմյերի-տականներ եք:

Գլութը աչքերը կախեց և ամաչելով սրաց:

— Ընկեր հրամանատար, այս գլուխից լ՞ոչ խոսենք: Այ, յերբ դործը գլուխ կրերենք՝ հետո հեշտ ե...

— Ապրե՛ս, բրախո՛, — ուրախացավ հրամանատարը, — իսկական տղամարդու խոսք: Դե հիմա գնացեք, բարի ճանապա՛րհ:

Ասաց ու տվեց նամակը: Գլութը վերցրեց այն ու Ղոնդուն դրգեց, վոր դուրս գա:

Նրանք հեռացան:

— Սակրավոր Լեվոնի մոտ — ասաց Դավթյանը Ռուբենին:

— Լսում եմ, Ընկեր հրամանատար:

— Կարծես պիտի կարողանան... խոսեց Դավթյանը մտած-մունքի մեջ ընկնելով:

— Շատ կտրիմ աղերք են, — ասաց Ռուբենը — փորձված են Ընկերները ճանաչում են:

— Գետք ե ոխոկել, — ասաց Ավետը և ծխախոսը վառեց:

Դավթյանը մտահոգ և մոայլ կանգնեց սեղանի մոտ և խորա-սուզվեց մտքերի մեջ:

Թանձր խավարի մեջ յերկու ընկերները գուրս յեկան դորա-մասից և ճամբար ընկան գեպի թշնամու գերքերը: Քանի վոր հա-կառակորդները գեռ չեցին չոշափել իրար՝ անկարելի յեր գուշա-կել թե վորքան եր թշնամին հեռու կամ մոտ: Ղոնդին ու Գլութը գնում ելին ճամբից դուրս, բլուրների վրայով: Նրանք ընկղմել

Եյին այնպիսի մի խավարի մեջ, ուր անկարելի յեր դուշակել անգամ թե վորքան հեռու յե մինչև այն լեռ, վոր այդ խավարում սևազանզված ուռչում, բարձրանում եր, դեպի աստեղալույց յերկինք:

Նրանք հետզետե բարձրանում եյին մի դժվարանց լեռան լանջով: Նրանք աշխատում եյին ճամբան բարձր բռնել, վոր թշնամուն չհանդիպեն: Կամուրջը, վոր դնում եյին պայթեցնելու կապված եր մի շատ խոր ձորի գետի վրա և միացնում եր յերկու լեռները: Այդ լեռների անջրպետ միանդամայն անհնարին եր գարձնում հրետանի անցկացնել գեղի ուղմածակառ: Այնպես վոր՝ պայթեցնելով կամուրջը՝ թշնամու գլխավոր գերազանցությունը՝ հրետանին՝ զրկվում եր կովին մասնակցելուց:

Յերկար ժամանակ քարակուրտից քարակույտ, ժայռից ժայռ ժաղլցելուց հետո Գըդըլը բավական համարեց վերելքը: Նրա հաշվով այժմ իրենք հասել են այն կետին, վորտեղից անվտանգ կարելի իր իջնել գեղի կամուրջը: Դա Շուշանաձորի «ակունքներն» եյին, այսինքն ձորի սկիզբը, ուր նա լեռնային առվակի հետ միասին սկսվում է իրեն փոքրիկ ճիղքվածք, վորը ներքեանալով հետզետե խորանում եր և իր մեջ առնելով ուրիշ մանր ձորերի ջրերը՝ խորանում եր և լայնանում: Այստառախիտ լանջերը ներքեց սկին եյին տալիս: Այստեղից գեղի վեր բարձրանում եյին հաղիվ նշմարելի արահետները, վոր բարձրանալով լեռների բարձր լանջերն ու կատարները՝ կորչում եյին ձյուների մեջ: Դա սարլորների արահետներն եյին: Զգուշության համար նրանք դուրս յեկան այդ արահետներից և սկսեցին խարխափելով իջնել սարալանջից: Իջան մտան անտառը և այնտեղ մի փոքր հանդատացան:

Նրանք ամբողջ յերեկոն ու գիշերի մեծ մասը քայլել եյին. ավելի շուտ մաղլցել: Շատ հոգնած եյին: Բայց գիշերն անցնում եր: Յեթե այդ դիշեր կամուրջը չպայթեցնեյին՝ լուսանալիս այլևս անհնարին եր, պետք ե այն ժամանակ ցերեկը թագնվեյին անտառում և սպասեյին մթնելուն:

Գըդըլը բարկացած եր Ղոնդու և իր վրա: Ղոնդու առաջարկած ճամբան անվտանգ եր, բայց հեռու յեր, խլեց գիշերվա ամրող կեսը, մինչ Գըդըլի առաջարկած ճամբան կտրուկ եր, թե

ավելի վտանգավոր: Իսկ հիմա ել Ղոնդին ընկել եր մեջքի վրա և խոմվացնում եր:

— Այ չո՛ո քեզ, մոմուաց Գըդըլը և անհանգիստ նայեց աստվածը: «Շամփուր կշեռքը» թեքվել եր բավականին: Իր հաշվով դեռ մի ժամ ճամբան ունեցին: Պետք եր չտապել: Շտապել պետք եր առավելապես նրա համար, վոր թշնամու հրետանին կարող եղ ամեն րոպե անցնել կամուրջը: Յեվ ի՞նչ ոգուտ պայթեցնելուց...

— Այ տղա, վե՛ր, — ձայն տվեց Գըդըլը Ղոնդուն, վորը անուշ քնի մեջ կաղղուրում եր իր քրտնամխած, ջարդված մորմինը:

Ղոնդին չլսեց:

Գըդըլը ցնցեց նրան.

— Վեր ե, ի՞նչ մեռար ելի:

— Հը՛, — դժողովնեց Ղոնդին կես արթուն վիճակում:

— Վե՛ր կաց, ուշանում ենք:

Գըդըլը ծծում եր անտառի խոնալ ողը: Թիերի սառը տերեվները համբուրում եյին նրա այտը, իսկ հոտալետ խոտը քնով լիքը՝ դեղի իրեն եր քաշում նրա ճանրացած գլուխը: «Զգույշ»—մտածեց նա: Բավական ե գլուխը գետին դնելը—իսկույն կսահեր քնի աշխարհը և ամեն ինչ կորած եր: Գըդըլը վեր կացավ և մոտենալով Ղոնդուն՝ վոտքով բացի տվեց:

— Շա՞տ ես սատկելու: Վեր կաց...

Ղոնդին թարժագ յեղած վեր թուավ և ձեռքը տարավ գեղի ատրճանակը: Նա մի վայրկյանում արթուն եր և զգաստ: Խսկույն հասկացավ, վոր վտանգ չկար, այլ Գըդըլն եր արթնացնողը—միամտեց և վերցրեց բեռը: Ու առաջ ընկան: Գըդըլը հետևեց նրան: Խոտալետ արահետը ծծում եր նրանց վոտնաձայնը: Հազիվ փսփսում եյին թափված տերեները, դիպչելով նրանց վոտներին: Անտառը քնած եր հեքյաթային քնով: Այնախի մի խաղաղություն եր բնության մեջ, վոր անհամկանակ յեր գառնում կոխվը, արյունը, աղմուկը: Այդ անդորրը կարող եր ցնցվել մի փոքե դարձնածուաւ հրացանի պայթյունով և ամեն րոպե: Բայց պարմանակ յեր—չեր կարելի հավատալ նաև դրան:

Յերբեմն Ղոնդին կանգ եր առնում և ականջ դնում: Զորը վոր հետզետե լայնորեն եր հորանջում և բաց յերախը լցնում գիշերային խավարով, սկսեց փսփսալ ինչ-վոր անհամկանակ և դավադիր մի շրջունով:

— Ա'յ տղա, վո՞րտեղ ենք:
 — Կամուրջի քերծի գլխին, — Հաստատ ձույնով պատասխանեց
 Ղոնդին:
 Գըդըլը գլուխը շարժեց.
 — Ես ի՞նչ խշչոց ե:
 — Զրաղացի ձայնն ե:
 — Սիրադ բաղարջ ե ուզում, ջրաղացի ձայն ես լսում, —
 Հեգնեց Գըդըլը:
 — Բա ի՞նչ ձայն ե:
 — Գետն ե:
 Անտափից դուրս յեկան և մտան մի բայտա: Վորքան յեղավ
 նրանց զարմանքը՝ ավելի շատ զոնդունը, յերբ իրենց առջև մի
 կրակ ծկլտաց: Ուրեմն յեթե մի փոքր ձախ բոնեյին՝ պիտի ընկ-
 նեյին այդ կրակ վառողների ճանկը: Յել ովքեր են նրանք:
 — Ղոնդի:
 — Հը:
 — Զահը ու զիսրթի՛: Ո՞ւր բերիր մեզ:
 — Ի՞նչ ե, ե՛:
 — Չոռը պինչդ ե: Քեզ չեյի ասում ձորից գնանք: Տեսար ուր
 ընկանք: Թշնամու բերանը:
 — Վոչ մի թշնամի չկա: Մեր սարեցիների հոտաղներն են:
 — Հա, ախորժակ պահէ՛ քեզ խորոված են տալու: Ու հան-
 դիմանորեն նայեց Ղոնդուն:
 — Գիտե՞ս վորտեղ ենք:
 — Վո՞րտեղ:
 — Սաքանենց արտի գլխին:
 — Ջրաղացի մոտ ենք:
 Գըդըլը զայրացավ Ղոնդուն համառության վրա: Յեվ իսկույն
 ձեռներեցությունը վերցրեց:
 — Դե հիմա սրանից հետո յես գիտեմ ճանապարհը: Յե՛կ:
 Ու շուռ տվից գեպի աջ՝ ձորափի ուղղությամբ:
 Ղոնդին հետևեց նրան՝ ինքն զգալով, վոր իր ձեռներեցու-
 թյունը վիժեց:
 Նրանք դանդաղ ու խարխափելով սկսեցին քայլել ձորափով.
 Գըդըլը արահետ եր վորոնում իջնելու ձորը: Դրությունը շատ
 բարդ եր: Պետք եր իջնել ձորը կամուրջը գտնելու, միաժամանակ

անազմուկ շարժվել, քար չդլորել, չնկատվել: Ո՞վ ե իմանում
 թե ի՞նչ մարդիկ կարող եյին հանդիպել: Ամենից հավանականը
 խմբերն եյին, վորոնք վիտում եյին այս լեռներում և ձորերում:
 Խոկ յեթե գյուղացիները լինեյին, նրանք ևս անվտանգ չեյին:
 Նայած թե ի՞նչ գյուղացի յե...
 Կրակը վոր պլալացել եր մի քիչ առաջ՝ հանդավ: Այնուղից
 ձայն չեր լվում: Կարծես ովքեր վոր եյին՝ վերջացրին իրենց
 գործը և հեռացան:
 Գըդըլը ու Ղոնդին կանգ առան մի մուտի գլխին: Մուտը
 բանուկ շավիղի զլիսին եր: Ուրեմն կարելի յեր իջնել ձորը, կա-
 մուրջը գորնել: Բայց նաև կարելի յեր հանդիպել մարդկանց: Ըն-
 կերներն ավելի լարվեցին:
 Իսկ գիշերն անցնում եր:
 Հանկարծ Գըդըլը կանգ առավ: Նայեց շուրջը և մթան մեջ
 նկատեց իրեն ծանօթ քարեր և հասկացավ իրենց ուր լինելը:
 — Տեսա՞ր...
 — Ի՞նչ ե...
 — Բեր գինամիտը ինձ մոտ:
 — Ի՞նչ կա:
 — Բեր թաղենք:
 — Ինչո՞ւ թաղենք... թաղելու համար բերի՞նք:
 — Գլուխուդ մեռնի, համ մենք բռնվենք, համ ել գինամի՞տը:
 — Տես ուր ենք: Սա Սաքանենց արտը: Կամուրջը այն կողմը
 մնաց: Այսպես յեթե ուղիղ գնանք՝ կընկնենք այն կրակ անողների
 ճանկը: Պիտի հետ զառնանք, ձորի մյուս ափից մոտենանք: Դե
 մինչեւ գնանք կլուսանա:
 Ղոնդին զարմացած նայեց Գըդըլին.
 — Ուրեմն կամուրջը մնա՞ց...
 — Կամուրջը կարող ե մնալ կամ չմնալ: Այ այսպես կանենք:
 Այսպես թաղելով քիչ-քիչ առաջ կդնանք: Յեթե չպատահեցին՝
 կփորձենք պայթեցնելը, յեթե վոչ գինամիտը աղատենք: Մենք՝
 չհանդամը:
 — Ե, լավ, գինամի՞տ չկա, այ մեռած:
 — Գլուխու չի՞ մտնում, վոր յեթե գինամիտը բռնվի՛ կիմա-
 նան վոր կամուրջի համար ենք յեկել:
 — Խելոք բան ես ասում: Դե, ապա՞:



— Թո՛ղ, գլո՛ւխդ կջարդեմ, — հետ մղեց Գըդըլը: Ղոնդին
ծիծաղեց ու սկսեց ողնել Գըդըլին.

— Շուն ես կարել այս գիշեր:

Գըդըլը փնչաց, հավաքեց գործիքներն ու վեր կացավ: Կրկին
վայր դրեց:

— Կա՛ց, մի գնամ ելի աչք ածեմ: Թե մարդ չկա ու անի-
ծածները հեռացան՝ գուցե ճղենք անցնենք այն կողմը: Շրջա-
պատված ենք, անիծածը:

— Չուշանաս:

— Վոր վրա հասնեն՝ հեռացիր թաղած տեղից՝ հետքեր
չկտնեն:

Գըդըլը դարձյալ դնաց ձորի կողմը: Նա շարժվում եր
անվճռական ու իսկույն ել հետ դարձամ:

— Բեր դինամիտը:

— Ախր ասում եմ:

— Շատ մի՛ խոսի.

Նրանք քայլեցին դեպի ձորը:

Սակայն հազիվ եյին հասել ձորի սպունդին, վոր հետ ընկր-
կեցին: Այնտեղից մարդիկ եյին բարձրանում: Հետ վազեցին:
Բայց այս անգամ ել ձորափից ինչվոր ստվերներ շարժվեցին
նրանց վրա: Նրանք նկատել եյին սրանց այն ժամանակ, յերբ
սրանք շարժվում եյին դեպի ձորը:

Գըդըլը դիպավ Ղոնդուն և միայն այսքանը ասաց:

— Իմ հետեկից:

Ենվ փախավ ձորից դեպի մոտակա բլուրը, մոտադրվելով
ընկնել անտառը, այնտեղից ել լեռան լանջը: Ղոնդին մեքենա-
բար հետեւց նրան: Ստվերներն աղաղակեցին.

— Բոնեցե՞ք:

Ու կրակեցին:

Սնտառը մոտ եր: Ղոնդին կանգ առավ հանկարծ և կրակեց
ատրճանակը: Սա կարծես թե կասեցրեց հետապնդողներին: Բայց
դա մի վայրկյան եր: Ստվերները նորից վազեցին և հասան
նրանց:

— Զսպանե՞ք. — Հրամայեց մեկը բամբ ձայնով:

Հետապնդողները պինդ բռնեցին փախչողներին ու կանգ ա-
ռան: Մթան մեջ լավ չեր վորոշվում նրանց դեմքերը, բայց վո-
րոշ լավում եր նրանց չնչասպառ հելոցը, վորը խառնվեց փախ-
չողների հելոցին:

Գըդըլին ու Ղոնդուն քաշ տվին դեպի ձորափ: Յերկ-յերկու
հոգի այնպես պինդ եյին սեղմում բռնվածներին, կարծես գա-
ղանեներ եյին վրասացել և վախենում եյին նրանց կծելուց:

Նրանց տարան մի մեծ քարի մոտ, վորի վրա նստած եյին
յերկու հոգի: Դրանք փափախավոր, փամփշտակաները խաչաձև
կըծքներին կապած հաղթանդամ տղամարդիկ եյին:

Մոտ տասնեհինդ հոգի նույնպես զինված տղամարդիկ եյին
մյուռաները, վոր խիս ողակով սեղմել եյին բռնվածներին: Մեկը
միայն ճիկ եր անում ճեղքել շղթան և ճեռքով մի կողմ եր ուզում
քշել նրանց.

— Վո՞րդ եյիք կրակողը, — գոռաց նա:

— Թող, մեծաեղ բերեք դրանց, — սաստեց քարի վրա նստած-
ներից մեկը:

Հարձակվողը զսպվեց ու մոմուալով հրացանը ցած դրեց կոթի
մըրա:

Քարի վրա նստածներից մեկը, վորի ձայնից յերեսում եր,
վոր նրանցից հասակավոր և գլխավորը՝ չոր հաղաց:

— Յերկուքդ եյիք թե՝ ել կայիք:

— Յերկուսս եյինք, — պատասխանեց Գըդըլը գործնական
ձայնով, կարծես դատական քննության առջև եր:

— Լա՛վ տղաք կերեվիք, — սկսեց կեղծալոր ձայնով քարի
վրա նստածը, վորը արդեն պարզ եր, վոր խմբապետ եր, — գե-
հիմա յեթե ըսեհք՝ մնացածները ո՞ւր փախան և քանի հոգի եյին՝
իսուաք կուտամ, վոր ձեղի վնաս չի դար:

— Ինչո՞ւ կրակեցիք, — նորից հարձակմեց հետեւ կանգնած-
ների մեջ այն հետապնդողը, վորն ինչպես յերեսում և վտանգվել
էր գնդակից:

— Սերո՞ր, հետ քաշվի, — հրամայեց խմբապետը, — կովի
մեջ կրակեն, կարգն այդ ե: Մինակ թե, ինձի ըսեն թե քանի
հոգի եյին և ինչ տեղեն հայտնվեցան հոս:

Լուսթյուն:

— Զե՞ք ըսեր, — հարցրեց խմբապետը:

Գըդըլն ու Ղոնդին սպասում եյին կրակոցի կամ ծեծի:

Բայց խմբապետն անսպասելի կերպով զիջեց կարծես:

— Լավ չեք ըներ:

Ու գարձավ զինվորներից մի քանիսին:

— Տարեք գնդապետին: Գեռ'րդ, — դիմեց նրանցից մեկին, —

գեղի կհանձնեմ՝ նրանց վողջ հասցնես գնդապետին։ Իմացա՞ր։ Գլխովդ պատասխանատու յես։ Իսկ զուք, կտրիճ յերիտասարդ։ Ներ, կմեղքնամ ձեղի և խորհուրդ կուտամ ճշմարտություններ ըսել գնդապետին։ Տարեք։

Զինվորները կապեցին Գլուրլին ու Ղոնդուն և կողմատ հրեցին գեղի բլուրը։

Գլուրլը հասկացավ, վոր իրանց հետ են տանում դեպի վրում, ուր պիտի լիներ խմբակետի ասած գնդապետը։ Ճանապարհին նա մտածում եր խմբակետի տարորինակ վերաբերմունքի մասին։ Նա նրանց անվանեց «կարիճ» յերիտառարդներ, ասաց, վոր խղճում է նրանց, և վերջապես խոտիվ պատիիրեց, վոր նրանց ձեռ չտան… ի՞նչ եր նշանակում այս։ Գթասրտություններ կեղծավորություն։ Իսկ գնդապետի մոտ ուղարկելը…

Զե, լավ բան չեր կարելի սպասել։ Բնդհակառակը՝ դա չարգուշակ մի բան եր։

— Շա՞տ պիտի գնանք, — հարցրեց Գլուրլը զինվորներին։

— Գնա՛, — յեղավ պատասխանը և հրացանի կոթը հարդածեց նրա թիկոնքը։

Ղոնդին շարժում արեց թոկի միջից ազատելու ձեռքերը։ Նուզում եր հարվածել խփողին։ Աս հասկացավ և հրացանը բարձրացրեց։

— Ի՞նչ ես վոլորվում, սատկա՛ծ։

— Ինչո՞ւ յես խփում։

— Հա՛… դու մնացիր պակա՞ս, ահա մինն ել քեզ, — ասաց չարախնդորեն զինվորը և մի հարված ել հասցրեց Ղոնդուն։

Գլուրլը կանգ առավ։

— Շա՞տ պետք ե լրբություն անեք։

Զինվորները հրացանները ուղղեցին գեղի նրան, և նրանցից մեկը հրացանի փողը մոտեցրեց Գլուրլի քթին։

— Հը, ուզում ես, վոր սատկեցնե՞նք։

— Զեզ ասում եմ լրբությունը թողե՛ք, — ասումները կրծաւեցնելով ասաց Գլուրլը։

— Ի՞նչ կանես, — հեղնեց զինվորը։

— Յես գիտեմ ինչ կանեմ, — պատասխանեց Գլուրլը, բայց զինվորներից մեկը, Գեվորդը, վորին խմբակետն հանձնել եր ըռնվածներին կենդանի հասցնել գնդապետի ձեռք՝ արքելեց։

զինվորներին խոսել ըռնվածների հետ և ըռնելով Գլուրլի ուսից կոպիտ բոթեց առաջ։

— Դե՛, շան լեզուդ քե՛զ պահի, գնա՛։

Բարձր բլրից ներքն, զովտի մեջ, խավարի ծոցում ընկղմած դյուզը նուան եր մոայլ քարակույտի։ Մի ճրագ, փոքրիկ լուսամուտի պես, ծանր սողաց մթան մեջ ու անհետացավ։ Յերկար ժամանակ որորվում եր դյուզի անորոշ կերպարանքը և հետզետե մոտենում։ Մի պտույտ ևս և ահա չները հաջեցին։ Մոայլ սովորներ շարժվեցին մի խրճիթի դռանը։ Բայց վոչ վոք առաջ շեկավ։ Գյուղի փողոցները մեռած եյին։ Վոչ մի շունչ։ Զինվորներն անցան գյուղի հրապարակը և մոտեցան մի մեծ խրճիթի, վոր պատշգամի պես մի բան ուներ դռան մոտ։ Կանգ առան հեռվում։

— Ո՞վ ե, — ձայն տվեց պահակը։

— Կալանավոր ենք բերել, կանչիր։

Պահակը մեղմ սուլեց։

Դուրս յեկավ մի սովեր, մոտեցավ։

— Պարուլը։

— «Այդի», — ասաց Գեվորգը։

Սավերն ավելի մոտ յեկավ։

— Ներսն ո՞վ կա, — հարցրեց նրանց գլխավորը, Գեվորգը։

— Քնած են, — յեղավ պատասխանը։

— Որանց ո՞ւր տանեմ։

— Գոմը։

Գլուրլին ու Ղոնդուն տարան խրճիթի հետեւ, ուր գոմն եր և բոթեցին ներս։

Յերկու ընկերները՝ կարծես յերազի մեջ՝ մտան զոմը։ Մտանջությունը, սաստիկ անհանգստությունը իրենց հանձնարարած գործի այսպիսի յելքից այնքան եր սուր, Հոգնությունը չեյին զգում։ Բարոյական տանջանքը ավելի ուժեղ եր։ Մինչև անգամ մոտալուտ մահը, վոր հաստատ կանդնած եր նրանց առջեվ՝ չեր զբաղեցնում նրանց։

— Խայտառակվեցինք, — ասաց Գլուրլը և գլխարկը գետին խփեց։

— Վե՛րը, — հաստատեց Ղոնդին։

— Հիմա ի՞նչ անենք, -- հարցը գուշը կը լըլը կոնդուն, — աճ-
բողջ գործը կը անդվիլի:

Կոնդին զարմացած նայեց Գըդըլի կողմը՝ թեև չեր տեսնում
նրա դեմքը:

— Այսինքն ի՞նչպես թե ինչ անենք, պետք ե հանդիսաւ մեռ-
նենք:

— Ապա գո՞րծը:

— Գործը վերջացա՛վ:

Աքաղաղները կանչում եյին: Այն ժամն եր, վոր ուրիշ ժա-
մանակ մի վորեւ սայլ սկսում եր ճռնչալ փողոցում, կամ ձիս-
վորի ձին դոփելով գետինը, անցնում եր ու զարթնեցնում աշ-
խատավոր շինականին: Վոչ, աշխատանք չկար, դյուղը մեռելա-
յին քնի մեջ եր: Գտնվելով քրոնտի մոտ՝ նա անձկությամբ
ւպասում եր զեղքերի վախճանին:

Գըդըլն սկսեց ականջ գնել, վոր իմանա թե դյուղում ի՞նչ ե
կատարվում, կամ չե՞ն գալիս արդյոք տանելու...

Խրճիթի սենյակներից մեկում նստած եր խմբապետը: Նա
հասակավոր եր: Յերբեմն յելումուտ եր անում մի այլ զինվո-
րական՝ չոր ու ցամաք և լուրջ մի սպա, վորը մկան նման աշ-
քերը դես ու դէն եր ման ածում և շարունակ ինչվոր բան եր
վորոնում:

Սեղանին դրված թույլ ճրագը հաղիվ եր լուսավորում սեն-
յակի ծխոտ սև պատերը: Իսկ միակ պատուհանի հետեւ թանձ-
րացած եր կեղադաս խավարը:

Խմբապետը դարձավ դեպի չորուցամաք զինվորականը.

— Պարոն կապիտան, ի՞նչ կըսե գնդապետը, պիտի հարձակ-
լի՞նք բոլեվիկներուն վրա:

Կապիտանը չեմոդանը խառնելով և ուշադրությունը դեպի
այն կողմը՝ հաղիվ քթի տակ, պատասխանեց.

— Ոժանդակ մասերի յենք սպասում:

— Մինչև ոժանդակ մասեր գան՝ թշնամին ու դավաճանները
մեղի կիսեղեն ճակատեն ու թիկունքեն:

— Ուրիշ կերպ չենք կարող: Հրետանին պետք ե հասնի:

Խմբապետը ծուխը բաց թողեց իր թավ բեխերի միջից
տխուր մտածելով ասաց.

— Դավաճաններ որ-որի կշատանան: Թշնամու կողմ անցնող-
ներ բազմաթիվ են:

— Դավաճաններ կան՝ բռնեցեք բերեք:

— Ահա այս յերկուքին բռնեցի. մեկ ուղեցա վերջացնել, մեկ
աւ ըստ ուղարկեմ շտարը, սխմենք բան իմանանք:

— Ո՞ւր են:

— Գոմում:

— Գնդապետը քնա՞ծ ե:

— Զե, նոր ընթրեց:

Կապիտանը, վոր մինչև այժմ մոայլ եր և խմբապետի հետ
խոսում եր անկամ ու թափիթիված չեշտով՝ հանկարծ ժպտաց և
աղաչական ձայնով դիմեց նրան՝ մոտենալով.

— Լսիր, Սեյրան, ինձ մի լավ ձի յե պետք: Գյուղացինե-
րից պոկիր:

Խմբապետը դրսովեց տեղում և լուրջ չեշտով.

— Շատ աղեկ, ձի մը զրկեմ քեզի:

Այդ միջոցին հարևան սենյակի դուռը դանդաղ բացվեց և
ներս մտավ գնդապետը: Նա քառասունից քիչ անց թիկնեղ և
խստադեմ տղամարդ եր: Քիչ խմած եր և հղիացած: Սակայն
ուրջ և խուղարկող աշքեր: Նա հայացքը պտտեցրեց ներկա յե-
զողների վրա և յեկավ նստեց սեղանի մոտ:

— Չո՞րտ վազմի, — մրմռաց նա, — գերմանական քրոնո-
գարձրին անիծածը: Խրամատային կոյի՞վ են ուզում վարել: Այս
պարտիզանական շարժումը սպանեց մեղ:

Հետո դարձավ խմբապետին.

— Նու, ի՞նչ նորություն:

— Պասալիքներ շատացել են, պարո՞ն գնդապետ:

Գնդապետը դեմքը ծանրացրեց դեպի սեղանը և զինովի լը-
քությամբ մոմուց:

— Դա տխուր բան ե, շատ տխուր բան ե:

— Յես կղարմանամ այս գյուղացիներուն վրա, — գանդատ-
վեց խմբապետը: Ասոնք հայրենիքի գաղափար չունի՞ն:

— Դա տխուր բան ե, շատ տխուր բան ե, — մռմռաց նույն
առնով գնդապետը և զինովի մոռացության մեջ ընկած սկսեց
անիմաստ նայել իր առջև դրված քարտեզին:

— Յերեկ եր, — շարունակեց խմբապետը, — հավաքեցի գյու-

զացիներուն խոսեցի, հրամայեցի, վոր կովեն, խոսք տոլին,
յերդում ըրին-բայց գյուղացի յեն խորսամանկի—իրենց բանը դե-
տեն և շեն կովում :

— Դա տխուր բան է, շատ տխուր, մեքենայաբար կրկնեց
գնդապետը:

Նրա գլուխը հաճելի գլխապառչոտի ժեղ եր:

Հանկարծ արթնացավ գինով վիճակից.

— Նու, ի՞նչ եք անում հիմտ: Հեռախոսադի՛շ կա՞:

— Լոել են ինչ վոր: Կասկածելի յե:

— Բոլենիկներն ել սպասում են ոժանդակ մտաերի.—խմբա-
պետը հաղաց և շարժվեց տեղում:

— Այն յերկուքին հարցուփորձ չե՞ք ըներ:

— Զգնդակահարեցի՞ք, — հարցրեց գնդապետը կապիտանին:

— Վոչ, — պատասխանեց նա, — սպասում ենք, վոր հար-
ցաքննենք:

Կապիտանը դուրս դնաց:

— Վո՞րտեղ բռնեցիք, — հարցրեց գնդապետը քնատ ձայնով:

— Կամուրջին վերև, ջրաղացին քով: Թե չհասնելի՝ պիտի
անցնեյին ճակատը՝ բուշելիկների կողմը:

Գնդապետը թեթև հեղնական նայեց խմբապետին.

— Ինչո՞ւ յեք յենթագրում, վոր այստեղից եյին գնում բու-
շելիկների կողմը: Գուցե հակառակն եր:

Ներս մտավ կապիտանը յերկու պահակով մեջներն արած
Դոնդուն և Գըդըլին: Նրանց թեերը կապած եյին:

Գնդապետը բերանը ծոեց.

— Ահա՛, պատվելինե՞րս, պատի՛վ ունեմ վողջունելու ...

Ու շրթունքները ծծելով սկսեց թուքը կուլ տալ:

Խմբապետը նայեց և ասաց.

— Ահա՛, տղա՛քս: Պարոն գնդապետին անկեղծ խոստովա-
նեցե՞ք ամեն բան: Յեթե ճշմարիտը խոսեք՝ յես կմիջնորդեմ
լոր կյանքներդ խնայե:

— Վո՞րտեղացի յեք, ո՞վքեր եք, — հարց տվեց գնդապետը:

Գըդըլըն ու Դոնդին չպատասխանեցին, այլ անորոշ նայեցին
գնդապետին:

Գնդապետը ճիկ արեց լրջանալու և կենարոնանալու և սկսեց
մեղադրականը.

— Զեղ բռնել են ջրաղացի վերև, մեր թիկունքում: Վո՞ր
կողմն եյիք գնում: Լսո՞ւմ եք...

Ուզում եր խիստ տոնով մի բան ասել, բայց բարվոք հա-
մարեց գեռ զապել:

— Բայց ա՛յ, յեթե խոսեք, մի բան պատմեք՝ կասեմ, վոր
կտրիմ տղերք եք:

Աւ հարրածի ժպիտով բերանը ծոեց:

— Պատմեցե՞ք, — կրկնեց խմբապետը:

— Իհարկե, կպատմեն: Նո՞ւ... աշխուժացալ գնդապետը, —
վո՞րտեղացի յեք:

Գըդըլը հազար և շատ սառը պատասխանեց.

— Ի՞նչ ոգուտ ունի ասելու, — մին չի՞...

Յեղ գառը ծպտաց:

— Ուզուտ ունի—կազմավեք, — ասաց գործնական յեղանա-
կով գնդապետը և գարձավ Գըդըլին.

— Դու վո՞րտեղացի յես:

— Ել բան չունենք ասելու, — պատասխանեց Գըդըլը նույն
յեղանակով:

Լսություն տիրեց: Այն լուսթյունը, վորին անմիջապես հե-
տեւում էն բավական դաժան բաներ: Կապիտանը, վոր չեմողա-
նը խառնելուց չեր գաղարում, թողեց գործը և հետաքրքրված
վեր նայեց: Խմբապետը ևս նայեց գնդապետին: Բայց սա ըստ
յերեւյթին դեռ չեր «վճռում»: Բնդհակառակը՝ ավելի մեղ-
մացրեց ձայնը.

— Վոչ: Այդպես չի կարելի պատասխանել: Ասացեք մանրա-
մասն, այ, վո՞ր գյուղացի յեք, վո՞ր կողմն եյիք գնում, ի՞նչ
կապ ունեք բուշելիկների հետ... մեկ-մեկ լավ կպատմեք, կա-
սեք, քանի հոգի եյիք: Մի՛ վախենաք, մենք նրանց բուլորին վերցնի իր
խումբը: դուք բոլորդ կկովեք մեր հայրենիքի թշնամիների դեմ:

— Խոսք կուտամ, վոր բոլորիդ կընդունեմ խմբիս մեջ, —
կցեց խմբապետը: Զեղի պես կտրիմ տղաքը ափսոս են, վոր
տուներնին մնան: Յես գիտեմ, ձեզի մոլորդը են, խարեր են,
թե խմբեր գյուղերում վնաս կուտան, գաղան են: Այ տեսեք,
ինչպես քաղցր կիսունք հետաներդ: Կուղեք՝ բաց կթողնենք, ուր
կամենաք կզնաք: Դե՛, տղաքս...

Լսությունը յեղավ պատասխանը:

Գնդապետը կրկին մեղմաձայն խոսեց.

— Յես հայ ազդէ կաղբային գինվոր եմ։ Յես շատ եմ կովել պերմանացիների, ավստրիացիների, թուրքերի դեմ, շատ բան եմ տեսել։ Թշնամին-ճիշտ ե, բարեկամ ե դառնում։ Մենք բարեկամ կդառնանք, դուք շատ լավ կծառայեք մեր բանակում։ Միայն մի ծածկեք, ամեն բան մանրամասն պատմեցեք։ Ի՞նչ ո-դուտ, վոր ձեզ սպանենք։ Գործը տանուլ եք տվել։ Յեվ այն ել կա, վոր վաղը մյուս որը ամբողջ Հայաստանը կմաքրենք բոլ-շեփիկներից։ Դա ամենագլխավորն ե։ Նո՛ւ, պատմեցե՛ք։

Գըդըլի և Ղոնդու լուռթյունը, վոր արհամարհանքի արդյունք եր՝ արդեն սկսում եր համբերությունից հանել գնդապետին։ Յեվ սա, վոր չնայած հարրած վիճակին՝ դեռ պահել եր իրեն հատուկ զգաստությունը՝ արդեն մի բոպե կատարյալ լուրջ յեղանակով դիմեց նրանց։

— Դուք, գիտե՞ք սուստ եշ մի՛ ձեվանաք։ Շատ լավ հասկանում եմ, վոր ամեն բան հասկանում եք։ Գիտեմ շատ բան ե, տեսել դյուզում, զորքի մեջ, շատ լուրեր եք հավաքել, վոր տանեք բոլշևիկներին։ Գուցե ձեզ համար լավ եր, վոր տեղ հասցնեսիք այդ լուրերը։ Բայց ի՞նչ արած, բախտներդ չքանեց, և լավն ել այդ եր։ Հիմա ողուտ չունի պահելը։ Հետո՝ չեմ կարծում թե մենակ ուղենաք։

— Այո, այո, յերիտասարդ եք և պետք եք ազգին, — կցեց խմբապետը։

Գնդապետը հազար և տեղում դրստվելով սպասեց։

— Լուսմ եմ։ Սկսեցե՛ք։

Կրկին լուռթյուն։

Գնդապետը վեր կացավ, գնաց մյուս սենյակը։ Կապիտանը չարախինդ աչքերով հետևեց նրան, մոայլ նայեց յերիտասարդ։ Ներին խմբապետը, և լուռթյան մեջ, վոր այլևս ծանր եր՝ սկսեցին ականջ դնել մյուս սենյակից լովող թույլ շրջուններին։ Գնդապետը բաժակը գիպցրեց գինու չշին։ Դա պարզ եր։ Ուրեմն նա այնտեղ խմեց։ Դա կապիտանի համար նշան եր, վոր «պատմությունը» չուտավ կլիքը անա։ Նա ժպտաց քթի տակ։ Գնդապետը ներս յեկավ մյուս սենյակից և բերանը թթվեցրած, դեմք։ ուռած, որորվելով կանգնեց դռան մոտ, հետո դանդաղ յեկալ նստեց սեղանի մոտ, վառեց մի պատիրոս։ Միեց։ Հետո խոժոռ բայց զուսպ նայեց կալանավորներին։

— Լեզուներդ պապանձլե՛լ ե։

Հետո հոգուաց։

Ու արհամարհանքով դարձավ կալանավորներին։

— Հո՛ւհ, վախկո՛ւ նապաստակներ։ Հանեց նազանը և դրեց սեղանի վրա։

Լուռթյունը, վոր մի անգամ կարկամեցրել եր ամեն ինչ՝ շաբանակեց։

— Զե՞ք խոսում . . . հասկանո՞ւմ եմ։ Շների պես վախեցած եք։

Հետո վեր կացավ, մոտեցավ Ղոնդուն և քիթը մոտեցնելով նրա գեմքին՝ բերանը ծամածուց։

— Ե՛յ . . . հիո՛ւհ . . . լեզուն հանիր, տեսնեմ։ Նույնը արեց նաև Գըդըլին։

— Հը, լեզուդ . . .

— Իշացել են, զարձավ խմբապետին և հոգուաց։ Նրան ձայնակցեց խմբապետը, վորին հետեւց և կապիտանը։ Նու, ձմարիման սասցեք. դուրս եյիք յեկել թալանի՞, թե՞ բոլշևիկների կողմն եյիք անցնում, — սուր նայեց նրանց դնդապետը։

Դուան հետևել ինչ-վոր խլրտաց։ Դուրսը ինչպես յերեսում եմ մարդիկ սպասում եյին հետաքրքիր տեսարանին։

— Արանք խուժաններ են, վո՞րտեղից հանեցիք, թե կովողներ են։ Խուժաններ են, դուրս են յեկել թալանի, գողության։

Այո, և յեթե ձմարիմը խոստովանին յե սիրենց կառնեմ խմբիս մեջ, սասց խմբապետը։

— Այդ կարելի յե, — հավանություն տվեց գնդապետը։

Բայց բոնվածները լուսմ եյին։

— Զե՞ք խոսում, — հանկարծ կատաղեց գնդապետը և բոտնց քը սեղանին խվեց, — յես ձեզ խոսել կտամ, շան լակոտներ։ Զեղպեսներին չե՛ մենակ, վոր խոսեցրել եմ։

Վերցրեց նազանը և դարձավ խմբապետին ու կապիտանին։

— Մի կո՞ղմ։

Նրանք քաշվեցին մի կողմ։ Գնդապետը նազանը բռնեց Գըդըլի ճակատին։

— Քո հերն եմ անծել . . . դե, վոր չես խոսում . . .

Կարծես պիտի կրակեր։ Բայց չկրակեց. այլ սկսեց ատրճա-

Նակը պտտեցնել մերթ Գլուխի, մերթ Ղոնդու ձակտոի վրա:

Հետո ցած բերեց ատրճանակը և գլուխն որսրեց.

— Դողա՞ց խարդախ հոգիներդ: Ծների պես վախեցած եք: Մի՛ վախենաք, — զոռաց նա հրամանի ձայնով, — կուիլ եք զուրս յեկել՝ շան վորդիք, կովեցեք, մեռեք, ինչպես վայել և զինվուրին:

Ապա, ի՞նչ, կարծում եք կատա՞կ բան և կոխվ դուրս գալը, վլա՞վ ե՞ւ ուտեք: Դե չո՛ւո, ասացեք թե ձեզանից վո՞րն ե զեկավարը: Թող մեկդ մյուսին մասնի: Մատնողին կազատեմ: Դարձյալ լուսմ ե՞ք: Իի՛, վախկո՞ւ չներ: Տեսնում եմ՝ ինչ եք դառել: Ու ատրճանակը ո՞ւղանին գրեց.

— Դե, վոր այդպես ե՞ւ չեմ խփում ձեզ: Ձեզ հիմա փակած էտամ դոմում, այս նաղանն ել կտամ ձեզ: Գնացեք ու վոր մեկդ վոր մյուսիդ խփեցիք սրանով՝ նրան կազատեմ: Պատվավոր զին վորականի խոսք: Կազատեմ, ուր կուզի թող գնա, շան տեղ ել չեմ դցի, ու այդպիսի վախկու շանից վնաս չկա: Իսկի ափսուել ե, վոր այստեղ մարդ ձեռը կեղտոտի ձեղնից մեկն ու մեկն սպանելով:

Հետո նստեց աթոռին.

— Իսկ յեթե իրար չեք խփի՝ քարափից լայր դցել կտամ ձեզ: Պատվավոր խոսք: Դե՛, մա՛րչ:

Յեկ կապիտանին, վոր կես շփոթված, կես ժամալով նայում եր իրան և հետո զվարճացավ այս տեսարանով, հանել եր ատրը ճանակը և պատրաստում եր տանել կալանավորներին գնդակահարելու՝ զնդապետը զապեց.

— Զահամարձակվել: Իրանք պիտի իրար խփեն: Ասացի, այդպես ել կլինի: Մի՛ փամփուշտ միայն դրեք, ավելի վոչ. Դե, հիմա տարեք:

Խմբապետը ծիծաղեց: Ծիծաղեց և կապիտանը, սրամի ոգոնելով գնդապետի «կատակը», մանավանդ վոր տեսնելով նրա գինովթյունը՝ նա կարծում եր, վոր միայն մինչև լույս կտեհ այս «կատակը»:

— Գնանք, — դաժան ժպտով դիմեց կալանավորներին և վերցրեց սեղանի վրայից նաղանը, վորի մեջ թողեց մի փամփուշտ միայն:

Կալանավորները դուրս դնացին. դռան մոտ նրանց ըլջառատեցին զինվորները և տարան:

Կնդապետը ծխամորձը լցրեց:

— Զուր ու չացրիք, պարոն գնդապետ, վերջացնելու եյիք:

— Հույս ունեք, թե իրար վրա կկրակե՞ն, — թերահամատ շեշտով հեղնեց խմբապետը:

Գնդապետը խեթ նայեց խմբապետին.

— Կկրակեն ու կզան կմատնեն ամենքին:

Մի վորը մտածեց և ասաց.

— Յեթե մեկն ու մեկը այդ քայլը ընե՝ կդաւնա մեր մարդը, հե՞: Կառնեմ խումբիս մեջ: Յեվ վեր կենալով տեղից դուրս գնաց:

Գնդապետը սեղանի տակից հանելով ողու շիշ դրեց բերանին, հետո դանությամբ թքեց:

— Թյու, սատանան տանի բոլորին ու:

Ներս մտավ կապիտանը՝ չարաճճի ժպիտը ոուր շըթունքներին: Գնդապետը նայեց նրան, և նկատեց նրա ձեռին նադանը:

— Ճարար փակեցի՞ր:

— Գնդակահարե՞մ, — հարցրեց իր հերթին կապիտանը:

— Վո՞չ, հարկավոր չե: խուժաններ են, Հասարակ թալանողներ:

— Լրտեսներ են:

— Թող իրար կոտորեն՝ հետո կերևա թե ինչ են:

— Զեռ քաշեցեք, ձերդ գերազանցություն, կարծում եք բան գուրս կշա դրանի՞ց— կմփե՞ն իրար:

— Դուրս կդա, — հարբած համառությամբ ոլնեց գնդապետը, — ձանաչում եմ այդ վախկուներին: Մեկը մյուսին կվերջացնի ու կդա դեռ մյուսներին ել կծախի:

Գնդապետը վեր կացավ, գնաց ներսի սենյակը և վերադարձավ մի մեծ շով ողի և յերկու դափաթ ձեռին, կանգնեց սեղանի մոտ, փորը ուղցրեց և կուրծքը դեմ անելով ողի մեջ՝ արտասանության պես զիմեց կապիտանին.

— Բարախանովիչ:

— Խո՛ւմ եմ, ձերդ զերազանցություն:

Գնդապետը նստեց, լցրեց դափաթները և կարգադրեց:

— Նստի՞ր: Վերցրո՞ւ:

Կապիտանը նստեց և վերցրեց դափաթը:

Գնդապետը մթնեց և դեմքը իրոնիկ ժպտով ծումուց:

— Да «Հայրենիք»... «Հայրենիք» ենք պաշտպանում...
То-то «Հայրենիք»: к чорту полетели оопасыларын իмәлбөркеси,
Դենիկին, единая, неделимая ялкын ենք այս քնծոռոտ Հայաստա-
նը և վախկոտ նապաստակների հետ կովում ենք վախկոտ նա-
պաստակների դեմ:

Խմեց: Նրան հետեւց և կապիտանը: Ողին սկսեց ազդել իր
հասուկ խաբուսիկ տրամաբանությամբ, վորին դիմում են հու-
սահատ մարդիկ:

Գնդապետը սուր նայեց կապիտանին:

— Ասում ես չե՞ն սպանի իրար: Կսանին: Ճանաչո՞ւմ ե՞մ
այդ ժողովրդին, և կրկին լցրեց ողին— Բարախա՛նովիչ:

Լսում եմ ձերդ գերազանցություն:

— Ասո՞ւմ ես չե՞ն սպանի իրար: Կսանին: Իրենց սեփա-
կան հորը, մորը, քրոջը, կծախեն, կսպանեն: Այուժաննե՞ր են,—
գնդապետը գոռում եր արդեն— խուժաններ են նրանք, մերոնք
բոլորը, չօր ՅՈՒՄ, բաց թող դրանց վաղը: Դաժանորեն ծի-
ծաղեց, հետո հանկարծ դառնությամբ՝ թող ամեն բան, բա-
րասա՛նովիչ— սկսեց սեղանին թակել— ձդե՞նք կոնստանտինո-
սով, լու մը ես: Կոնստանտինովովով: Առաջ Կարր, Տրապիզոն ու
ուղիղ Կոնստանտինովով, Գալիպոլի, և ճրեզօվամ. Գնա՛նք Յեփ-
րոպա, լու կեյություն անենք: Ու ձեռը կատաղի դարձեց սեղա-
նին: հչորտո՛ւ այս փոշոտ Հայաստանը: Վոչի՞չ չի գուրս գու-
այս կավարդակից:

— Այո՛,— հառաչեց կապիտանը հարբած լրջությամբ, խըմ-
բապե՛տ ենք դառել: Պետք է մի ավելի մաքուր գործ:

— Հակեյություն: Թքա՛ծ այս խուժանների վրա, Կչո՛րտու-
վելիս իիս, այս խմբապետներին: Բա՛ց թող այս խուժաններին,
թող գնան իրար կոտորեն ու թալանեն: Նրանց ել հերն անիծած:
մերոնց և, Անդիմ, Ամերիկա, Հայաստան, խալտո՛րա:

— Ճդե՞նք կոնստանտինովով, Բարախա՛նովիչ... վերցրո՛ւ...
Նորից լցրեց գավաթները:

Ու գառնությամբ խմեցին:

Խմբապետը կրկին ներս մտավ ու լուռ նստեց սեղանի մոտ:
Գնդապետը հրփացած ու չար նայեց նրան, հետո լցրեց գավա-
թը, քթով նշան արեց, վոր խմի: Խմբապետը վերցրեց գավա-
թը, ծանր տարավ շրթունքներին, խմեց ու քնատ աչքերը գլ-

ցեց գետին: Գնդապետը մըթմըթում եր հասուկենդ բարեր,
վորոնց իմաստը կապիտանն եր միայն հասկանում:

Գնդապետը նայեց կապիտանի աչքերին.

— Զհամարձակվես:

Կապիտանը հասկացավ, թե ինչի մասին եր խոսքը:

— Վոչ, վոչ, Գավրիլ Մայրսեյվիչ:

— Տես, հա, նրանք պետք ե իրար խփեն:

— Այո, այո, յես կհսկեմ անձամբ,— հանգստացրեց կապի-
տանը՝ քմծիծաղ նայելով ինքնասած գնդապետին, վորի որիգի-
նալ խաղը նա համարում եր նրա տրյուկներից մեկը, վորոնց
սա դիմում եր յերեմն հուսահատ մոմենտներին:

Կապիտանը գուրս գնաց: Նրան հատեց խմբապետը: Մի-
ջանցքում խմբապետը կանգնեցրեց կապիտանին:

— Ինձի նայե, պարոն կապիտան, Հշմարի՛տ պիտի աղա-
տեք զարկողին:

Կապիտանը սառը նայեց խմբապետին:

— Ո՞ւմ, կարմիր սատանայի՞ն: Իմ ձեռից վոր ճանձն ե
պրծել, վոր սրանք պլծնեն:

— Գիտե՞ս ինչու կըսեմ: Յես իմ խմբերուս մեջ այդ տե-
սակ տղաներն մեկ քանի հատ ունեցել եմ: Ատոնցմե մեկն ու
մեկը շատ պետք ե ինձի հետախուզության համար: Կուզեմ քո-
վըս տանեմ, համոզեմ:

— Ո՞ւմ համոզես—դաժանորեն ժպատց կապիտանը,— բոլ-
շևիկների՞ն: Բոլշևիկին չես համոզի: Դառն չարությամբ
նայեց խմբապետին: Յեվ զուր ես կարծում թե կիսին իրար:
Բոլշևիկը չի անի: Հետո շատ գործնական յեղանակով: Յու-
զի խփեն, կուզի վոչ: Յերկուսին ել գնդակահարելու յեմ:

— Վախեցած են, — ասաց նույնպես զործնական յեղանակով
խմբապետը—մեկն ու մեկը հոգին աղատելու համար կզարկե
մյուսին: Յեթե զարկեց՝ ալ թող, կտանեմ խումբս, կհամոզեմ:

Կապիտանը թույլ ժպատց:

— Կարող ես համոզել, բան-ման դուրս քաշել: Այ դա դուրծ
կլինի: Փորձիր, խոսեցրու: Հետո... կխփենք:

— Լավ: Փորձենք:

* * *
Գոմը բոլորովին խավար կլիներ՝ յեթե լրացած լուսնի
լույսը չուռավորեր նրա վորոշ մասը, մսուրները, հատակի
քարերը և սյունը: Սրա տակին մի քար կար, վորի վրա նստած
եյին կալանավորները:

Նրանք նախ ականջ եյին գնում դրսի ձայներին՝ հետեւու
համար, թե ինչ ե լինելու իրենց վերջը: Գնդտպետի տարսրի-
նակ վարժունքը զարմացրել եր նրանց, մանավանդ Ղոնդուն:

— Գի՞տ եր անիծածը, թե՞ փորձել եր ուզում, —խոսում եր
նա տարակուսած: Մենք իրար սպանո՞ղ ենք:

Գըդըլը լուրջ եր: Ղոնդին հետախույզ հայացքով քննում եր
նրա դիմագծերը:

— Կարծում ես լո՞ւրջ ասաց, —հարցրեց Ղոնդին:

Գըդըլը խոկույն չպատասխանեց:

Հետո Ղոնդին ինքն իրեն պատասխանեց.

— Հարբած եր, շուտով ուշքի կդա ու... «կտանեն»: Միւ-
նույն ե: Դռան հետեւ թեթե աղմուկ լսվեց: Նրանք վեր թռան:

— Զե կարծես... —մրմուաց Գըդըլը՝ շարունակելով ականջ
դնելը, —կտուրը բարձրացան: Զե՞ս տեսնում ճեղքը—պիտ հըս-
կեն:

Վերև նայեց, առաստաղին մի տեղ փոքրիկ անցք կար:

— Մի բան անենք, —ասաց Ղոնդին:

— Ի՞նչ:

— Ճղենք:

— Վո՞րտեղից:

— Վերևից:

— Զե՞ս տեսնում՝ կտրանը նստած են:

Ղոնդին նայեց կտրան ճեղքին, վորտեղից յերրեմն սովեր-
ներ եյին ընկնում լուսնի շողի վրա, վոր սէսեց նաև այն կող-
մեց ընկնել:

— Ճղելը այս ըոսկեյիս մտքիդդ հանի՛, —ասաց Գըդըլը:

— Լսիր, ինչո՞ւ յես հակառակում—պնդեց Ղոնդին, —դուռը
չե՞նք կարող կոտրել ու կրակելով ճղել:

— Կարող ե չհաջողվել:

— Ե, այսպես հաստատ կխմին: Միւնույն չե՞:

— Միւնույն չե, — լուրջ ու խորհրդավոր պատասխանեց
Գըդըլը, ոխսկ ե:

— Բիսկ՝ ոխսկ: Յեկ, նրանք դուռը բաց անելիս ճղենք:

Նագանը դու վերցչու, առաջ ընկի, յես հետեւիցդ կդամ:

— Յերկուսիս ել ձեռաց կպառկեցնեն: Կամուրջը կմնա:

Ղոնդին անհանդստացավ.

— Այն ե՛լ ես ասում, այն ե՛լ:

Գըդըլը նույն զուսպ յեղանակով ասաց.

— Շատ վատ բան յեղավ:

— Ե, ի՞նչ ես միտք անում: —Մեռնել՝ մեռնել: Մի որ յե-
ղել ենք, մի որ պիտի մեռնենք:

Գըդըլը ինչ վոր բան եր մտածում:

— Վոչ—ասաց նա չեշտված ձեռվ—մի ասի: Մահը ուրիշ
ե, մահը խոր բան ե: Յերբեմն մարդիկ խորն են ապրում, բայց
լինում ել ե, վոր խորն են մեռնում: Պետք ե յերկուսն ել իմա-
նալ:

— Դատարկ բան ե: Մահը մահ ե, —սրտնեղեց Ղոնդին,—
Հետո մտածմունքի մեջ ընկնելով սկսեց բարձր փիլիսոփայել—
Հա՛յ դիտի հա՛... ի՞նչ բան ե կյանքը: Մի՞տդ ե, վոր յերեխա
ժամանակներոյ յես ու դու գնացինք անտառ պանտա բերելու:

— Բ՛մմ... ցրված ձայն հանեց Գըդըլը:

— Զիկո՞ւմ, —աշխուժացավ Ղոնդին, —բան եմ պատմում,
լոի՞ր: Մի՞տդ ե, վոր մնացինք անձրեկ տակ, թրջեցինք: Հե-
տո յեկանք մի ծառի տակ, ուզում եյինք կրակ անել՝ լուցկի
չկար: Նստեցինք ու իրար պինդ գրկեցինք: Մի՞տդ ե, ասացինք,
վոր միասին ենք մեռնելու: Հը՞:

Գըդըլը ժպտաց.

— Հա... միտո ե...

Ու խորասուղից մտքերի մեջ: Մանկություն...

— Տեսա՞ր ինչպես ասածներոյ կատարվեց—ասաց Ղոնդին:

Գըդըլը լուց, ու հետո մեզմ ձայնով և յերազող աչքերը
գետին զցած մի տեսակ խորհրդածեց.

— Ե՛, տնաշե՞ն, միասին մեծացանք, միասին ապրեցինք,
միասին ընկանք կրակների մեջ ու հիմի ել պարզ ե... միասին
պիտի գլորվենք:

— Վախենո՞ւմ ես:

— Հա՛տ—կատակեց Գըդըլը:

— Թե վախենում ես՝ ծոցդ քա՞ր դիր: Մեռնելուց գենը ել
գյուղ չկա: Դենը դժոխքն ե ու դրախտը: Այ տղա, ղոկ-ղոկ

աեղեր չգցե՞ն մեզ: Մեկ թոկով կապվենք: Այ այստեղ մի իշխարան կա:

Վերցրեց մի թոկի կտոր, վոր աղբի մեջ և ընկած ու մոռացավ Գըդըլին.

— ԲԵՇՐ վիզդ կապեմ:

Գըդըլը փափախով խփեց նրա գեմֆեն—դնա:

— Գլուխող թաղեմ, Գըդըլ, ի՞նչ որի յես—ծիծաղեց Ղոնդին: Հետ լրջացավ:

— Լոիր, բան եմ պատմում:

— Թո՛ղ պատմություններդ: Արի լա՛վ մտածիր: Քեզ բա՛ն եմ ասում: Միենույն ե մենք այստեղից աղատվողը չենք: Յերկուս եւ շանսատակ կանեն:

— Զհանդա՛մը:

— Կամուրջը մնաց:

— Կամուրջը մտքիցը հանի՛ր:

— Կամուրջը ի՞նչպես մտքից հանեմ: Մեզ սպասո՞ւմ են...

— Դե մի՛ հանիր—ի՞նչպես ես պայթեցնում:

Գըդըլը լունեց Ղոնդու ուսը:

— Դինամիտի տեղը հո իմանում ես:

— Իմանում եմ:

— Այ կդնաս ու գործը կկատարես:

Ղոնդին զարմացած նայեց Գըդըլին.

— Խելքդ թոցրի՞ր: Յեկ աղոթեմ:

— Յես գրուստ եմ ասում: Կդնաս, գործը կկատարես: Դե վերցրու: Յեկ լսիր թե ինչպես պիտի անես:

Ու նագանը մեկնեց Ղոնդուն:

— Հա՛, ա՛յդ ես ասում: Բեր,—կատակեց Ղոնդին ու արագ վերցնելով ատրճանակը կատակով նշան բանեց Գըդըլի ճակատին:

— Տրա՛խկ: Դե՛, ընկի՛ր գերասանի պես:

Հետո ցած քերեց ատրճանակը:

— Ա՛յ տղա, եղ հարբած շանն ասենք՝ բաց թողնի մեզ, գընանք դերասանություն անենք: Հավա՛տա:

Գըդըլը տհաճ կերպով դեմքը կնձռոտեց.

— Հիմարությունները թո՛ղ: Բոնի՞:

Ղոնդին ծուռ նայեց և կես կատակ կես լուրջ հարցրեց.

— Հը հարբել ես վախից, թե՞ այն գնդապետից բան սովո-

րեցիր: Հետո՝ դու հավատո՞ւմ ես այդ հարբած գազանին:

— Նա կատավի-մկան խաղ և անում: Հածույք ե նրա համար տեսնելը թե ինչ կանենք: Հարբած հակահեղափոխականը կատակ արեց՝ դու ել հավատո՞ւմ ես:

Գըդըլն ինքն ել այլպիսի մտքեր ուներ, բայց նրան գայթակում եր այդ կատակը: Ո՞վ դիտե, դուցե այդ կատակից մի ուրիշ բան գուրս գա...

— Հակահեղափոխական ե նա և մեր թշնամին: Նա կարծում եր թե մենք շատ վախեցած ենք: Նա մեզ արհամարհում եր: Դե յա՛վ ե:

— Դատու՛րկ բան ե:

— Ամենավերջին հնարյն ել վոր մնա՝ կոմյերիտականը պետք ե գործադրի՝ պրոլետարական գաղափարի համար: Լոի՛ր, այդ հակահեղափոխականը միայն մի լավ բան ե անում—մեղ ժամանակ ե տալիս մի բան անելու: Նա հարբած ե, ինքնասաց մարդ, խաղ ե անում, զվարճանում: Նա մեր «խաղին» ե սպասում: Թե չե, նա մեզ շան ստակ կաներ խկույն: Վաղը կիսվեն մեզ: ՅԵԿ փորձենք:

— Ալսր ի՞նչ կարող ե լինել, վոր փորձենք, բավական ե, բարկացավ Ղոնդին:

— Զդիտեմ, մի բան պետք ե անենք,—գործը կմնա,—մի աղմուկ, շփոթ, կամ նա պիտի հիմարանա, մեկն ու մեկիս բաց թողնի, կամ չգիտեմ, մեկս ու մեկիս տանեն խոսեցնելու, ձգձրդի գործը, մի բան լինի մեկս փախչենք:

Մի պահ լրեց՝ լրաված.

— Խմբապետը թույլ կողմեր ունի, նա հուսով ե թե մեղ կը-ծոր, իրեն պետք կդանք, այդպես ել համոզում եր գնդապետին:

Դարձյալ լրեց.

— Վերջապես չգիտեմ, պետք ե զուրս պրծնենք, կամուրջը պետք ե պայթեցվի, հասկանո՞ւմ ես... ու ատամները կծեց կատաղի մոլուցքով:—Դե՛, սկսե՞նք: Գնդապետը սրան ե սպասում:

Ղոնդին գայրացավ.

— Սրա՞ն ե սպասում: Դե թող չսպասի: Ահա այս զահրումարը գրի լուսնի չողքում, թող վերեկց նայեն ու սպասեն հակահեղափոխականները թե հեղափոխականները իրար են սպանելու:

Յեկ ատրճանակը դրեց լուսնի շողքի ընկած տեղի վրա։
— Թող գան իրանք խիեն։ Այստեղ մարդասպան չկա։
— Բայց կամուրջը կմնա։
— Կամուրջը կմնա։
Գըդըլը զայրացավ։
— Վո՞չ, կամուրջը չպիտի՝ մնա։
— Հիմար-հիմար մի՛ դուրս առ։
— Յես հիմար դուրս չեմ տալիս։ Յես քեզ հաստատ բան
եմ ասում։ Կամուրջը պետք է պայթեցնենք։

Ղոնդին սուր նայեց Գըդըլին։

— Դու լո՞ւրջ ես ասում։

— Լո՞ւրջ։

— Զե՞ս ամաչում։

— Վո՞չ։

Ղոնդին իբրև կատակ եր ուզում ընդունել, բայց Գըդըլի թե
շարժումը և թե դեմքի խիստ արտահայտությունը նրան զծից
հանեց։ Նա սաստիկ կոտորվեց։ Գըդըլը, այն Գըդըլը, վորի
հետ նրանք միայն ու միայն կյանքն եյին ճանաչել ու զգացել,
այս անդամ մահվան կերպարանքով կանդնել իր դեմ մահ եր ա-
ռաջարկում։

Ի՞նչ պատահեց Գըդըլին… Փոխվե՞ց մի գիշերվա մեջ, թե
նրա հոգու միջից դուրս նայեց մի ուրիշ մարդ, ոտար, անընկե-
րասեր և դաժան մարդ։ Շատ անախորժ, սառը մի բան զգաց
Ղոնդին։ Այսքան տարվա մանկության ընկերը այդպես ուրիշ
մարդ լինե՞լ, և նա, Ղոնդին ճանաչել նրա՞ն… Յեկ Ղոնդին
ցանկացավ նրան ուշարեր վիճակի հասցնել։

— Տո, դու ասացիր ու յես ել վերցրի ատրճանակն ու քեզ
խիեցի ելլօ… և հուզված գլուխն որորեց— Հը՞մ… գլո՞ւխդ
մեռնի, տես թե ինչե՞ր են անցնում մտքով։

— Ի՞նչ կա վոր,— հասարակ յեղանակով ասաց Գըդըլը,—
միենույն չե՞ն, նրանք են խիելու։

— Նրանք ինչ վոր կուզեն թող անեն։ Նրանց արածը հաշիվ
չե։

Յեկ Ղոնդին սկսեց քթի տակ մի յերգ մրմուալ՝ վանելու հա-
մար անախորժ տպավորությունը։ Հետո հետզետե ձայնը բարձ-
րացրեց և վերջը բացականչեց։

— Ե՛յ, հակահեղափոխականնե՛ր, ձեր հե՛րն եմ անիծել։
Ու ծիծաղելով հանդիմանորեն դարձավ Գըդըլին։
— Տո՛, բու կարծում ես այս հնարքները քեզ կպրծացնե՞ն։
— Յես չգիտեմ, մի բան պետք է անեմ։
Ղոնդին շարժվեց տեղից։
— Ե, հիմա ի՞նչ ես ուզում… վոր մենք իրար խփե՞նք։
Յես քեզ խփողը չեմ։
— Ուրիշ ճար չկա։ Միենույն ե, մեզ սպանելու յեն։
— Յես քեզ խփողը չեմ։ Թող նրանք սպանեն։ Միասին կլի-
նենք։
— Զե՛, տեղ կա, պետք է ապրել, տեղ կա՝ պետք է մեռնել։
Մի՛ կարծիր թե ամեն ապրել ապրել ե։ Այնպես կապրես, վոր
մահի նման կլինի։ Քեզ բան եմ տառամ։ Յես կխփեմ ինձ։ Ասա,
վոր դու յես խփել։

— Դու վոր քեզ խփես, յես ել ինձ կխփեմ։ Դա մտքիցդ
հանի՛։ Յես ընկեր սպանող չեմ։ Գուցե դո՞ւ ես ուզում ինձ սպա-
նել։

— Վոչ… յես չեմ ուզում սպանել։ Վոչ ել ուզում եմ, վոր
դու սպանես ինձ։ Մենք ընկերներ ենք, ի՞նչպես կարող եր ուրիշ
ժամանակ այսպիսի միտք գալ ուղեղիս մեջ։ Միենույն ե ինձ հա-
մար, թե ով ում կսպանի և ո՛վ կսպանվի մեղանից։ Ինձ այստեղ
մտահոգում ե գործը։ Յես ամաչում եմ, արսափում եմ Հրամա-
նատարի առաջ, հետևանքների առաջ։ Յեթե վոչ, իմ կոմյերի-
տական խիզճը հանգիստ ե։

Լուրթյունը շարունակեց մի բովել նրա մտքերը։

— Լսի՛ր, բան եմ ասում։ կարող ենք մեկս ու մեկս կամուր-
ջին հասնել, նամակը տանել։ Բան եմ ասում։ Յեկ անասունի պես
չմեռնենք, յեկ մեռնենք պրոլետարական գործի համար։

Ղոնդին սկսում եր հետզետե հասկանալ, վոր Գըդըլը լուրջ
և առաջարկում։ Նա մտածեց այդպես կարելի յե անել, բայց, վոր
ինքը չի անի։

— Շատ լավ! ահա յես եմ ու քեզ խփեցի կամ դու ինձ
խփեցիր։ Յեթե կհաջողվի գործը, անպատճառ, հաստատ կհա-
ջողվի՝ յես համաձայն եմ։ Իսկ յեթե չհաջողվի՝ ի՞նչ խղճով
կապրես նրանից հետո։ Դու կանե՞ն։ Յես չեմ անի։

Գըդըլը թույացավ մի պահ։

Յեվ ատրճանակը դրեց լուսնի շողքի ընկած տեղի վրա :
— Թող գան իրանք խփեն : Այստեղ մարդասպան չկա :
— Բայց կամուրջը կմնա :
— Կամուրջը կմնա' :
Գըդըլը զայրացավ :
— Վո՞չ, կամուրջը չպիտի' մնա :
— Հիմար-հիմար մի' դուրս տա :
— Յես հիմար դուրս չեմ տալիս : Յես քեզ հաստատ բան
եմ ասում : Կամուրջը պետք ե պայթեցնենք :

Ղոնդին սուր նայեց Գըդըլին :
— Դու լո՞ւրջ ես ասում :
— Լո՞ւրջ :
— Ջե՞ս ամաչում :
— Վո՞չ :

Ղոնդին իրրե կատակ եր ուզում ընդունել, բայց Գըդըլի թե
շարժումը և թե գեմքի խիստ արտահայտությունը նրան գծից
հանեց : Նա սաստիկ կոտորվեց : Գըդըլը, այն Գըդըլը, վորի
հետ նրանք միայն ու միայն կյանքն եյին ճանաչել ու գլացել,
այս անզամ մահվան կերպարանքով կանդնել իր դեմ մահ եր ա-
ռաջարկում :

Ի՞նչ պատահեց Գըդըլին ... Փոխվե՞ց մի գիշերվա մեջ, թե՝
նրա հոգու միջից դուրս նայեց մի ուրիշ մարդ, ոտար, անընկե-
րասեր և գաժան մարդ : Շատ անախորժ, սառը մի բան զգաց
Ղոնդին : Այսքան տարվա մանկության ընկերը այդպես ուրիշ
մարդ լինի', և նա, Ղոնդին չճանաչեր նրա՞ն ... Յեվ Ղոնդին
ցանկացավ նրան ուշաբեր վիճակի հասցնել .

— Տո, գու ասացիր ու յես ել վերցրի ատրճանակն ու քեզ
խիեցի ելի՞ ... և հուզված գլուխն որորեց — Հըմ ... գլո՞ւխդ
մեռնի, տես թե ինչե՞ր են անցնում մտքով :

— Ի՞նչ կա վոր, — հասարակ յեղանակով ասաց Գըդըլը, —
մինույն չե՞ , նրանք են խիելու :

— Նրանք ինչ վոր կուզեն թող անեն : Նրանց արածը հաշիվ
չե :

Յեվ Ղոնդին սկսեց քթի տակ մի յերդ մրմուալ վանելու հա-
մար անախորժ տապավորությունը : Հետո հետզհետե ձայնը բարձ-
րացրեց և վերջը բացականչեց .

— Ե՛յ, հակահեղափոխականնե՛ր, ձեր հե՛րն եմ անիծել :
Աւ ծիծաղելով հանդիմանորեն դարձավ Գըդըլին .
— Տո՛, բու կարծում ես այս հնարքները քեզ կպրծացնե՞ն :
— Յես չգիտեմ, մի բան պետք ե անեմ :
Ղոնդին շարժվեց տեղից .
— Ե, հիմա ի՞նչ ես ուզում ... վոր մենք իրար խփե՞նք :
Յես քեզ խփողը չեմ :
— Ուրիշ ճար չկա : Մինույն ե, մեղ սպանելու յեն :
— Յես քեզ խփողը չեմ : Թող նրանք սպանեն : Միասին կլի-
նենք :

— Ջե՛, տեղ կա, պետք ե ապրել, տեղ կա՝ պետք ե մեռնել :
Մի՛ կարծիր թե ամեն ապրել ապրել ե : Այնպես կապրես, վոր
մահի նման կլինի : Քեզ բան եմ ասում : Յես կխփեմ ինձ : Ասա,
վոր գու յես խիել :

— Դու վոր քեզ խփես, յես ել ինձ կխփեմ : Դա մտքեցդ
հանի՛ : Յես ընկեր սպանող չեմ : Գուցե գո՞ւ ես ուզում ինձ սպա-
նել ...

— Վոչ ... յես չեմ ուզում սպանել : Վոչ ել ուզում եմ, վոր
գու սպանես ինձ : Մենք ընկերնել ենք, ի՞նչպես կարող եր ուրիշ
ժամանակ այսպիսի միտք գալ ուղեղիս մեջ : Մինույն ե ինձ հա-
մար, թե ով ում կսպանի և ո՛վ կսպանվի մեղանից : Ինձ այստեղ
մտահոգում ե գործը : Յես ամաչում եմ, սարսափում եմ հրամա-
նատարի առաջ, հետևանքների առաջ : Յեթե վոչ, իմ կոմյերի-
տական խիզը հանդիսաւ ե :

Լությունը շարունակեց մի բոպե նրա մտքերը :
— Լսի՛ր, բան եմ ասում : կարող ենք մեկս ու մեկս կամուր-
ջին հասնել, նամակը տանել : Բան եմ ասում : Յեկ անասունի պես
չմեռնենք, յեկ մեռնենք պրոլետարական գործի համար :

Ղոնդին սկսում եր հետզհետե հասկանալ, վոր Գըդըլը լուրջ
և առաջարկում : Նա մտածեց այդպես կարելի յե անել, բայց, վոր
ինքը չի անի :

— Շատ լավ, ահա յես եմ ու քեզ խիեցի : կամ դու ինձ
խիեցիր : Յեթե կհաջողվի գործը, անպատճառ, հաստատ կհա-
ջողվի՝ յես համաձայն եմ : Իսկ յեթե չհաջողվի՝ ի՞նչ խղճով
կապրես նրանից հետո : Դու կանե՞ս : Յես չեմ անի :

Գըդըլը թուլացավ մի պահ :

Յեկ ատրճանակը դրեց լուսնի շողքի ընկած տեղի վրա։
— Թող գան իրանք խփեն։ Այստեղ մարդասպան չկա։
— Բայց կամուրջը կմնա։
— Կամուրջը կմնա՛։
Գըդըլը զայրացավ։
— Վո՞չ, կամուրջը չպիտի՛ մնա։
— Հիմար-հիմար մի՛ դուրս տա։
— Յես հիմար դուրս չեմ տալիս։ Յես քեզ հաստատ բան
եմ ասում։ Կամուրջը պետք է պայմենենք։

Ղոնդին սուր նայեց Գըդըլին։

— Դու լո՞ւրջ ես ասում։

— Լո՞ւրջ։

— Զե՞ս ամաչում։

— Վո՞չ։

Ղոնդին իրրե կատակ եր ուզում ընդունել, բայց Գըդըլը թե
շարժումը և թե դեմքի խիստ արտահայտությունը նրան գծից
հանեց։ Նա սաստիկ կոտորվեց։ Գըդըլը, այն Գըդըլը, վորի
հետ նրանք միայն ու միայն կյանքն եյին ճանաչել ու զգացել,
այս անդամ մահվան կերպարանքով կանդնել իր գեմ մահ եր ա-
ռաջարկում։

Ի՞նչ պատահեց Գըդըլին… Փոխվե՞ց մի գիշերվա մեջ, թե
նրա հոգու միջից դուրս նայեց մի ուրիշ մարդ, ոտար, անընկե-
րասեր և զաժան մարդ։ Շատ անախորժ, սառը մի բան զգաց
Ղոնդին։ Այսքան տարվա մանկության ընկերը այդպես ուրիշ
մարդ լինի՛, և նա, Ղոնդին չճանաչեր նրան։ Յեվ Ղոնդին
ցանկացավ նրան ուշաբեր լիճակի հասցնել։

— Տո, գու ասացիր ու յես ել վերցրի ատրճանակն ու քեզ
խփեցի ելի՞… և հուզված գլուխն որորեց— չը՞մ… գլո՞ւխո՞
մեռնի, տես թե ինչե՞ր են անցնում մտքով։

— Ի՞նչ կա վոր, — հասարակ յեղանակով ասաց Գըդըլը, —
միւնույն չե՞ր, նրանք են խփելու։

— Նրանք ինչ վոր կուզեն թող անեն։ Նրանց արածը հաշիվ
չե։

Յեկ Ղոնդին սկսեց քթի տակ մի յերգ մրմռալ՝ վանելու հա-
մար անախորժ տպավորությունը։ Հետո հետզհետե ձայնը բարձ-
րացրեց և վերջը բացականչեց։

— Ե՛յ, հակահեղափոխականնե՛ր, ձեր հե՛րն եմ անիծել։
Աւ ծիծաղելով հանդիմանորեն դարձավ Գըդըլին։
— Տո՛, դու կարծում ես այս հնարքները քեզ կպրծացնե՞ն։
— Յես չգիտեմ, մի բան պետք է անեմ։
Ղոնդին շարժվեց տեղից։
— Ե, հիմա ի՞նչ ես ուզում… վոր մենք իրար խփե՞նք։
Յես քեզ խփողը չեմ։
— Ուրիշ ճար չկա։ Միւնույն ե, մեղ սպանելու յեն։
— Յես քեզ խփողը չեմ։ Թող նրանք սպանեն։ Միասին կլի-
նենք։
— Զե՛, տեղ կա, պետք է ավրել, տեղ կա՝ պետք է մեռնել։
Մի՛ կարծիք թե ամեն ապրել ապրել ե։ Այնպես կապրես, վոր
մահի նման կլինի։ Քեզ բան եմ ասում։ Յես կխփեմ ինձ։ Ասա,
վոր դու յես խփել։

— Դու վոր քեզ խփես, յես ել ինձ կխփեմ։ Դա մտքիցդ
չանի՛։ Յես ընկեր սպանող չեմ։ Գուցե դո՞ւ ես ուզում ինձ սպա-
նել…

— Վոչ… յես չեմ ուզում սպանել։ Վոչ ել ուզում եմ, վոր
գու սպանես ինձ։ Մենք ընկերներ ենք, ի՞նչպես կարող եր ուրիշ
ժամանակ այսպիսի միտք գալ ուղեղիս մեջ։ Միւնույն ե ինձ հա-
մար, թե ով ում կսպանի և ո՛վ կսպանվի մեղանից։ Ինձ այսեղ
ժամահոգում ե գործը։ Յես ամաչում եմ, սարսափում եմ Հրամա-
նատարի առաջ, հետևենքների առաջ։ Յեթե վոչ, իմ կոմյերի-
ասկան խփեցը հանդիս է։

Լուսթյունը շարունակեց մի բավե նրա մտքերը։

— Լսի՛ր, բան եմ ասում. կարող ենք մեկս ու մեկս կամուր-
ջին հասնել, նամակը տանել։ Բան եմ ասում։ Յեկ անասունի պես
չմեռնենք, յեկ մեռնենք պրոլետարական գործի համար։

Ղոնդին սկսում եր հետզհետե հասկանալ, վոր Գըդըլը լուրջ
և սուածարկում։ Նա մտածեց այդպես կարելի յե անել, բայց, վոր
ինքը չի անի։

— Շատ լավ. ահա յես եմ ու քեզ խփեցի կամ դու ինձ
խփեցիր։ Յեթե կհաջողվի գործը, անպատճառ, հաստատ կհա-
ջողվի՝ յես համաձայն եմ։ Իսկ յեթե չհաջողվի՝ ի՞նչ խղճով
կապրես նրանից հետո։ Դու կանե՞ս։ Յես չեմ անի։

Գըդըլը թուլացավ մի ողահ։

— Յեթե չաջողվի՞... Այս, յեթե չաջողվի՝ սարսափելի բան կլինի...— ասաց նա և ընկալ մտատանջության մեջ. բայց հետո թափահարեց իրեն.— ուրեմն այսպես պիտի մեռնե՞նք: Սատկած չների պես տանեն գցեն աղբանո՞ցը: Այն հարբած չունը մեզ ծաղրի՞, արհամարհի՞...

Նա սկսեց անցուդարձ անել գոմում: Լուսնի շողը գոմի հառակի վրա մթնեց: Վերևից նայում էին: Այնտեղից քրքիջի ձայն եր գալիս:

Հանկարծ Գըդըլը հարձակվեց Ղոնդու վրա և բռնելով նրա ուսուը պինդ ցնցեց ցալեցնելու չափ.

— Դու խելք չունես, դու չես մտածում: Դու շան պես պիտի ստուկես անողուտ:

Ու մի հարված հասցրեց նրան:

Ղոնդին, վորի նյարդերը ծայր աստիճանի թուլացել ելին՝ ցացակումեց.

— Ի՞նչ ես ուզում ինձանից, անխի՛ղճ, ինչո՞ւ յես խիսում ինձ, թո՛ղ հանգիստ մեռնեմ:

Գըդըլը կանդ առավի: Ծանր եր նրա համար իր վարժունքը: Նա իր մտքերի և վճռի տաքության մեջ չկարողանալով սկզբում անդրադառնալ իր գործողություններին՝ Ղոնդու ներվային թռւլության մեջ ասած խոսքերից սթափվեց: Ղոնդին խիստ հանդիմանորեն նայեց նրա աչքերին և ասաց.

— Ուզո՞ւմ ես, սպանի՛ր ինձ: Յեթե միտք այդ ե՝ գո՛ւ խիսի ինձ, յես քեզ չեմ խիսի: Վերջին գիշերն ե, ընկերություն չես անում, կուլում ես հետո... յես մեռնելուց չեմ վախենում... բայց քո արածն արած չե...

Գըդըլը հենվեց մսուրին և սաստիկ մտատանջված նայեց Ղոնդուն: Ուրեմն ի՞նչ... Ղոնդին ի՞նչպես ե հասկանում իր միտքը: Գուցե նա յենթադրում է մի ստոր բան, թե Գըդըլը ուզում է գուցե իր գլուխն ազատել: Շատ դառնացակ ե կարծես ինքն իրան դիմելով՝ ասաց.

— Եհ, այսակող հա՛րց ե թե ո՞վ ե ում խիսում: Խփելը մի տեսակ չե: Հետո մոտեցավ Ղոնդուն, փաթթվեց և առաջին անդամ իրենց յերիտասարդական կյանքում՝ համբուրեց նրան և չույց գլուխը.

— Ղոնդի՛ ջան, լա՛վ, թո՛ղ:— Ախր լսի՛ր, սիրելիս, փահ-

լնվանության տեղ չե: յերկրում արյուն ե կաթում: Դործի համար ենք յեկել վոչ թե քաջություն ցույց տալու: Ախր մտածիր, սա ում գործն ե, ինչի՞ յենք յեկել: Սա աշխատավոր ժողովրդի գործն ե, վոչ թե իմ ու քո, վոր գանք մահվան հետ գժություններ անենք: Դժվարը գործն ե, այսոեղ գիտություն, խելք ե պետք, զիմացկունություն: Քաջությունն ի՞նչ:

— Լավ չե՞ր Փրոնտում ընկնել յինք, — մոմոաց Ղոնդին:

Գըդըլը զսպեց իրան և հանդիսաւ, քաղցր տոնով ասաց.

— Վնաս չունի, Ղոնդի ջան, սա ել Փրոնտ ե: Ելի դու իմ Ղոնդին ես, յես քո Գըդըլը: Ի՞նչ անենք, այսպես պատահեց: Միասին ծնվեցինք, միասին ել մեռնում ենք մի գործի մեջ: Յես քեզ կներեմ, դու ինձ:— Դե՛ վերցրու նադանը: Յեթե չվերցնես՝ տես, ահա յես ինքս կիսիեմ ինձ:

Այս ասելով Գըդըլը հետ քաշվեց ու ատրճանակը դրեց ճակատին:

— Դե, կանե՛ս ինչ վոր խնդրեցի:

Ղոնդին հարձակվեց Գըդըլի վրա և ճիղ արեց ատրճանակը խորելու նրա ձեռից: Սկսեցին մաքառել: Նրանք մեկ մտնում եյին յունի մեջ, մերթ հեռանում անկյունների խավարը:

Գոմի կտուրից ներքե նայեցին՝ յերեխ կալանավորների քաշքուկի ճայնը լսելով: Յեկ մաքառողներն իրար հետ պայքարելուց չլուցին նրանց քրքիթը:

Գըդըլը կանդ առավ:

— Հաստա՞տ չես խիսի ինձ...

— Մեր ընկերությունը վկա:

— Ազնի՞վ խոսք...

— ինձ Հո ճանաչում ես:

— Իսկ յեթե յես ինքս խիսիմ ի՞նձ...

— Յես ել ինքս կիսիեմ ինձ:

— Հաստա՞տ խոսք,— կրկնեց Գըդըլը:

— Հաստա՞տ: Դու քո կյանքն ես ուզում ադասել: Ամո՛թ քեզ...

— Դե ա՛ռ, անիծվա՛ծ, — մոնչաց Գըդըլը կատաղի ու խեղդված ճայնով և այնպես կծկվեց ու կնծուսվեց, վոր Ղոնդին զգաց նրա վճռական միտքը: Յեռը բնազրարար գեմ արեց նրա կողմը և կայծակնորեն արագ մտածեց, վոր Գըդըլն ուզում ե կրտկել:

Գերագույն արագ այդ վայրկյանում, ուշ կացելի յեր մի ամբողջ աշխարհ տեղափորել՝ նա մտածեց, վոր Գըդըլն ուզում և իր վրա կրակել: Մի ինչ վոր կենդանական, մութ, վաս բան զգաց, բայց հաշիվ չտվեց: Ու մինչ մշուշու նայեց Գըդըլին՝ յերազում կարծես լսեց մի շատ ուժեղ չոր հազորի նման թնդյուն: Ու ելի մինչ կմտածեր թե ինքը վայր և ընկնում՝ ողի մեջ յերերաց Գըդըլը, հետ շրջվեց ինքն իր վրա, ցնցվեց ու մնաց: Կատակ եր... վո՛չ, ի՞նչ կատակ: Արյունը, իրական արյունը մթության մեջ թելի պես կախվեց Գըդըլի քունքից: Դոնդին վրա ընկապ, դրկեց նրա գլուխը և ըլթունքները հպեց նրա ճակատին:

— Գըդըլ... խեղդված մի ձայն հազիվ հանեց նա և մնաց այդ վիճակում:

Դրսից աղմուկ լսվեց: Դոնդին հետ քաշվեց դիակից: Վունաձայները մոտեցան դռան: Դուռը բացվեց և ներս մտավ պահակը: Նրանից հեռու կանգնեցին ուրիշ զինվորներ՝ հրացաններն ուղղած դոնդուն:

— Զեռքերդ վե՛ր, թե չե կրակում եմ; — Հրամայեց պահակը և հրացանը ուղղեց զեպի դոնդին:

Այս գործողությունները տեղի եյին ունենում ինչվոր մի շփոթ վիճակում, վորովհետեւ վոչ Դոնդին եր ուշքի յեկել, վոչ ել պահակն եր գլխի ընկել, թե ինչ աներ այսպիսի մի դեպքում— նախապես դիտեր գնդապետի խաղը:

Ու մինչ այս վարանման մեջ եյին պահակները՝ ներս յեկան խմբագետն ու կապիտանը:

— Ծո՞ր, իրա՞վ զարկեց... զարմացավ խմբագետը մթան մեջ տեսնելով Գըդըլի դիակը, — այ գազան տղա...

Կապիտանը մոտեցավ Դոնդուն և սարը խոսեց:

— Ի՞ր համաձայնությամբ կրակեցիր:

— Թող գնդապետը ներս գա՝ հետո:

Այս ժամանակ ներս մտավ գնդապետը: Նա զլարձացած նայեց Դոնդուն:

— Ահա՛, կտրի՛մ բոլշեիկ... Բուա՛վո: Վոր ասում եմ վախկոտ են բոլշեիկները: Հետո Դոնդուն մոտենալով՝ ոճի պես ֆշաց, վախկո՛տ նապաստակ:

— Զեմ դողում, — ասաց Դոնդին մոայլ:

— Տակ և դարձավ կապիտանին, — բերեք ձեր ատրճանակը:

Կապիտանը տվեց:

— Հիմա յես քեզ ցո՛ւյց կտամ ընկերին սպանել: Առաջ աղան քո մո՞տ ընկերն եր...

— Մոտ ընկերս եր, — պատասխանեց Դոնդին:

— Ապա ինչո՞ւ սպանեցիր: — Մի՛ դողա...

— Զեմ դողում:

— Ասա, ինչո՞ւ սպանեցիր ընկերիդ: Կյանքը աղատելու համար:

— Այս, պարոն գնդապետ:

— Ինչո՞ւ չժողիր, վոր նա քեզ սպանի:

Դոնդին չպատասխանեց:

— Հը՛, ինչպե՞ս կթողնելիր, կյանքը քա՞ղցը ե:

Հանկարծ գնդապետը ցնցվեց մի նոր մտքից.

— Սպասի՛ր, գուցե նա՞ իրան սպանեց:

Լուռթյուն:

— Հը՛, սպառնալի մոտեցավ գնդապետը և դաժան մտիկ տվեց Դոնդու աչքերի մեջ, — ինչո՞ւ դու ել քեզ չսպանեցիր... Զե՛, կյանքը քաղցը ե:

Հանկարծ ատրճանակը բռնեց Դոնդու ճակատին:

— Դե հիմա տես թե կյանքը վո՛րքան և քաղցը, — բռնեց յերկար միջոց և ապա իջեցրեց ու զզվանքով նայեց Դոնդուն. — ապրի՛ր, գնդակն ափսոս ե: Ու դարձավ մյուսներին:

Հյ, և չօրդու վոչ վոք ձեռ չուս սրան: Դուրս գցեցեք այս կեղտու անասունին, թող աղատ զնա դյուղ: Կոպեկի վնաս չկասանից:

Աչքով արեց կապիտանին: Սա հասկացավ գնդապետին և մոտեցավ նրա գեմքին:

— Տար խմբագետի մոտ, խոսեցրեք ու հետո... աչքով արեց:

— Հը՛մ... այո՛, — շշնջաց կապիտանը սառը նայելով նրա աչքերի մեջ և դարձավ Դոնդուն, — զնա խմբապետի մոտ, քեզ հետ ուզում ե խոսել մի քիչ: Գնա, մի՛ վախենա:

Խմբապետը բռնեց Դոնդու ուսը.

— Դե, տղաս, կտեսնե՞ս, վոր կյանքն անուշ ե, արի՛ յերթանք ինծի, յես քեզ կընդունեմ խմբիս մեջ, լավ զինվոր կդառնա:

Գնդապետը հարբած ծիծաղելով մատը թափ տվեց Դոնդու վրա:

— Մյուս անգամ զգո՞ւշ: Դե՛, մա՛րշ, վախկո՛տ նապաստակ.

Ղոնդին հեռացավ դոնից դուրս: Գնձապետը նայեց նրա հետեւից և ասաց իր չըջապատողներին:

— Տեսաք թատրոնը:

Հռհռաց: Մյուսները նույնպես ծիծաղեցին:

— Դիմակը տարեք, գնա՞նք:

— Ավասոս չե՞ կյանքը, իմ՞նթ: Յերիտասարդ ես, խելացի տղա: Ապրե՞ս, այդպես ալ մյուս դավաճաններուն մեջտեղեն վերցուր, կյանքդ ա'լ ապատե, հոգիդ ա'լ: Յերթանք, տեսնենք ի՞նչպես ընկար առ փորձանքներուն մեջ, ո՞վ խելքե հանեց: Ես գիտեյի վոր ասանկ պիտի վերջանար:

Այսպիսի հայրական յեղանակով խոսում եր խմբապետ Սերանը իր տան ճանապարհին կողքով զնացող Ղոնդու հետ: Քնկոտ եր՝ սակայն նրա խրատը: Գինին որորում եր խմբապետին: Սակայն նա յերեմն դիմով գլուխը հետ եր չըջում և ստուգում հետեւից ու հեռվից իրեն հետեւղ զինվորին, վորին հրամայել եր «թույլ թողնել սանձը» և դալ «հենց այնպես»:

— Շա՛տ յեղավ, շա՛տ լավ յեղավ, — շարունակեց Սերանը, շատ ուրախացա, վոր աղատվեցար: Շատ կմեղքնայի պատմէ, ջա՛նս, պատմէ:

— Կպատմեմ, ասաց Ղոնդին խլաձայն և սաստիկ լարումից թուքը կպավ քմքին: Նա ծոծրակով հոկում եր հետեւից յեկող զինվորին, լության մեջ չափելով նրա քայլերի ծայնն ու հեռավորությունը:

— Կպատմեմ, շատ բան կա պատմելու... խոսեց կրկին Ղոնդին մի ձայնով, վոր նրան թվում եր թե գուրս և դալիս վոչ իր, այլ ուրիշ բերանից:

Ու հանկարծ աչքով նշան դրեց դասիվայրի թփուտը, նեղ կածանը, հետեւի սարը: Հասարակ ու հեշտ թվաց իրեն այն միտքը, վոր կայծակեց նրա գլխում: Նա արդեն «սապանված» եր, վո՞չ միայն բռնված և բանտարկված: Նա անտարեր եր գետի ամեն տեսակ մահ: Յերկյուղն անդամ, վոր միշտ մշուշում, մեծացնում ե վտանգը, գլուխը կորցնել տալիս՝ յերկյուղը չքացել եր խապառ: Ահա թե ինչու նա ամենահասարակ սառնասրությամբ— այդպես եր թվում նրան, լարված եր— յեղնիկի պես կծկեց իր մարմինը և զսպանակի պես թռավ դեպի թփուտը:

— Ծո՛, ծո՛...

Խմբապետը բերանաբաց նայեց ու ձեռը տարավ դեպի ատըրճանակը: Զինվորը վագեց Ղոնդու հետեւից: Թփուտից լովեց նրա հրացանի կրակոցը:

— Զարկի՞ր, հարցրեց խմբապետը՝ սպասելով ուրախալի վտահացման:

Պատասխան չեղավ: Միայն ավելի հեռվից լովեցին մի քանի կրակոցներ եւ:

Հուսահատ եյին այդ ձայները: Նրանք ամենից ավելի պարզ ցույց եյին տալիս, վոր գործը տանուլ տրվեց...

* * *

Ղոնդին սաստիկ հոգնած փախավ, հեռացավ գյուղից: Նա անց եր կացրել մի սարսափելի յերկար և խորը գիշեր: Նրան թվում եր, թե մի տարի քաշեց այդ գիշերը: Յել մարմնի հոդածությունը, վոր բթացել եր հոգեկան տագնապալի հուզումներից՝ զդալ տվեց նրան իր գոյությունը: Ղոնդին հեռացավ գյուղից և գորոգհետեւ լույսը բացվել եր, անհնարին եր մի բան ձեռնարկել՝ նա մտավ անտառը և խորանալով մի ապահով տեղ՝ պառկեց: Արձիմի պես ծանր քունը նրան ընկղմեցրեց անեռության մեջ: Ծանր եր սակայն այդ քունը: Շուտ-շուտ վեր եր թուչում մի վորեւ խեղդող մղձավանջից: Կեսորին մոտ նա հանկարծ զարթնեց, կարծես մեկը նրան դրդեց:

Փամանակ եր: Նա վեր կացավ և աչքերը տրորելով ճանապարհ ընկալ: Շտապում եր, ուստի սկսեց արագ ընթանալ: Բայց ի՞նչպես պիտք եր անել՝ չզիտեր, թեև գիտեր, թե ինչ պիտք ե աներ... Արդեն սկսում եր գործն ուշանալ: Նա գրկեց ոգնականից: Հեշտ չեր գինամիտ զնելը: Պետք եր ամեն բովե հսկել, թե արդյոք մարդ չի՛ մոտենում կամուրջին, նշաններ տալ, սկսել գործը, դադարեցնել, թաղնվել... ի՞նչպես աներ մեն-մենակ:

Սակայն կամուրջի պայմեննելու գործը հիմա արդեն բարդ-վեց ավելի սոսկալի մի հոգեկան բնուով: Ընկերոջ մահը, վոր մղձավանջի պես գիշերն յեկավ ու խեղդեց նրա զգացումները՝ այժմ արդեն սկսում եր լիովին պատկերանալ նրա յերեակայության մեջ իր սարսափելի պատկերով: Նա շատ ավելի հեշտ եր պատկերացնում այդ գործը: Յել հիմա, յերբ արդեն դա կատարված փաստ եր՝ նոր միայն նրա համար պարզվեցին բաներ, վոր առաջ չեր կարող զդալ:

Հանկարծ զնցւեց: Հիշեց մի մանրամանություն այն վայր-

կյանից, յերբ Գըդըլը ընկավ: Հիշեց, — և ի՞նչպես նոր հիշեց նա, — հիշեց, վոր յերբ Գըդըլը դոչեց՝ «ա՛ռ անիծվա՛ծ» ու հենց այն ե՛ կրակում եր՝ ինքը՝ Ղոնդին մտածեց, վոր Գըդըլն իր սեփական կյանքն ե ազատում, վոր նա՝ այդ քայլը, միայն գործի հաջողության համար քայլ չեր, վոր դա վերջին հաշվով յեսականություն եր և թուլամորթություն: Այս, մի վայրկյան եր ժամանակը, բայց հույժ լարված վիճակի մի վայրկյանում չէ՝ վոր մարդ հավիտենակություն ե ապրում: Ահա դա յեր այն կենդանական մութ, վատ բանը, վոր անցավ նրա մտքով այն ըռպեյին: Հիշեց հիմա, հիմա գիտակցեց: Ղոնդին սուր խայթ զգաց սրտի մեջ: Ընկերը, իր սիրելի ընկերը հանդիմանական տիտուր աչքերով նայեց իրան: Հիմա հիշեց, վոր Գըդըլի հայացքը այն վայրկյանին դաժան չեր, վոր նրա մեջ մի անսահման ցավ կար:

Յեվ հիմա ընկերը, սիրելի ընկերն իրեն մի ուրիշ մարդ, խորը մարդ, բոլորովին այլ հոգով ու մտքերով նայում եր նրան: Այդ հայացքը յերեսում եր ծառերի բներում, թփերի, քարերի վրա: Ուր գնում եր Ղոնդին, ուր դարձնում եր աչքերը՝ այդ աչքերը նայում եյին իրան: Յեվ նա, վոր կարծում եր թե յեթե ընկերն իրան սպանի՝ այն վայրկենին զերազույն ծանր բաներ պիտի զգար ինքը՝ նոր հասկացավ, վոր հիմա սկսվեց մի նոր դժվարություն, վոր պիտք եր հաղթահարել: Արդյոք ինքը Ղոնդին չէ՞ր պատճառը, վոր Գըդըլն սպանվեց: Իհարկե վոչ: Բայց արտաքուստ այդ այդպես եր: Ղոնդին կարող եր ինքն առաջ ընկել, բայց չընկավ, իրեն կանխեց ընկերը և խղճի խայթերը լցրեց իր հոգու մեջ: Ո՛, հավիտյան կմնան այդ խայթերը: Ի՞նչ անել, ի՞նչ անել... Հոգեկան խոռվահույզ վիճակում նա փախած յեղնիկի պես ապավեն եր միայն վորոնում: Ի՞նչ եր այդ ապավենը: Նա զգում եր, վոր յեթե իր պարտքը կատարի լիովին՝ հոգեկան տանջանքները կթեթևանան: Այո՛, այո՛, պարտքը կատարել, թեկուզ մեռնել իսկույն: Դա յե յելքը: Զե՞ վոր այդ պարտականության համար եր, վոր ձեռ բարձրացրեց ընկերն իր կյանքի վրա:

Այս նոր խնդիրը, խղճի տանջանքներից ապավելու խնդիրը, բռնեց նախկին խնդրի տեղը՝ այն, վոր ձգտում եր կալանքից ապամովել: Հիշեց, վոր այն դիշեր նա հոգեկան մշուշի մեջ եր: Ապրել-մեռնելու: Զգիտեր վո՛րն ընտրեր, վորին կառչեր: Ան-

տարրերության մեղկարար մի թույն թմրեցնում եր նրա ուղեղը, և նա անձնատուր եր դրան այն դիշեր: Մինչ՝ պետք եր վճիռ կայտցնել և շտապ, ինչպես իր հերոս ընկերը: Ընկերը վճուց մեռնել, միևնույն ե թե ով, — և նա մեռավ ինքը: Յերկար չմտածեց: Իսկ հիմա ինքը մտածում ե, և մտածում ե յերկար և չի կամենում մեռնել: Գիտակցարար չի կամենում: Իր ընկերոջ պես գիտակցարար, վոր այդպես ել մեռավ: Ընկերը պետք ե մեռներ, այդպես եր այնժամ բոպեն: Հիմա ինքը պիտի ապրի— այդպես ե բոպեն հիմա:

Պետք ե ապրել, ամեն կերպ ապրել և գործը կատարել: Կատարել ընկերոջ նվիրական գործը: Ի՞նչ պիտի անի նա իր ընկերոջ հիշատակի առջև՝ յեթե նրա այդ ավանդը տեղ չհասցնի սրբությամբ: Դա մի նպատակ ե, վորին պետք ե հասնել՝ խղճի կծու խայթերը մեղմացնելու համար:

Յեվ նա սկսեց մոլեգնաբար գիմել այդ նպատակին:

Եա գնում եր ծանոթ անտառով: Դա իրենց գյուղի անտառն եր: Եույնն եր ծառերը, արահետները, կարծես չի յեկել և անցել համաշխարհային մեծ աղետը՝ պատերազմը, կարծես այժմ մոտակա լեռներում ու ձորերում իրար դեմ չեն կանգնած յերկու բանակ, չեն ձգտում վոչնչացնել իրար: Ահա այն ծառը, վորի տակ ինքն ու Գըդըլը պատանի որերին պատուալարվեցին անձրեսից. նա ցնցվեց: Ահա առարկան ավելի շոշափելի հետ ըրջեց ժամանակի անիվը և վերադարձ անցած որերի կյանքը, մտքերը, խաղերը, իրան՝ Գըդըլին յերազկոտ ու անձնվեր:

Ահա խոշոր չեչաքարը, վորի վոսի անձրեաջրից խմել են ինքն ու Գըդըլը:

Ահա և փոքրիկ քարայրը, ուր նրանք գողացած կարտոֆիլ ելին խորովում:

Արահետին խաչաձևիկեց մի չափի, վոր դեպի սարերն եը լնում: Դա խկասեալ բարակ ջրի ձամբա յեր, վորի յեղրերով մարդիկ քայլել եյին և դրել իրենց վոտների կնիքը:

Լերնից մի տղա յեր լինում: Դա անշուշտ իրենց գյուղի ողաներից ե:

— Վո՞րտեղից ես գալիս, — հարցրեց Ղոնդին մեղմաձայն:

— Սարից:

— Արտակեն ձանաչո՞ւմ ես:

կյանից, յերբ Գըդըլը ընկավ: Հիշեց, — և ի՞նչպես ոոր Հիշեց նա, — հիշեց, վոր յերբ Գըդըլը դոչեց՝ «ա՛ռ անիծվա՛ծ» ու հենց այն ե՝ կրակում եր՝ ինքը՝ Ղոնդին մտածեց, վոր Գըդըլն իր սեփական կյանքն ե ազատում, վոր նա՝ այդ քայլը, միայն դործի հաջողության համար քայլ չեր, վոր դա վերջին հաշվով յեսականություն եր և թուլամորթություն: Այո, մի վայրկյան եր ժամանակը, բայց հույժ լարված վիճակի մի վայրկյանում չե՞ վոր մարդ հավիտենակություն ե ապրում: Ահա դա յեր այն կենդանական մութ, վատ բանը, վոր անցավ նրա մտքով այն ըռպեյին: Հիշեց հիմա, հիմա գիտակցեց: Ղոնդին սուր խայթ զգաց սրտի մեջ: Ընկերը, իր սիրելի ընկերը հանդիմանական տխուր աչքերով նայեց իրան: Հիմա հիշեց, վոր Գըդըլի հայացքը այն վայրկյանին դաժան չեր, վոր նրա մեջ մի անսահման ցավ կար:

Յեկ հիմա ընկերը, սիրելի ընկերն իրրե մի ուրիշ մարդ, խորը մարդ, բոլորովին այլ հոգով ու մտքերով նայում եր նրան: Այդ հայացքը յերեսում եր ծառերի բներում, թփերի, քարերի վրա: Ուր գնում եր Ղոնդին, ուր գարձնում եր աչքերը՝ այդ աչքերը նայում եյին իրան: Յեկ նա, վոր կարծում եր թե յեթե ընկերն իրան սպանի՝ այն վայրկենին զերագույն ծանր բաներ պիտի զգար ինքը՝ նոր հասկացավ, վոր հիմա սկսվեց մի նոր դժվարություն, վոր պետք եր հաղթահարել: Արդյոք ինքը Ղոնդին չե՞ր պատճառը, վոր Գըդըլն սպանվեց: Իհարկե վոչ: Բայց արտաքուստ այդ այդպես եր: Ղոնդին կարող եր ինքն առաջ ընկել, բայց չընկավ, իրեն կանխեց ընկերը և խղճի խայթերը լցրեց իր հոգու մեջ: Ո՛, հավիտյան կմնան այդ խայթերը: Ի՞նչ անել, ի՞նչ անել... Հոգեկան խոռվահույղ վիճակում նա փախած յեղիկի պես ապավեն եր միայն վորոնում: Ի՞նչ եր այդ ապավենը:

Նա զգում եր, վոր յեթե իր պարտքը կատարի լիովին՝ հողեկան տանջանքները կթեթեանան: Այո՛, այո՛, պարտքը կատարել, թեկուզ մեռնել խոկույն: Դա յե յելքը: Զե՞ վոր այդ պարտականության համար եր, վոր ձեռ բարձրացրեց ընկերն իր կյանքի վրա:

Այս նոր ինդիրը, խղճի տանջանքներից ազատվելու խնդիրը, բռնեց նախկին խնդրի տեսլը — այն, վոր ձգտում եր կալանքից ազատվել: Հիշեց, վոր այն դիշեր նա հոգեկան մշուշի մեջ եր: Ապրել-մեռնելու: Զգիտեր վո՛րն ընտրեր, վորին կառչեր: Ան-

տարրերության մեղկարար մի թույն թմրեցնում եր նրա ուղեղը, և նա անձնատուր եր դրան այն գիշեր: Մինչ՝ պետք եր վճիռ կայացնել և շատպ իր հերոս ընկերը: Ընկերը վճուց մեռնել, միւնույն ե թե ով, — և նա մեռավ ինքը: Յերկար շտածեց: Իսկ հիմա ինքը մտածում ե, և մտածում ե յերկար և չի կամենում մեռնել: Գիտակցարար չի կամենում: Իր ընկերով պես գիտակցարար, վոր այդպես ել մեռավ: Ընկերը պետք ե մեռներ, այդպես եր այնժամ բողն: Հիմա ինքը պիտի ապրի—ալուպես ե բոլոր հիմա:

Պետք ե ապրել, ամեն կերպ ապրել և դործը կատարել: Կատարել ընկերով նվիրական գործը: Ի՞նչ պիտի անի նա իր ընկերով հիշատակի առջև՝ յեթե նրա այդ ավանդը տեղ չհասցնի սրբությամբ: Դա մի նպատակ ե, վորին պետք ե հասնել՝ խղճի կծու խայթերը մեղմացնելու համար:

Յեկ նա սկսեց մոլեգնաբար դիմել այդ նպատակին:

Նա գնում եր ծանոթ անտառով: Դա իրենց գյուղի անտառն եր: Եույնն եր ծառերը, արահետները, կարծես չի յեկել և անցել համաշխարհային մեծ աղետը — պատերազմը, կարծես այժմ մոտակա լեռներում ու ձորերում իրար դեմ չեն կանգնած յերկու բանակ, չեն ձգտում վոչնչացնել իրար: Ահա այն ծառը, վորի տակ ինքն ու Գըդըլը պատանի որերին պատսպարվեցին անձրեից: Նա ցնցվեց: Ահա առարկան ավելի շոշափելի հետ չընեց ժամանակի անիվը և վերադարձրեց անցած որերի կյանքը, մտքերը, խաղերը, իրան՝ Գըդըլին յերազկոտ ու անձնվեր:

Ահա խոշոր չէչաքարը, վորի փոսի անձրեաջրից խմել են ինքն ու Գըդըլը:

Ահա և փոքրիկ քարայրը, ուր նրանք զողացած կարտոֆիլ ելին խորովում:

Արահետին խաչաձեկեց մի շալիղ, վոր դեպի սարերն եղ գնում: Դա խաղաղես բարակ ջրի ճամբառ յեր, վորի յեղբերով մարդիկ քայլել եյին և դրել իրենց վոտների կնիքը:

Վերևից մի տղա յեր իջնում: Դա անչուշտ իրենց գյուղի առանձինություն ե:

— Վո՞րտեղից ես գալիս, — հարցրեց Ղոնդին մեղմաձայն:

— Սարից:

— Արտակին ճանաչո՞ւմ ես:

— Արտակի՞ն, — և տղան աչքերը խելացի կերպով չռած, —
չեմ ճանաչում:

— Սաքանենց Արտակին չե՞ս ճանաչում, վոր ականջն եւ
կարած ե:

— Հա, հա, Արտոյին, ճանաչում եմ:

— Այ, յերբ կդնաս գյուղ, նրան գտիր և առա, վոր իրենց
հորթը ձորաբերանին մոլորվել ե, թող գա տանի:

Տղան քննող հայացքով նայեց Ղոնդուն և ասաց.

— Լավ:

Բայց ելի նայեց նրան.

— Դու ո՞ւր ես գնում:

— Յես գնում եմ իմ գործին, մորուտը:

Տղան կրկին կասկածով նայեց Ղոնդուն ու լուռ գնաց:

— Կասես, հը՞ :

— Կասեմ, ինչի՞ չեմ ասի:

Ղոնդին մի փոքր դանդաղեցնելով իր քայլերը՝ գնաց տղայի
հեռացած կածանով: Հասնելով մի բացատի, նա մտավ թփերի
մեջ ու պառկեց: Նա մտատանջվում եր թե արդյոք տղան կկա-
տարի՞ հանձնարարությունը:

Հոսում եր ժամանակը: Հեղվում եր ժամանակը, ինչպես
արյունը թանկագին... Բայց նա ուրիշ հնար չուներ— ստիպված
եր պատահական ու կասկածելի միջոցներով գործել: Այն ել մի
գործում, վոր այս բոպեյիս Գըրըլի ինքնասպանումից հետո
պահանջում եր ամենահաստատ ձեռնարկումներ...

Որը թեքվում եր, և Արտակը չկար: Արդյոք հայտնե՞լ ե,
արդյոք Արտակը հավատացե՞լ ե, արդյոք ուրիշները չե՞ն իմացել
և այժմ ընկել անտառները վորոնելու և բոնելու այդ կասկածելի
ոտարականին:

Անտառի կածանի ուղղությամբ, վորով գնացել եր տղան՝ մի
ստվեր սկսեց մերթ խառնվել ծառերի բներին և մերթ հայտնվել:

Ղոնդին նայեց այն կողմ և լարվեց: Կարող եր Արտակի տեղ
հայտնվել վտանգավոր մեկ ուրիշը, կարող եր և Արտակը լինել:

Այո, Արտակն եր, այն տղայի հետ: Նրանք դալիս եյին
շտապով: Արտակի շարժումները, հուզումնալի աչքերը և խու-
զարկու հայացքը ուրիշ բան եր գուշակել տալիս: Նա ուրեմն մի
բան հասկացել եր... Բայց ինչո՞ւ յեր տղային հետը բերել:

Հասնելով բացատը նա արագ անցավ նրա միջով: Ի՞նչով իմաց
տալ: Նրանք խոսում եյին, բայց վոչինչ չեր լսվում: Բայց և մի
բան պարզ ե, վոր նրանք գնում եյին ձորի կողմը:

Ղոնդին վեր կացավ և սկսեց հետեւ նրանց: Յերկար ժա-
մանակ նա գնում եր նրանց հետեւից: Մի տեղ Արտակն ու տղան
կանգ առան և սկսեցին խոսել և նայել չորս կողմ: Ղոնդին շատ
եր ցանկանում վոր տղան հեռանար, բայց հակառակի պես նա
կպել եր Արտակին: Ղոնդին մատեցավ նրանց՝ թաղնվելով թփերի
մեջ: Արտակը պարզապես սպասում եր և այդ ցույց եր տալիս:
Մի անգամ միայն սարից եր թե անտառից մարդիկ եյին մոտե-
նում՝ Ղոնդին նկատեց, վոր Արտակը տղային մղեց դեպի թփե-
րը՝ հասկացնելով վոր թաղնվեն: Յեվ իրոք՝ նրանք թաղնվեցին:
Գյուղացիներն անցան: Նրանք կրկին դուրս յեկան թփերից:
Ղոնդու համար պարզվեց մի բան, վոր տղան վստահելի յե և
Արտակը նրա հետ գալտնապահություն ե անում: Սակայն զգու-
շացավ և սպասեց: Այդ ժամանակ Արտակը սուլեց: Պարզ եր՝
կանչում եր...

Ղոնդին ոխակ չարեց դուրս գալ: Նա զայրույթից ուտում եր
իրան և զգում եր, վոր յեթե հրացանը մոտը լիներ՝ յերեկ
կկրակեր տղայի վրա: Շատ ել վստահելի յեր, բայց ո՞վ գի-
տեր... Ղոնդին հիվանդագին զգույշ եր: Յեվ դա մի կողմից
տանջում եր նրան, մյուս կողմից ուշացնում, հանցավոր կերպով
ուշացնում եր գործը: Ժամանակն անցնում եր... իսկ Արտակը
կարող եր հեռանալ: Մի փոքր հույս կար միայն, և դա այն եր,
վոր Արտակը հասկացել եր: Բայց նա կարող եր այնպես հասկա-
նալ թե գործը շտապով չի և առհասարակ կարող ե կասկածել
թե գուցե և վոչ մի խորհրդավոր մարդ ել չի յեղել իրենց հորթի
մասին հոգացող պատահական մարդը: Կարող եր Արտակն ընկե-
րանալ անցորդների հետ և գյուղ վերադառնալ: Այն ժամանակ
անհնար կիներ նրան մեկուսացնել: Ղոնդին շատ եր հանգնել իր
կյանքում և այս անգամ ել նրա համար դժվար չեր ոխակ անել և
մոտենալ Արտակին: Բայց նա մտաղրվելով անպատճառ հաջող
գլուխ բերել գործը, ուղում եր միանդամայն լրիվ զգուշություն
բանեցնել:

Հանկարծ ինդիրը շատ հեշտ լուծվեց: Արտակը կամ գլխի
ընկապ, վոր Ղոնդին չի ուղում հայտնվել կամ այդտեղ չի տղային

ուղարկեց ձորի ուղղությամբ։ Տղան հեռացավ։ Այն ժամանակ
Հոնդին զգույշ սողալով թփերի միջով մոտեցավ Արտակին և
ոճի պես գլուխն հանեց տերեվների միջից, նայեց չորս կողմ։
Վստահելով վոր վոք չի գալիս՝ գուրս վագեց թփերից և գը-
նաց դեպի Արտակը,

Արտակը, վոր տասնեիննը տարեկան կոմյերիտական եր, թե
ինչպես եր ձեռք բերել վորոշ զգուշավորություն և գործնականու-
թյուն՝ դա հասկանալի չեր Ղոնդուն, բայց նա դուք յեկավ նրան։
Նա գիտեր միայն մի բան, յեր վճռեց կանչել նրան, վոր նա
Գըդլի յեղբայրն ե։ Բայց նա չգիտեր նրա կոմյերիտական լի-
նելը։

Մոտենալով Արտակին՝ նա ուզում եր նախ հարցնել թե ո՞վ
ե այն տղան, բայց Արտակը ավելի չուտ զգաց այդ հանդա-
ժամքը և ասաց։

— Սա Մանուկի տղան ե։

— Շատ ել Մանուկի տղան ե, ո՞ւր ես բերել հետո։

— Վոր հեշտ լինի քեզ վորոնելը։

Ղոնդին մտածեց, վոր խելքի մոտիկ բան եր նաև այդ, բայց
ժամանակ չկար, ուստի և սկսեց գլխավոր գործից խոսել։

— Մանուկը վո՞րտեղ ե։

— Գյուղում։

— Անմիջապես դնա և կանչիր, ասա թող հրացաններ վերցնի։

— Մեկը նա կվերցնի, մյուսը՝ յես։

— Դու Ե՞լ ես գալիս . . . — մտածեց Ղոնդին։

— Անպատճառ։

— Դե, լավ, հրացանը բեր, հետո կվերադառնաս։ Այդ տղա-
յին կորցրու։

— Հավ։

— Դե, դնա, շուտ։

Արտակը վարանեց։

— Բայց չասիր թե Գըդլը . . .

Ղոնդին դաժանորեն ընդհատեց։

— Գնա՞՛, դրա ժամանակը չե։

Արտակն հնազանդվեց։ Ղոնդին հեռացավ և ձեռքով ցույց
առվեց տեղը։

— Ահա այստեղ կլինեմ։

— Հավ։

Ղոնդին թագնվեց։ Արտակը գնաց տղայի ուղղությամբ նրան
վերոնելու և վերադառնալու դյուղ։

* * *

Խավարի մեջ յերեք ստվերներ սողոսկում եյին։ Նրանք ա-
հում եյին շտապ և անհանդիսա։ Աստղալույս յերկինքը արևել-
քում կարծես զունատվում եր։ Հորիզոնը հղի յեր լուսնով։ Մի
ժամ հետո թերեւս լիալիր դեմքը պիտի հաներ նա լեռն ան-
տառի կապարճի միջից։

— Ես լուսնյակն ո՞վ վինեց, քանդվի դրա վինովի տունը, —
ժոմուաց ստվերներից մեկը մյուսին, վոր հավասարվեց նրան ձո-
րավի տափակ սեղանի վրա։

— Հնար չկա, պիտի վերջացնենք, — ասաց մյուս ստվերը և
ապասեց յերրորդին, վոր գա միանա իրենց։ Սա մոտեցավ.

— Լսի՛ր, Արտա՛կ։ Դու լավ ծանոթ ես մտերին։ Դու կնայես
աջ կողմից կամուրջին մոտեցողներին, իսկ Մանուկը ձախ՝ ան-
տառի կողմից։ Յես մի դիմամիտը գտնեմ։ Նրանք մոտեցան մի
քարաբլուրի և կանգ առան։

— Ահա, այստեղ ե, — ասաց Ղոնդին և ուշադիր կերպով
անտղեց դիմամիտի տեղը։ Կասկածելի վոչինչ չգտավ։ Ապա նա-
յեց չորս կողմը և ասաց, — յես դիմամիտը կտանեմ, իսկ դուք
հոկեցեք։ Բոլոր նշանները — ինչպես ցույց տվի։ Ինչքան կարելի
յե՝ մի՛ կրակեք։

Մանուկը նստեց։ Նա քառասունի մոտ, մազերով յերեսը
ծածկած տղամարդ եր։ Հին վորսորդ եր և վերջերս բոլշեկիյան
կազմակերպության անդամ։ Նա դրստեց իր տրեխի կապիչները,
նայեց փամփուշտակալին, քաշեց փակաղակը, պահունակը դրեց
մեջը և փակեց։

— Տեսամ քոնը վոնց ա, — դարձավ Արտակին։

Արտակը լցրել եր իր հրացանը, բայց անխոս հնազանդվեց
Մանուկին, վորը մինչեւ անձամբ չստուգեր՝ չեր սկսի գործը։

Ղոնդին, վոր այդ գիտեր՝ նույնպես ձայն չհանեց, թեև Մա-
նուկը նրա հրամանատարության տակ եր։ Յերբ Ղոնդին կրկնեց
իր հրամանը չկրակելու մասին՝ Մանուկը մոայլ պատասխանեց։

— Գիտում եմ։

Մանուկն ու Արտակը իջան ձորը։ Իսկ Ղոնդին դիմամիտը

տարավ նրանց հետեւից: Նրանք զգույշ իշնում եյին, յերբեմն կանդնելով և ականջ դնելով: Լուռ եր. ըստ յերևութին մարդ չեր շարժում ներքե ճանապարհին, վորը շատ թույլ յերկում եր: Կամուրջը ևս ազատ եր: Նրանք իջան մինչեւ ճանապարհը և մեծ քարի հետև թաղնված սպասեցին: Ղոնդին տեղ վորոննեց դինամիտը թաղցնելու համար՝ յեթե դրա հանկարծակի կարիքը չզգացվեր:

Մանուկը գնաց դեպի աջ, իսկ Արտակը դեպի ձախ: Ղոնդին սպասեց, գնաց ձորի պոտենկը նայեց կամուրջին: Դժվարությունը նրանումն եր, վոր կամուրջը գտնվում եր ճամբի կեռմանի վրա և լայն տեսադաշտ չուներ: Միշտ պետք ե թե աջից և թե ձախից լուր բերելին թե մարդ և մոտենում: Ղոնդին կարող եր միայն այն ժամանակ իջնել կամուրջը և աշխատել, յերբ այս ու այն կողմից մոտեցողները շատ հեռու եյին: Նա պետք ե աշխատեր մեջեմեջ, վորավոր աղատ մոմենտները և շարունակ վերև բարձրանալով, միանդամայն ապահով լինելու համար, վորովհետև ճամբորգներից վորեւ մեկը կարող եր ո՞վ գիտե՝ իջնել կամուրջի տակը: Կամ կարող եր բոան առ բոան վրա հասնել վորեւ պահակախումբ կամուրջին հսկելու: Կոփէ եր, որ-որի, ժամ-ժամի մարդիկ նոր զգուշական միջոցներ են մտածում...

Հանկարծ աջ կողմից յեկավ Արտակը: Ղոնդին նայեց.

— Մա՞րդ կա...

— Ճամբորդներ են:

— Ի՞նչ գիտես: Զինվա՞ծ են:

— Վոչ:

— Լավ, սպասեք՝ վոտը հանդարտիլի: Հիմի յես քեզ ասեմ: Յեթե անհաջող վերջացավ՝ քեզ մի բան կասեմ գուցե... մի տեղեկություն... կտանես մերսոց: Բայց յեթե հաջողվի, պայթյունը լսես՝ իսկույն անհետացիր դեպի գյուղ:

Արտակը նայեց Ղոնդու մտախոհ դեմքին.

— Դու գյուղ չե՞ս գալու:

— Վոչ: Ուրիշ տեղ:

— Գըդըլի մո՞տ:

Ղոնդին չպատասխանեց:

— Դու ելի չասիր թե վո՞րտեղ և Գըդըլը:

Ղոնդին չպատասխանեց:

— Հը... սպասել են...

Յեվ Արտակը սրտատրով նայեց Ղոնդու տխուր դեմքին: Ղոնդին բերանից թափեց ակամա և անշեշտ.

— Վոչ...

Արտակին զուր չեր գալիս այդ ծածկամտությունը:

— Գըդըլն իմ ախաղերն ե, ի՞նչ, զինվորական գաղտնիք ե, վոր չի կարելի իմանալ թե վորտեղ ե:

— Կիմանաս, դրա ժամանակը կդա:

— Լսիր, Ղոնդի, յես կդամ հետդ:

— Վոչ, դու ինձ հետ չես դա. կգնաս գյուղուղ... և հառաչեց թեթև, — իմ ճամբան ուրիշ ե:

Յեվ սկսեց ականջ գնել: Անհանդստացավ: Արտակը մի բան Հինդելով քիթի տակին ծիծաղեց:

— Դյուղում ծիծաղում են:

— Ո՞վ, ինչո՞ւ, — մեքենայաբար հարցրեց Ղոնդին:

— Գյուղացիները: Ել ենքան բաներ են պատմում քո և Գըդըլի արարքներից: Պատմում են ու ծիծաղում:

— Լավ են անում, վոր ծիծաղում են:

Արտակը նայեց կրկին նրա տխուր դեմքին:

— Քեֆդ ինչո՞ւ յե կոտրած:

— Կոտրած չի...

— Յես իմանում եմ — Գըդըլը հետդ չի: Առանց նրան տխուր ես: Գիտե՞ս ինչ, Ղոնդի, յես միշտ ասել եմ, վոր յերկուսդ կամ ժիասին պիտի ապրեք մինչեւ ծերությունը կամ միասին մեռնեք: Դուք մեկդ առանց մյուսի չեք կարող ապրել:

Ղոնդին խոցվեց.

— Լսիր, այդ բաները թող: Իմացա՞ր, ինչ ասացի քեզ: Դու կատարիր՝ ինչ վոր քեզ կարդադրեցի:

— Դե վոր չես ուղում, ի՞նչ անեմ:

Զախից յերեաց Մանուկը.

— Հա, հրետանի՞ յե... վախեցած շշնջաց Ղոնդին:

— Հըտանի՞ չի յերեաւմ անիծածը: Սայլեր են: Բան չի հապցվում:

— Դատա՞րկ են:

— Բեռնած են՝ զահբումարը:

— Պարզ ե, Փրոնտ են քում: Իմացիր՝ ինչ բնու ե:

— Գան հասնեն անտառ։ Դեռ յերկար կքաշի։
 — Դու ասա պահակ չըերեն կամուրջի վրա։ Հը՞, ի՞նչպիս անենք, ուշանո՞ւմ ենք…
 — Եսպես հա՛ կզան ու կդնան։ Գնանք դնենք դինամիտը։
 — Մեծ ոխիկ ե։ Պետք ե լավ մտածենք։ Կամուրջը պետք թանպայման պայմենել, — հետո դարձավ Արտակին… Արտակ, գու դնա պոստդ։ Զգույշ, Արտակ, շա՛տ, շա՛տ զգույշ, կրկնում եմ։
 — Զգույշ վոր լինեյի՝ չեյի ծնվի, — ծիծաղելով ասաց Արտակը, — տնաշեն, մի կյանք չի՞։ Յերկու հո չի՞։
 — Հիմարություններ գուրս մի տա։ Սա այն տեղն ե, վոր կյանքը շատ թանդ ե և քոնը չե։
 Արտակը անհոգ թափ տվեց ձեռը.
 — Կոխիվ ե, կխսիեն, թանդ չեն հարցնի։
 Ղոնդին գաղաղեց անսպասելի թե Արտակի և թե Մանուկի Համար։
 — Զգույշ, ասում եմ քեզ, լակո՛տ… թե չե՞ հետ գտոիք, դնա տուն։
 Արտակն անխոս հեռացավ իր պոստի կողմը. Մանուկը նըստեց.
 — Փոխվել ես, մե՞ր տղա։ Այ, ինչ բան ե պատերազմը։ Քանի Գըդրի հետ ելիր՝ որը հազար մահի հետ գլուխ ելիր ջարդում։ Հիմի՝ ինչպես եմ տեսնում՝ շատ ես զգույշ։
 — Վախենում եմ, ժպտաց Ղոնդին։
 — Սուտ չի։ Աչք մի բանում վախեցած կի։ Մի զինվոր ենապես բան եր տեսել կողում, վոր չեր կարում պատմի։ Են ե՞ սկսում եր թե չե, մենակ դողում եր ու սիրթնում։ «Այ տղա, կամ սողանել են կամ տանջել, պատմի՛, ի՞նչ կա»։ Չե։ Լեզուն կապիտմ եր։ Յերևի կովում մարդու հետ գործ ունենալը դժար ե։
 Ղոնդին քմծիծաղ տվեց.
 — Հը՞, դժվար… գործի մեծությունը վոր չլիներ՝ ո՞՛ կիրմանար… դեպքեր են պատահում…
 Սկսեց ականջ դնել.
 — Հը՞, տեսնես ի՞նչ յեղավ Արտակը…
 — Բան եմ ասում, խոխին ո՞ւր բերիր, ասաց Մանուկը ծանր նստելով։

— Գործը պահանջում եր… ուրիշ ի՞նչ մարդ կարող եյի վերցնել գյուղից։ Այ, տղա, — խոսքը փոխեց, — ի՞նչպես պիտի լինի հիմա… ի՞նչպես պիտի անենք։
 — Կանենք, վախիլ մի, — հանդիսատ ու հաստատ յեղանակով ասաց Մանուկը։ Շատ ես քեզ ուտում։ Տնաշեն, հո ամբողջ կորդը մի կամուրջի գլխին չի։
 — Իմ գլխին ե։
 — Ինչո՞ւ։
 Խոեց։ Զգաց վոր խոսքերով ավելի յե հուրհը ում ներքին կրակը, բայց չեր կարողանում զսպել իրան։
 Ու հրացանը թափով նետեց գետին։
 Մանուկն ել չեր հասկանում Ղոնդու հոգեկան վիճակը։
 Խնդրի մարտական և տեխնիկական կողմը Մանուկի համար պարզ եր և հեշտ։ Նա սարի մարդ եր և վտանդի սովոր։ ուստի և զարմանում եր թե ինչո՞ւ յեն այսքան անհանդիսատ մարդուն ուղարկել այս գործը կատարելու։
 — Քեզ հետ եմ, գնանք դինամիտը դնենք։ Թե չե՝ հրես լուսակը գուրս ե գալիս։
 Արտակն արագ վաղեց ձորի կողմից։
 — Հա՞…
 — Զինվորներ յեկան կամուրջի վրա։
 — Պահակներ կլինեն, — հուսահատ շեշտով ասաց Ղոնդին։
 — Ախր քեզ ասում եյի, — հանդիմանեց մեղմ ու հանգիստ Մանուկը, — ի՞նչի՞ հակառակեցիր։ Ուշացանք։
 Ղոնդին գլուխը բռնեց.
 — Պահակներ կլինեն։ Տեսար ինչ յեղավ։ Լսեցե՛ք, — գարձավ նա Արտակին ու Մանուկին, — ժամանակ չկա… հիմա ամեն ինչ կարող ե պատահել… բայց ելի… ի՞նչ չեմ ասում, Արտակ, դնա… չե, սպասիր, յես դնամ։
 Ու վաղեց գեպի ձորը։
 — Մինչեւ գործը գլուխ գա՝ սա իրեն կկորցնի։ Ի՞նչ ե պատահել սրան։
 — Գործ են հանձնել… յերեխա յես, — ասաց Մանուկը և գրապանից թութունի քիսան հանեց, սկսեց չիրուխը լցնել։ Սակայն հիշեց, վոր չի կարելի ծխել, հետ դրեց զրպանը։
 Ղոնդին հետ դարձավ։ Նա այլայլված եր։

— Չորս հոգի յեն, — ասաց նա, — կարող են հետո ավելանալ:
Հսեցեք, դուցե կարելի յե հենց: Մեծ ոխոկ ե, բայց պատրաստ-
վեցեք:

— Ռիսկը վո՞րն ե, — ասաց Արտակը, — մեռանք՝ մեռանք:
— Ի՞նչ անեմ մեռնելու... մեռնել կա, վոր մեռնելն ել քիչ
չե: Լսի՛ր, Արտակ... Գիտե՞ս... Գրդըն սպանված ե...

Արտակը մոտ ցատկեց ուղիղ նրա աչքերի դեմ:

— Ի՞նչ, Գըդըլը... ո՞վ ե սպանել...

— Մեկը նրան սպանեց:

— Մառղերի՞ստ:

— Վոչ... մերոնցից:

— Ի՞նչո՞ւ:

— Գործի համար... խոսք եր տվել կատարել...

Արտակը բռնեց Ղոնդու ոձիքից.

— Ասա, ո՞վ եր... ասա, ո՞վ եր:

Ղոնդին հետ մղեց նրան.

— Սպասիր, դրա ժամանակը չե, և ականջ դնելով ձորի
կողմից լսլող չխկոցներին՝ ասաց, — սպասեցե՞ք մի ըոսեն, ելի
մի անդամ նայեմ ու սկսենք:

Ու թռալ դեպի ձորի կողմը:

Արտակը նայեց և գլուխը ձեռների մեջ առած սկսեց մղկտալ.

— Ախր տեսնում եմ, աչքերից յերելում եր...

Բայց նրան սթափեցրեց Մանուկի չոր ձայնը.

— Վեր կա՛ց, վերցրու հրացանը:

Արտ նշաններ անելով վերադարձալ Ղոնդին.

— Գնացին...

— Ահա՛, հա՞... լա՛վ ե, — խուլ մռնչաց Մանուկը և վեր
թռավ հրացանը խլելով:

Ղոնդին արագ կարգադրեց.

— Դե, ել հնար չիա: Լուսինը դուրս ե գալու: Դուք գիր-
քերից պահեցեք ճանապարհը — յես կդնեմ դինամիտը: Ամեն ան-
ցորդի մի կրակեք: Դե...

Ու արագ վերցրեց գիրնամիտը: Մանուկն ու Արտակը ոգնե-
ցին նրան, տանելով գործիքները: Նրանք հրացանները կոնա-
տակերին և գործիքները ձեռներին շտապով իջան ձորը:

Հասնելով կամուրջին, Ղոնդին ու Արտակը սկսեցին դինա-

միտը դնելու աշխատանքը, իսկ Մանուկը հսկում եր: Ժամանակ
չկար, պետք եր շտապել: Բայց յերկար տեվլեց աշխատանքը,
քարը դիմագրում եր: Ղոնդին յերազի մեջ եր. նա ամբողջովին
դառել եր բնազդ, վորը լսում ե հազարավոր քայլերի ձայն թե-
գուղ հինգ վերստից և տեսնում ե մարդկանց՝ ժայռի հետեւ:

— Զը՞...

— Հիմա, Մանուկ, հիմա...

Ու Ղոնդին ծակում եր քարը: Մեկը վերջացրեց, անցալ մյու-
սին: Հիմա արդեն Մանուկն ել եր անհանդստանում: Գործը
գլուխ եր գալիս, բայց ո՞վ ե իմանում: Հանկարծ վերջին մամեն-
տին...

— Դրի, պատրաստ ե: Վառում եմ, հեռացեք: Մանուկն ու
Արտակը վազեցին ձորակիը, յեկած ճանապարհով:

Ղոնդին պատրույժները վառեց ու մի անդամ նայեց: Լավ
վառվում եյին: Այլևս չեր կարելի սպասել, կարող եր պայթել:
Բայց նա զգում եր մի քաղցր անտարերերություն: Հիմա միւսույն
ե, թող ինքն ել կործանվի կամուրջի հետ:

Գործը կատարված է, հազարավոր կյանքերի գործը, և զը-
խավորն ե՝ Գըդըլի կյանքը զուր չանցավ:

Նա զանդաղ բարձրանալ եր ձորից և չուտ-չուտ հետ նա-
յում: Ահա, հիմա՛, հիմա...

Նա անշուշտ կայթի... Արդեն ձորակին եր, վոր բոցն ու
ծուխը ցայտեցին և ահուի թնդյունը պոռթիաց կամուրջի վրա:
Չորն արձականքեց ու կրկնեց հետուն ու հեռուն: Հետո տիրեց
հաճելի խաղաղություն:

— Հիմա պետք ե լուրը տանե՞լ, — ասաց Մանուկին ու Ար-
տակին սաստիկ անհանդիստ:

Նրանք չհասկացան, թե ինչո՞ւ անհանդստացալ Ղոնդին:

— Դե՛, դեպի սա՞րը, — ուրախ հրամայեց Ղոնդին ու թռավ
առաջ:

— Դե հիմա նամա՛կը, շո՛ւտ... — ասաց Ղոնդին մի նոր,
ավելի տափնապալի մտատանջությամբ: Նրան հիմա պաշարեց
ավելի մեծ յերկուղ, վոր պայթյունից առաջ լալ չեր զգում—
հանկարծ իրեն բան պատահի և լուրը չհացնի հրամանատարին:
Բայց միաժամանակ նա հոգու խորքում շոշափում եր մի այլ
բան... Դա ընկերոջ ուրվականն եր. — Ի՞նչ պիտի աներ Ղոնդին

Եր ընկերոջ հիշատակի առջև՝ յեթե նրա գործը չավարտե՞ր ողբ-
բությամբ:

— Դեսի ոարը, — Հրամայեց նա և թուավ առաջ:

Լեռնային կածաններով կրակ կտրած գնում և Ղոնդին Մա-
նուկի և Արտակի հետ: Նա չեր կարողանում մտքերը կարդի բե-
րել: Կյանքի անիվը դուրս եր թոել ու սլաքքով գլորվում առաջ:

Լուսինը փայլատակում եր յերկնքում: Նրա աչքերը ուռել
ելին և այտերը պայթում և գունատ ու մեռած նայում եր ներքե:

Լեռնալանջը, վորով գնում ելին յերեքը՝ քարքարոտ եր ու
զարուխոս: Բայց ամայի յեր, կարելի յեր անտես անցկենալ: Զե-
յին խոսում: Մտքերը փոթորկում ելին նրանց գլխում: Նրանք
մոտենում ելին վերնաշեն գյուղին, վորի ներքեւ լեռնադաշտում
սեվին եր տալիս անտառի պես: Շուտով նրանք պիտի իջնելին մի
ծոր, վորից այն կողմ լեռնադաշտն եր:

Դարձյալ նույն տակնապալի հապճեպը, դարձյալ նույն ժա-
մանակի սղությունը: Ղոնդին պետք ե մտներ գյուղ, գտներ
Հրամանատարի անլանած Վարդանին և հանձներ նամակը:

Յել հիմա նրա միտքն այրում եր այդ գործի մասը: Կամուր-
ջի հետ կար նաև կարեսը նամակ, վոր պետք ե հասցներ Վար-
դանին: Ի՞նչ եր նշանակում այս: Անշուշտ մի շատ կարեսը քայլ,
մի անհրաժեշտ ողակ կամուրջի պայթեցման գործի հետ:

Գըդի ուրվականը կարծես վազում եր նրա կողքին: Զե՞ր վոր
Ղոնդին սովոր եր ամբողջ կյանքում նրան այդպես տեսնել, իր
կողքին, իր հետ Գըդը ըլինի՞, Գըդը իր հետ ըլինի՞, սա, ամե-
նատարրինակ, անրնական բանն եր Ղոնդիի համար:

Բայց Ղոնդին չեր կարողանում խորանալ այդ իրողության
մեջ— ժամանակ չկար: Ուժն ու յեռանդը պետք եր լարել մի ուղ-
ղությամբ— գործը կատարել մինչեւ վերջը:

Բայց նա անձկում եր, շտապում ավարտելու այն գործը,
վոր մի նստի և իրան հաշիվ տա, թե ի՞նչ եր կատարվածը
Գըդը հետ:

Յել նա շտապում եր, շտապում:

Իջնում եր ձորը: Այստեղ մի նեղ ճանապարհ կա, վորով
գյուղացիները գնում ելին սար: Կարող ե և Հանդիպում տեղի ու-
նենալ: Կրկին յերկուող այն յերիտասարդի համար, վոր յերկուող
չեր իմացել իր կյանքում:

Յել այդ յերկուողը ամենից շատ ի՞ր վերաբերյալ եր: Հան-
կարծ բոնվի... ի՞նչպես պետք ե նամակը հասցնել Վարդանին:
ի հարկե նա կարող եր այդ նամակը հանձնել Մանուկին կամ ան-
դամ Արտակին: Բայց ի՞նչով եր ապահով, վոր նրանք ել չեյին
բոնվի և տեղ չհասցրած չեյին սպանվի: Յել ո՞վ եր ապահով
այդ յերեքից, վո՞րի մոտ սպահվեր նամակը, վոր վստահ լինես թէ
անպատճառ տեղ կհասցնի: Թերեւս ամենից ապահովին ինչն եր
կամ ամենից անապահովը... *

Սակայն հիմա Ղոնդուն պաշարեց մի ավելի մեծ յերկուող,
վոր կամուրջի պայթյունից առաջ լավ չեր զգում— հանկործ ե-
րենց բան պատահի և լուրը չհասցնի հրամանատարին: Հիմա հո-
գու խորքում շոշափում եր մի ավելի մեծ խորվի սկիզբը, վոր
ծավալվում եր, արծարծվում հրդեհի պես, լուսավորում ավելի
տանջալի մտքեր, քան ընկերոջ խոնդիրը: Հիշեց ընկերոջ խոսքե-
րը՝ «դժվար ե աշխատավոր ժողովրդի գործը... այստեղ ինելք ե
պետք, գիտություն»: Բայց Գըդը, ինքը՝ Ղոնդին ժողովրդի
համար դուրս յեկան զոհվելու: Ահա այստեղ ե վոր հազար ու մի
ասեղի ծակով անց ես կենում՝ մինչեւ գործը գլուխ բերելը:

Այսպես մտածելով նա ինչպես յերազում գնում եր և չեր կա-
րողանում կանգ առնել մի մտքի վրա:

Այս մտքերով նա ինչպես յերազում Մանուկի և Արտակի հետ
անցավ ձորը, զնաց դաշտով և ահա վերջապես գյուղը: Նրանք
սահելով փողոցներով ու ստվերների պես հալվեցին տներից մեկի
դուանը:

Կիսախալար սենյակի լուսիթյան մեջ Վարդանը, չոր ու ցա-
մաք ու մոայլ մի քսանամյա յերիտասարդ դանդաղ ու զգույշ
բաց արեց հացի միջուկից նամակը, կարդաց, գրեց գրալանը և
պիսց մտածել:

Ղոնդին արդեն հայտնել եր նրան կամուրջի պայթյունը:
Բայց վոչ մի տպավորություն ըստ յերկուութին:

Մոայլ Վարդանը վոչինչ չասեց Ղոնդուն ու Մանուկին:
Միայն յերբ մտածմունքի ու լուրթյան չափն անցալ՝ նա նո-
ւեց Ղոնդուն և կարծես ուղում եր հայտնել թե հիմա ինչ ե մտա-
գիր անելու: Բայց նա միայն հարցըց:

— Վո՞ր ժամին սլայթեցրիր կամուրջը:

— Ժամը չեմ հիշում:

— Իսկ հաստա՞տ զիտես թե հրետանին չանցավ: Թե՞ այն-
պես...

— Հաստատ:

Վարդանը լոեց յերկար ժամանակ, և հետո վեր կացավ:

— Լավ,— ասաց նա խորը մտածմունքի մեջ ընկած, կարծես
դժվար եր հասկանալը, վոր կամուրջը պայթել ե, վոր հրետանի
չի անցել: Մանուկը լուռ նայեց Վարդանին և ըստ յերևույթին
հասկանալով նրան՝ վոչ մի հարց չտվեց: Հետո Վարդանը դար-
ձավ դեպի Ղոնդին և այս անդամ, առաջին անդամ, նայեց աշ-
քերի մեջ և ասաց.

— Դու կսպասես այստեղ: Պատասխանը կդրենք կտանք քեզ,
վոր տանես: Մանուկի, — դարձավ նա Մանուկին կարդադրողի
Հայացքով և մտացի սրան...

— Հա՛, կտանեմ, — ասաց Մանուկը:

Վարդանը գնաց: Ղոնդին վիրավորված նայեց Վարդանի հե-
տեղից: Ի՞նչ ե լուսմ, ի՞նչ ե թաղցնում իր անելիքը: Յեվ վերջա-
պես ի՞նչ ասել ե իրեն «կթաղցնեն, կտան պատասխանը...»:

Կարծես հասարակ պոստի նամակաբեր լինի ինքը: Իսկ յեթէ
այդ չոր Վարդանը իմանար թե ինչե՞ր և քաշել Ղոնդին այս յեր-
կու դիշեր...

Ուրեմն Ղոնդին չի ել կարող իմանալ թե ինչ եր պարուի
ժիտքը և ինչ են վճռելու այստեղ: Իհարկե չեր կարող և ներկա
լինել այն ժողովին կամ խորհրդակցության, ուր պիտի մշակվեր
պատասխանը:

Նա այդ մտքերի հետ եր, վոր իր առջև դրվեց և հացի
լավաշը:

Սոստի դեղը, ահա նրա անկողինը ժարադի հետեւ: Ու թեև
դա շատ ապահով տեղ եր՝ մի կողմից մարագը, մյուս կողմից
անմիջապես այդին՝ բայց Ղոնդին մեծ տհաճությամբ մտավ մեջը
և յերկար ժամանակ չեր քնում: Միաժամանակ նա գիտեր, վոր
ժարտական կյանքն այդպես ե: Նա զգում եր, վոր Վարդանից չի
կարելի պահանջել մտերմական դրույցներ: Բայց դրա լարված
նյարդերը և այս յերկու որվա ապրումներն այնքան եյին նրան
թափի տվել, վոր նա դառել եր. գյուրազգաց:

Վերջապես բնությունը վակեց նրա աչքերն ու մտածմանը
ների հոսանքը: Նա ընկալ անելության սփոփիչ դիրկը:

Ավելի անտանելի յեր ցերեկը, յերբ Ղոնդին հարկադրված եր
թագնվել խոտի դեղի մեջ ամբողջովին թաղված: Ծոգը, անշար-
ժությունը, անդործությունը տանջում եյին նրան: Յերկարեց,
դանդաղեց որը: Ղոնդին իր «բանտում» խացվում եր քրտնքից
ու միջատներից: Բայց ամենից շատ անորոշ կացությունից: Ի՞նչ
են վորոշում այստեղ, յե՞րբ են վերջացնելու, յե՞րբ պիտի աղատ-
վի այդ տեղից...

Կերակուր բերին իրեն: Դա նույն սեվ հացն եր, միայն մի
քիչ լուսով: Յերեսում եր, վոր գյուղում սով եր: Յեվ նա նկատեց,
վոր շարժում չկար և վոչ ել աղմուկ: Խոտի արանքից նայեց
հեռավոր տների կտուրներին: Մի մոմեղեն պառավ դողդողալով
իջնում եր կտուրից: Նա կմախք եր, կենդանի մեռել: Գոմի կող-
քով որորվելով մի շուն անցավ: Նա կանդ եր առնում, հարբածի
պես նայում և յերբ վորոշում եր շարժվել, տատանվում եր և
քիչ եր մնում վայր ընկներ: Հետո յերկու յերեխա յեկան դոմի
պատի տակ կանգնեցին: Նրանք խաղում եյին, ծիծաղում: Բայց
Ղոնդին նկատեց, վոր նրանք ծիծաղում եյին դիմակի պես, դան-
դաղ և խոսելիս ել բառերը կախ եյին գցում: Նրանք հոգնեցին
կանգնելուց, նստեցին, բայց եղ ել հոգնեցրեց: Նրանք պառկեցին
և քննեցին:

Ահա թե ինչեր կային գյուղում:

Վերջապես մութը հանդարտ բաղուկներն արձակեց գյուղի
վրա: Մանուկը յեկավ և Ղոնդուն ներս տարավ: Սենյակում Վար-
դանն եր և մի քանի յերիտասարդներ, վոր ըստ յերեւյթին
գյուղում չեյին անցկացնում իրենց որը և գիշերաշրջիկ կյանք
եյին վարում մոտակա լեռներում:

Յերիտասարդների ներկայությունը զարմացրեց Ղոնդիին:

Այդ ի՞նչպես եր այդքան լուակյաց ու գաղտնապահ Վարդանը
նրանց բերել Մանուկի սենյակը իր տեսակցության: Նրանք
վոկեորված յերիտասարդներ եյին և արելառ ու կմախքացած
գեմքերը պատկերացում եյին տալիս նրանց չարքաշ դաժան
կյանքին:

Բայց Ղոնդին մի փոքր անց հասկացավ Վարդանի մանյովը:

Սա յերիտասարդներին բերել եր ցույց տալու Փրոնտից յեկած ժարդուն, նրանց վոգին բարձրացնելու համար:

Վարդանը հանդիսաւ և մոռայլ լուռէթյամբ ընդունեց Ղոնդուն և յերբ սա ներս մտավ՝ դարձյալ յերկար ժամանակ լուռ եր:

— Հիմա այսպես եւ ասաց Վարդանը, — ընկերները քեզ կտանեն բոլորովին անծանոթ ճանապարհով և յերբ կհասնեք վորոշեղ, — նրանք գիտեն այդ տեղը — դու մենակ կդնաս: Ընդհանրապես մեր գրությունը — ավելացրեց Վարդանը և ժաղիտի պես մի բան խաղաց նրա աչքերում, — լարված եւ: Սպասում ենք անհամբեր:

Ղոնդին սպասում եր մանրամասն զրույցի, սպասում եր, վոր Վարդանը հայտնի իրենց անելիքի մասին:

Բայց նա իր մոռայլ ու կարծես տիսուր շարժումներով վեր կացավ տեղից և կարդագրեց.

— Դե, հիմի ճանապարհ ընկեք:

Այսքանը միայն:

— Ի՞նչպես եւ գյուղերի վիճակը, — հարցրեց Ղոնդին:

— Վոչինչ, վոչինչ, կանենք, լա՛վ եւ, — վրա տվեց Վարդանը և դարձավ յերիտասարդներին.

— Դե դուք առաջ ընկեք:

Յերիտասարդները մեկ-մեկ հեռացան: Մնաց մեկը նրանցից, վոր պիտի գնար Ղոնդու հետ: Վարդանը նրա մոտ հանեց մի խմորի կտոր և տվեց Ղոնդուն.

— Ահա, սա եւ... նամակը: Կտանես նույն ձեռով ընկ. Դավթյանին: Փետք եւ շուտ հասցնել, ժամանակ չկա, դյուղերում կարող են անախորժ դեպքեր տեղի ունենալ: Վտանդ, «բան» պատահելիս նամակը կտաք մեկ-մեկու և տեղ կհասցնեք: Դե, դուք եւ ճանապարհ ընկեք: Գնաք բարով:

— Մնաք բարով, — ասաց Ղոնդին և ձեռքը մեկնեց Վարդանին:

Սա սեղմեց Ղոնդու ձեռքը և թափահարեց ուժեղ ու սրտալի:

— Դե, քեզ տեսնեմ, ընկեր ջան, զգո՛ւշ և արա՛դ...

Վարդանի մոռայլ աչքերի մեջ մի ջերմ շող վառվեց: Նրա դեմքի վրա խաղաց հոգսերի, մտատանջության և դործի կամքի այնպիսի մի հյուսվածք, վորով ավելի շատ բան պարզվեց Ղոնդու համար, թե գյուղերում ինչ վիճակ եր, քան յեթե Վարդանը պատմեր:

Ղոնդին դուրս գնաց յերիտասարդի հետ:

— Այդու միջով, Պետրոս, — կամաց հրահանդեց Վարդանը և ինքը հեռացավ:

Ղոնդին դուրս յեկավ Պետրոսի հետ: Այդու ծայրին սպասում եր Մանուկը: Նրանք գնացին դեպի լեռները, վոր կողմով և գնացել ելին մյուսները:

— Ի՞նչ կա գյուղում, — հարցրեց Ղոնդին Պետրոսին:

— Գյուղում ի՞նչ կա, տնաշեն, — ի՞նչ չկա... հառաչեց Պետրոսը և քրտինքը սրբեց: Նա նիհարած եր և ըստ յերեսութիւն գրկանքներից ուժասպառ:

Գիշերային խավարի մեջ հետզհետե միացան մյուսները և խումբը գնաց դեպի լեռնային առավարները:

Ամբողջ գիշեր գնում եյին և լրանիստ լեռան լանջերը կլանում եյին յերիտասարդների հեվոցները: Նոր եր լուսաստղը հալած վոսկու պես պլազում, վոր խումբը կանգ առավ:

Առաջ յեկավ Մանուկը և ձեռքը մեկնելով մի մոայլ ձոր՝ Ղոնդուն ցույց տվեց նրա հետագա ճանապարհը.

— Ահա են ձորից, վոր դուրս գաս քերծի գլուխը՝ ենսեղից կմտնես քո եկած ճամբան:

Ղոնդին գլխարկն հանեց և թափահարեց ողի մեջ:

— Մնաք բարով, ընկերներ:

— Բարի ճանապարհ, — պատասխանեցին նրանք, — շուտ յեկեք:

— Շուտ կդանք, — ասաց Ղոնդին և ուժով իրան գցեց քարաշեղջի վրա: Քարերը աղմուկով թափվեցին, նրա վոտը խրվեց նրանց մեջ ու սահեց վայր:

Շուտով նա ստվերի պես կորալ գիշերվա մեծ ստվերի մեջ:

— Շատ գեղեցիկ:

Յեկ Դավթյանը, կարմիր հրամանատարը, վայր գրեց սեղանին ճմրթած նամակը: Կարծես չեր նկատում Ղոնդուն, վոր կանդնած եր սեղանի մոտ և լուռ ու խոռվահույզ նայում եր Դավթյանին:

— Շատ գեղեցիկ:

Լոռիթյունը կլանեց այդ խոսքը ևս: Դավթյանն սկսեց մտախօս նայել պլատոր պատուհանից դուրս, ուր գիշերը լցվել եր սկ

մրի պեռ: Ի՞նչ եղ մտածում նա... Շրթունքները սուլելու նման կծկեց նա և առանց սուլելու անձայն վշեց չրթունքներով, նայեց դեռ ու դեն, նամակին, քարտեղին: Մի պահ հայացքն ուղղեց կոնդում:

Յերկուսի հայացքներն հանդիպեցին իրար: Դավթյանը չափեց Ղոնդուն վլոտից գլուխ, կարծես առաջին անգամն եր տեսնում նրան: Ղոնդին այլայլված սպասեց վոր Դավթյանը խոսի: Ցոցվեց: Բայց Դավթյանը սաստիկ լարված եր իր մտքերով: Նա միայն մեքենաբար դարձյալ կրկնեց առանց կապելու իր միտքը Ղոնդու, նրա բերած նամակի հետ:

— Շատ գեղեցիկ:

Հետո կիսաձայն: —

— Հիմնովի՞ն պայթեց կամուրջը:

— Ամբողջ կամուրջը թափվեց ձորը, ընկեր հրամանատար:

— Հրետանին անցե՞լ ե այս կողմ:

— Վոչ, ընկեր հրամանատար:

— Սառույզ գիտես, թե յինթաղը ում:

— Ստուգի տեղում:

— Լա՛վ, դա կսուղենք:

Ու կրկին վերցրեց նամակը: Զեր կարդում, պարզ եր, մտածում եր: Հանկարծ վեր նայեց, նայեց Ղոնդուն և արթնացածք պես.

— Հա, ընկե՞րդ ուր ե:

Ղոնդին գլուխը կախեց:

— Սպանվե՞ց:

— Սպանվեց...

Դավթյանը չխոսեց: Մի փոքր անց միայն, կարծես ինքն իրեն՝ շշնջաց.

— Ամեն բան կպատահէ: Հետո՝ բարձր: — Վորտե՞ղ սպանվեց:

Ղոնդին դժվարությամբ շունչ քաշեց և սկսեց.

— Դեպքն այսպես պատահեց, ընկեր հրամանատար... սկսեց հուզմունքից ծանր հելվալով Ղոնդին:

Ներս մտան Ավետն ու Ռուբենը:

Նրանք բարձր տրամադրության մեջ ելին:

— Ահա և նա, — ուրախ բացականչեց Ավետը՝ նայելով Դավ-

դուն, — պատմեցի՞ր ընկեր հրամանատարին: — Մոտեցավ Դավթյանին և մոտ նստեց նրան: Լավ նեղն եք ընկած յեղել, մեր տղա: Ե, ի՞նչ, ուրիշ հնար չկար յերեկի:

Հանկարծ չուռ յեկավ դեպի Դավթյանը և կռանալով նրա գեմքին հարցրեց. հետաքըքի՞ր նամակ ե: Ի՞նչ ե դրում վարդանը:

Նրանք սկսեցին անլսելի ձայնով փսփսալ: Խոսեցին մի պահ և հանկարծ յերկուսն ել շեշտ նայեցին Ղոնդուն:

— Այսպես և յեղել, — մռայլեց Դավթյանը և լարվեց, — հետո, ձեզանից վո՞րը կամեցավ առաջինը իրան գոհել:

— Նա... ծանր և ցածր ձայնով ասաց Ղոնդին և զգաց վոր ամենածանը վայրկյանը հասավ:

— Դու չառաջարկեցի՞ր վոր նա քեզ խփի...

— Վոչ...

Լոռությունը բռնեց Ղոնդիի կոկորդից և սեղմեց: Դավթյանը, Ավետը և Ռուբենը ծանր նայեցին Ղոնդուն, վոր դատապարտվածի պես նայում եր գետնին:

— Հա՛, շա՞տ ես տխրում, — հարցրեց Ավետը ժպտալով մեղմ:

Ղոնդին հազար, կամենալով մաքրել կոկորդի ջղաձգությունը: —

— Ընկեր կոմիսար... յես շատ դժբախտ եմ... վոր յես չեղագոհը, և թույլ տվի վոր ընկերս գոհվեր... Յես նրան ծանր խոսք ասեցի... Զեյի սպասում թե նա...

Զվերջացրեց, դժվար եր:

— Վոչինչ, ասաց Ավետը, յերբեմն կյանքն ե պետք, յերբեմն մահը, և այդ ամենը վերջիվերջո գնում լցվում ե այն մեծ գործի մեջ, վորի համար պայքարում ենք մենք: Հարգենք ընկերոջդ:

Հետո գործնականը:

— Շա՞տ լավ, աղա՛տ ես, — ասաց Դավթյանը և նստեց վառելով ծխախոսուր:

Ղոնդին դուրս յեկավ և գնաց այն տունը, վորի սենյակներից մեկում նա և Գրդալը ապրել ելին յերկու շաբաթ: Յերբ ներս ժտավ աչքը տնկեց այն մահճակալին, վորի վրա քնում եր Գրդալը: Նրա վրա փոքրիկ կապոց եր դրած, վորի մեջ կապած եր Գրդալի զինվորական բլուզը, խակի բլուզը, վոր նա ձեռք եր գցել ով դիտե վորտեղից:

Ղոնդին քանդեց կապոցը, վերցրեց բլուզը, հոռ քաշեց, բաց
արեց և բլուզի թևերը պարզած, բոնեց ողում: Գլուխը, իր սի-
րելի գլուխը կանգնած իր դեմ, թևերը պարզած, կաթվածահար
թևերը: Այդպես կաթվածահարի պես Գլուխը թևերը պարզեց ո-
դում և ընկավ գետին այն սարսափելի գիշերը:

Ղոնդին դրկեց բլուզը, փաթաթեց նրա թևերը իր գեմքին և
այդպես տխուր մնաց մինչև լույս:

Փողերը հնչեցին: Գունդը գնում ե...

ԵՃԵԼՈՆԸ

Նրա վորդին՝ Նիկոլը՝ 1920 թվեց դեմք չկար, չեր յերկում:
—Կա, մենակ ճամրաները վոր կարված են, դրա համար
լուր չկա:

Ուրիշ ի՞նչ կարելի յեր ասել մի խեղճ մոր, վորի միակ վոր-
դին գնացել ե պատերազմ, հինգ տարի յե չի յերկում:

Մայրը հանգիստ չունի այն որից, յերբ իր Նիկոլին տարան,
այդ խեղճ ու կրակ ատաղձագործին, վոր մինչև վերջին որը ու-
րագը ձեռին, վոտի վրա գործ եր անում՝ կարկատելով պստիկ
խանութներ, նեղլիկ դռներ, աթոռ, սեղան...

Նրա կերպարանքը դեռ յերևակայության մեջ տպված է. Նի-
կար, նրբակազմ մի տղա, թախծալի, մտերիմ ժպիտն աչքերի
մեջ: Յեկ անխո՛ս: Միայն կժպտար: Բան ասելիս ել մեղմ,
անլսելի:

Նրանից վոչ մի գանդատավոր չի յեղել քաղաքում: Այդ դա-
վառական քաղաքի չքավոր ծայրամասերը շատ լավ եյին ճանա-
չում բարի Նիկոլին: Տուն չի յեղել, վորին մի բանով ողնած ը-
լիներ. գուռ եր կոտրած լինում, պատուհանի փեղկ, որորոցի
վոտ՝ յեթե չքավոր տեղ եր՝ Նիկոլը մի արանք կդաներ, կդար
ձրի կշիներ:

— Նիկո՛լ, արի՛, հացը գցեցի:
Վեր կկենար ու ներսը մոր հետ կնոտեր համեստ ընթրիքի:
Մայրը կխոսեր, կպատմեր, կբացատրեր՝ Նիկոլն ականջ
կդներ:

Զեր խոսի: Միայն մեղմ կժպտար:
Ահա այդ Նիկոլին եր, վոր տարան պատերազմ, ու կորալ:
Մնաց մայրն ու պստիկ տնակը—դատարկ լուցկու մի տուփ՝
մի գուռ, մի պատուհան, յերկաթուղու կայարանի մոտ:

Մայրը չեր իմանում թե ում դիմի, ումնից տեղեկություն
ստանա իր վորդուց: Հարցրել եր քահանային, ծանոթ խանութ-
պանների, կայարանում մեքենավարներին, դպրոցի ուսուցչին:
Ասել, բացատրել եյին անորոշ բաներ—միտքը չի մնացել: Չէ
հասկացել: Յեվ հիմա ի՞նչ պիտի անի, այդ ել չդիտե: Իհարկե
ամենքին խոսեցնում ե, վոր մի նշան, մի հնար յերև:

— Հիմի, տիկին, —ասաց մի գրադիր, դրա պուավիլան եսպես
ե: Դու պիտի գտնես տղայիդ չաստը, թե վոր դիվիզիան, վոր
պոլկն ե յեղել: Մի զայավլենի կտաս վոյենաչալնիկին...

Շատ բարդ ե...

Յեվ մայրը տխուր նայում ե գետնին և գլուխը ցնցում:

Մի միլիցիոներ ել այսպես բացատրեց.

— Եսպես ե, մե՛րս: Եդ զորամասը Ղարսից քաշվել յեկել է
Լենինական, ու ենտեղից կամ Ղարաբիլսա յէ անցել կամ Յերե-
վան: Քո տղեդ ել հետները յեկած կլինի:

— Հա՞, յեկա՞ծ կլինի:

Ու մայրը հրահրվում ե մի գաղտնի հույսով:

— Հա, թե վոր յեկած լինի, եղտեղերք յեկած կլինի:

Հարեւան կանայք ել վրա յեն բերում.

— Ուր ե, ուր չե՝ վե՛րջը-վե՛րջը կերեվա: Յերևի ճամբա չկա-
յաց անցնում են որեր, իրար վրա գարսկում, դառնում ա-

միսներ, ամիսները դառնում տարի...

Միշտ միենույն բանը—վոչինչ չի փոխվում այն բանից, վոր
Նիկոլը չկա:

Ու հարեւան կանայք դադարում են նրա մասին խոսելուց:

Նա ել չի խոսում:

Հասկանալի բաներ կան, վոր յեթե խոսվեն, դառնում են ան-
հասկանալի:

Ու տեսնելով խեղճ կնոջ իրարանցումը, կայարան գնալ-գալը,
հարց ու փորձը, հարեւանուհիներից մինը մի որ նկատեց.

— Մե՛րս, եղպես գնալով զալով մի բան դուրս գա՞ վոր.—
— Հա՞... Համա ո՞վ պիտե...

Ցույց ե տալիս, վոր հույսը կորցրել ե, բայց իր մեջ չի կոտ-
րում, ընդհակառակը շոյում, մեծացնում ե այդ հույսը:

Ու յերբ կայարանից կամ ուրիշ փողոցներից վերադառնում ե

տուն՝ կը ակ ե անում, կերակուր դնում վրան, նստում կողքին,
գուշակ գործում. և սպասում նիկոլին:

Սյուպես լավ ե: Ա՛յ, ամեն ինչ պատրաստ ե: Ուրիշ ել ի՞նչ ե
ժնում վոր իր տղան գա տուն:

իհարկե վոչինչ:

Գնացքները գիշեր-ցերեկ զղբդալով գալիս անցնում են փոք-
րիկ տնակի առջևով: Ամեն ազդի, սեռի ճամբորդներ վժժում են
վագոնների պատուհանների մոտ:

Մայրը նստում ե դռանը, պաղ քարին ու մտիկ ե տալիս գը-
նացքներին՝ աչքերը լի մշուշով ու թախիծով:

Վագոններից մարդիկ են դուրս գալիս:

— Հը՞, են մեկը, Նիկոլը չե՞...

Սիրաը թթուում ե, գուշակ վայր ե դնում ու շտապում կտ-
յարան:

Ճամբորդների աղմկահույզ ամբոխը մի կարճ ժամանակ իրաբ
ե անցնում, գոռում, վաղվզում ու նորից շողեմեքենան սուլում
ե, նորից կայարանը դատարկվում...

Մայրը հառաչում ե, մի քիչ ել կանգնում, նայում գնացքի
յետեից, ապա դառնում տուն: Նա չի հուսահատվում: Ճամբին
քաղցրացնում ե յերեւակայությունը—ե դա արդեն սովորություն
ե դառել—յերազում ե, վոր իր վորդին քաղաքի ուրիշ ճամբով ե
յեկել տուն:

Հեռվից նայում ե՝ արդյոք դռան մոտ մեկը չե՞ կանգնել՝
իրան սպասում:

— Ներս մտած լինե՞ր...

Բաց ե անում դուռը.

— Նիկոլ...

Վոչ վոք: Մենյակը դատարկ ե, ինչպես միշտ:

Դե նա գիտե՞ այդ: Բայց արդ ամենը նրա ամենորյա զրազ-
ձունքն ե, գործն ե, վորով լցնում ե նա իր գոյությունը:

Մայիսի վերջերին եր: Դաշտերը ժամանում եյին իրենց կանաչ
աչքերով:

Ինչ վոր ձայներ հեռվից կանչում եյին ո՛ւմ վոր, չես իմա-
նում ինչո՛ւ:

Մի կարմիր բանակային եշելոն եր յեկել կայարան ե հանդըս-

աանում թե հերթի յեր սպասում, վոր ճամբան շարունակի դեպի լագեր:

Նիկոլի մայրը՝ հնազանդ իր սվորության՝ քայլելու ուղղեց դեպի կայարան, գետի անսովոր աղմուկը:

Եշելոնն իր ձիերով, խոտերով, յերիտասարդ ձայներով կայարանից քիչ հեռու տարածության մեջ ժամանակալոր կյանք եր սկսել: Հարյուրավոր շիկահեր ու սյալ գլուխներ եյին վժվժում վագոնների շուրջը: Մատաղահաս կարմիր բանակայինները ծիծաղում, իրար բոթում, իրար գլխի բամփում, հրհուում եյին: Վոմանք գործ եյին անում:

Ահա մի սևաչյա կարմիր բանակային քրտինքը թուխ այտերից կաթեցնելով դույլը ձեռին գնում եր ջրմուղից ջուր տանելու:

Նիկոլի մայրը կանդնեցրեց նրան. — Տղա՛ ջան, կեցի քեզի բանը հարցնեմ:

Կարմիր զինվորը կանգ առավ, բայց անհամբեր ու շտապով հարցրեց.

— Ի՞նչ կա: — Ոտա՛ցդ մեռնիմ, ախր մեր Նիկոլը... Նիկոլն եսուղ չե՞:

— Նիկո՞լը, աղջին ի՞նչ ե: — Ա՞զդը: Ազդը Խաչատուրյանց ե:

Կարմիր զինվորը մտածեց մի քիչ. — Խաչատուրյա՞նց: Վո՞ր վաշտն ե:

— Զիտեմ: — Խաչատուրյա՞նց:

Ու դարձավ գեմից յեկող մի ուրիշ կարմիր զինվորի. — Սեթո՛: Խաչատրյանց ո՞վ կա զնդում:

Ուրիշները վրա յեկան. — Ո՞ւմ ե հարցնում: Խաչատրյա՞նց: Նիկո՞լ:

Կարմիր բանակայինները յեկան ըրջապատեցին: Ու մտածում են.

— Ո՞վ պիտի լինի: — Սեթոն հարցրեց.

— Վաշտը չգիտե՞ս:

— Ի՞նչ գիտնամ, վո՞չ ճար գիտեմ, վո՞չ ճամբա: Անունը Նիկոլ ե, Խաչատուրյանց, կոնսիստորի թղթի մեջ Ղարիբյանց—Խաչատուրյանց ե:

70

— Տղե՛րք, — դարձավ Սեթոն դեպի վագոնները, — Նիկոլ Խաչատուրյանց վո՞ր վաշտում կլինի:

Մի լուրջ, դունատ դեմք դուրս նայեց վագոնից. — Խաչատուրյանց յես եմ, ո՞վ ե հարցնողը:

Կինն աչքը սեռուց այն կողմը և վախեցած նայեց. — Զե՞ր, այն չե, — խոսեց ինքն իրան կոտրված: Առաջուց գիտեր թեւ, բայց ելի հույս ուներ: Ո՞վ գիտե, դուցե...

— Գնդի մեջ ուրիշ Խաչատրյանց չկա, — ասաց Սեթոն սերտը կոտրած մորը: Եղակես ե չե՞ր, տղե՛րք:

Կարմիր բանակայինները գլուխները կասկածով թե բացասարար շարժեցին.

— Զե՞ր, չկա: Ու լուցին:

Գունատ կարմիր-բանակայինը վայր իջավ վագոնից ու մուեցավ կնոջը.

— Յե՞րբ ե ծառայության մտել: — Հինգ տարի կա:

— Հինգ տարի՞... եղ ասել ե՝ հին բանակումն ե յեղել: Ո՞ւր ե դնացել:

— Դարսա կողմերը: Կարմիր բանակայինները հազիվ զսպելով իրենց ծիծաղը ժպտացին:

— Ե, ի՞նչ ենեմ, հինգ տարի յե կսպասեմ, կսպասեմ թե կերևա հա կերևա, հե՛չ չի յերևա:

— Թիֆլիս, Բաղու, Յերևան հարցրե՞լ ես—ասաց գունատ կարմիր-բանակայինը:

— Ե՞՛չ:

— Ու հինգ տարի յե սպասում ես թե վորդիդ գա տո՞ւն... Մայրը ըրթունքները ծոմուց ու սկսեց հեկեկալ:

Կարմիր բանակայինները ժպտալով մտիկ տվին և չեյին իմանում ի՞նչ անեն:

Մի ուրիշ կարմիր բանակային մոտեցավ ու կլոր յերեսն ընկերների ուսերի արանքով կաս-կարմիր գնդի պես ներս խոթելով՝ խղեց լուսթյունը:

— Հա՛, ի՞նչ կա: Բացատրեցին:

— Իի՞ի... Տղեղ մեռած կըլի, մե՛րս, զուր մի՛ սպասիր: Տղեղ
ել վերջացավ, են բանակն ել, են հին բանակ եր... Հիմի նոր բա-
նակ ե:

— Կարո՛, — աչքով արին մյուսները:

— Զա՛նըմ, թող լա, սիրտը իջնի: Հասկա ի՞նչ: Մեռա՛վ՝ մե-
ռավ: Սաղ ըլիմ յե՛ս:

Մեթոն հրհուաց ու բոռւնցքով խիեց Կարոյի մեջքին.

— Հա՛յ սատկիս դու:

— Խա՛չ: Սաղ ըլինք յես, դու, մենք:

Կարմիր բանակայինները բարձր ծիծաղեցին:

Իսկ կինը լաց եր լինում:

Մի ծանր քար, վոր ահա հինգ տարի յե նստած եր նրա սրտի
վրա՝ շուռ յեկավ հիմա: Յեվ յեթե նա բաց արեց իր վորդու գե-
րեղմանը, բայց մյուս կողմից ել «նա» ընկավ նրա սրտից, հեռա-
ցավ: Աշխարքը դառավ մի դատարկ բան, չքացավ ինքն ել, ու
թեթևացավ.

— Ել ի՞նչս մնաց...

— Ի՞նչը, մնաց աշխարքը:

Կարմիր բանակայինները նորից հրհուացին:

Դունատ կարմիր բանակայինը, վոր կարեկցությամբ նայում
եր կնոջը՝ մեղմեց մի փոքր:

— Մի՛ նեղանա, մայրիկ, հանաք ե անում: Քո վորդին գնաց,
մենք ել քո վորդիքն ենք:

— Եղ ել դրուստ ե, — ծիծաղեց Կարոն, — մեկը չըլի հաղարը
ըլի: Այ տես—ու Կարոն գդակը հանելով բամփից բոլորի գլխին—
սրանց գլուխը թաղեմ, սրանք բոլորն ել քո վորդիքն են:

Կինը աչքերը սրբեց ու հառաչեց.

— Հըլպը՛թ որ... սաղ ըլիք դուք:

— Հեչ դարդ մի՛ անի, մե՛րս, — կատակեց Կարոն—մի բան
վոր պատահի՝ այ եսպիս հուպ կտանք: Յեվ հուպ տվեց Մեթոյի
վիզը:

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, տո՛, կամա՛ց— ծվաց Մեթոն ու վիզն
աղատելով ընկավ փախչող Կարոյի հետեւից:

Կարմիր բանակայինները ծիծաղելով նայեցին նրանց կողմը:
Մեթոն հասավ ու բռնեց Կարոյին: Սա շուռ յեկավ ու սկսեց
պաշտպանվել: Սկսվեց կոխը: Բոլորը շրջապատեցին նրանց և
կնոջից հեռացան:

Մա նայեց նրանց և մի անասելի հաճույք զդաց, մոր հաճույքը
խայտացող յերեխաների առջև: Յեվ մի անդամ ել գորովանքով
դիտեց նրանց ու հառաչեց:

Ապա վերադարձավ տուն: Մոտենալով տանը, բաց չարեց
դուռը, ներս չմտավ:

Այստեղ այլևս վոչ վոք չկար: Նիկոլն այստեղ չեր այլևս:
Մութն ընկնում եր: Զայները լուցին: Միայն գեռ լսվում եր
կարմիր բանակայինների անհոգ, յերիտասարդ աղմուկն ու
յերգը:

ԿՐԱՍՆԱՐՄԵՅՑԸ

— Բոնած գործերին մտիկ...

Ռւ Դային դուռը չըխկացնելով հյուրանոցի կորիորից գուրոյնկավ դուռը:

Զարացած ե, պապիրոս ե վոլորում:

— Ի՞նչ ե պատահել, Դայի:

Աչքերը պսպղացրեց.

— Այչի, կրասնարմեյց չղառավ՝ խաթա դառավ դլիմներիս:

— Սոկրատ:

— Պա ել հո՞վ: Պերան ես գաստինիցեն, վոր պոլ սրբի՝ գըլիս խաղեյին դառավ: Վեր ա կացել թե ծառայողին ութը սահամաթից ավել իրավունք չունես պահացնելու: Սայուզին իմաց կտամ:

Հա՛ նավթը ավել ա գնում, փետը շատ վառեցիք, լամպչկեքը փըշացնում եք: Խե՞,, Գլխիս նաչա՞լնիկ ես թե ջանդար: Այշի պոր սրբող ես՝ պոլդ սրբի: Ես պոլիտիկի խաբարներումը դու ի՞նչ պեն ունես:

— Լավ, հիմի ի՞նչ եր ասում:

— Պրիկազներից ա խաբար տալիս: «Մարտիրոսին խե՞ յես քու տան գործով բազար զարկել. սայուզի իրավունք չի: (Հառաչում ե) «Կիլոխը» մեռնի Դայիի, պա մունք վո՞նց ենք արել: Մառայողը վոր ութը սահաթ գործ անի՝ գործ շուր կդա՞: Մառայող ե՝ ջանը դուրս դա պիտի բանի 10 սահաթ, 12 սահաթ, 15 սահաթ...»

— Խորհրդային իշխանություն ե, Դայի, ուրիշ կերպ անկարելի յե:

— Հա՛, գիտում ենք, խորհուրդային իշխանություն ա, համա բանի մեջ բան կա...

Բայց սրան բոլորովին համաձայն չե Սոկրատը, վոր հյուրանոց ե մտել «պոլ» սրբելու և կերակուր մատուցելու: Գործը՝ գործ, բայց իր զինվորական սովորությունները հեչ չի մոռանում:

Նախկին կծու «կրասնոարմեյց» ե: Մասնակցել ե քաղաքացիական կոխներին և բանակը մի տարի յե, վոր թողել ե: Հիմքաղաքացի Սոկրատ ե հյուրանոցում:

Խստակյաց ե, կատարյալ փուշ: Աչքն ամեն բանի վրա յե: Ամեն բանի վրա խոսում ե: «Նա չայ» մի առնեք, աղջիկների յետեկից մտիկ մի տաք, լրագիր կարդացեք, դասախոսություն գընացեք, պրոֆմիության շահերը պաշտպանեցեք: Մի բոպե ավել աշխատեցիր, մի տառ շեղվեցիր՝ պրծա՛վ: Դաղում ե: Բայց ամենից շատ ընկած ե Դայու յետեկից, վորը նախկին հյուրանոցտեր ե, հիմի հասարակ ծառայող:

— Սոկրատ, ի՞նչ ե պատահել:

— Քչել պիտի տամ:

— Ո՞ւմ, ա՛յ տղա:

— Ա՛յ, եղ բանվորագյուղացիական թշնամուն:

— Ինչո՞ւ:

— Ելեմենտ ա, կոնտրեոլյուցիա յա անում:

— Կոնտրեոլյուցիա:

— Բա՞ս: Հենց եսոր: Մառայողների հետ կոլեկտիվ ժողով սարքեցի: Ասում ա եղ թողեք, պոյեզդի վախտ ա, պասաջիր կդա: Այշի, գալում ա՝ դա: Նոմեր չի՞ ուղածը: Կտանք: Մենք մեր գործը գիտում ենք: Սա ջոկ, նա ջոկ: Ամա դու չես իմանում: Նրա միտքը ուրիշ ա: Ուզում ա նվաճողական դործ բռնի: Կապիտալիստական աչքը Խորհրդային իշխանության վրա յա: Եղպես ա անում, վոր բանվորագյուղացիական Փրոնտը թուլացնի:

Ռւ ահռելի բաշը թափ ե տալիս.

— Ամա աչքը հանելու յեմ: Կթողամ վոր բանդիտիդմ անի՞: Ենդո՞ւր համար եմ ակուխների մեջ քաղաքացիական պատերազմ տվել, վոր սա եսպես սարստած բաներ սարքի՞: Դուրս եմ գցել ամլու եղ ուժիմին:

Իսկապես «խաթա»:

Բանակումը ե գնում, պրոֆմիություն, դասախոսություն, կինոյից ե խոսում, բուրժուաներից, բանվորներից:

Անցյալ որն ել թատրոն եր գնացել:

Դային բերանը ծռմռում ե.

— Մին հարցնողը ըլի, սրա հի՞նչ պենն ա թեատրը, յա կի՞նոն ու կլուբը... Այժի դու մելիք-կնյազի թո՞ոն ես, նամեսնի՞կ ես հի՞նչ ես: Չոլի արջ, բաց թողնես՝ զնա սարիցը քար թու անի:

— Սոկրա՞տ, ուրիշ ի՞նչ կա, ի՞նչ չկա:

— Իսկի: Լիկվիդացիա յեմ անում: Են ա բոլոր գրերը գիտեմ, մնացել ե մի երկու հատ:

Վո՞րտեղից եր սովորել: Ի՞նչքան ժամանակ, բայց շուտով արդեն գիշերները ժամի 11-ին, 12-ին, սանդուղքից բարձրանալիս լսում եյի Սոկրատի ձայնը:

— Աաանդի...ական պարլամենտում... ոսողային ժի՞նիստը Սամվել Հորնը...

— Սողոմոն իմաստունից անցկացար,—մրթմրթում եր Դային,—կազեթ կարթացողիս մտիկ, ողբիփիսոր ե զառել գլխիս: Կա՞յ դու...

Բայց Սոկրատի պետքը չի: Աշխարք դրստելու հետ ե: Դուռն ել վոր դուրս ե գալիս՝ վայ թե պահակ զնացող մի նորավարժ կարմիր բանակային տեսնի:

— Ի՞նչ ես քոստքոստացնում, լա՞վ վոտն արա, մե՛կ, յերկու... Ղամարլուի Փրոնտում պիտի ըլեյիր, վոր քոստքոստոցույց տայի քեզ...

Նորավարժը ժպտում ե ու անցնում:

Ու «խաթան» շվշվացնելով ներս ե մտնում: Դային առաջն ե յելնում.

— Հը՞ , ամանները սրբեցի՞ր:

— Սրբած ա... ու շվացնում ե:

— Դե հիմի վերևի պոլերն ավլի:

— Ավլած ա... ու շվացնում ե, գնալով իր բանին:

— Լիրը,—մրթմրթում ե Դային նրա յետեկից ու ձեռները քամակին «տերողորմյան» քաշելով գնում դուրս՝ սիրտը թեթևացնելու:

Բայց խաթան հանդիսում չե: Մի շաբաթ ե ինչ վոր կոացել ե մի թղթի վրա: Ճկում ե, տնքում: Բան ե գրում կարծես:

— Սոկրատ, ի՞նչ բանի յես:

— Զեկուցում ա: Պրոֆմիությանն եմ տալու, վոր մեր հյուրանոցի աշխատավլորության շահերը պաշտպանի:

Մի շաբաթ ե, վոր Դային ել չի խոսում: Դեղնել ե, շրթունքները գողում են: Նկատողություն ե ստացել «վերեկից» թե «Մարտիրոսին չի կարելի մասնավոր գործով շուկա ուղարկել և ուժամից ավելի աշխատեցնել»:

ՅԵՐԵՔԸ

Յերկինքն այնպես եւ լուսավոր ու բարձր, վոր կարծես բարձրացել ես աշխարքի կտուրը և այնտեղից ես մտիկ տալիս նրա անհունությանը: Արարատյան դաշտի ջուրչը լեռները արծվենի թերը լայն բացած ջուրջար են ճախրում յեթերքում: Մինչ դիմացը յերկու Մասիսները արծաթե սաղավարտները գլխներին կանգնել արևելքի դարբասի առաջ՝ անքթիթ մտիկ են տալիս հեռավոր աշխարհների կողմը:

Հուլիսը կրակում եւ:

Նստած ե Սյոման, —սահմանապահ զորամասի հրամկաղմից մի ջլուտ յերիտասարդ, —իր հողե տնակի դռան, մեջքը տվել պատին, պղտոր աչքերով մտիկ ե տալիս դիմացը: Այստեղ փլիւսծ ափերի հոնքերի տակից պսպղում են Արաքսի գիլական աչքերի ճերմակուցները:

Իրենից քիչ հեռու յերկար հողե պարիսպներ են, վորոնց մեջ չոռում են ցից-տնակներ, այգեպանների գիշերային ապաստանները: Գյուղի բնակիչները ցրված են այդ այգիների ու բոստանների անկյունները, և մեջտեղ մարդ չի յերեւում: Սյոման անծանոթ ե նրանց լեզվին, նիստ ու կացին: Դրանք թուրքեր են և հայեր, վոր միայն մի վորեկ քաղաքական տոնախմբության ժամանակ յերեւում են գյուղի փոքրիկ հրապարակում: Այստեղ ե հավաքվում նաև սահմանապահ զորամասը, ողը լցվում է անհասկանալի բարբառների աղմուկով, վոր իր իմաստով հասկանալի յեռուս, թուրք և հայ բազմության համար: Սյոման խանդավուն ե ասում, վորի լեզուն շատ ել չեն հասկանում, բայց բոլորը ծափահարում են, հավանության ուռաներով թնդացնում ողը, այնուհետև զորամասը հավաքվում է ակումբում, ուր Մաքսիմը, Սյոման և յերրորդ սրանց ընկերը՝ Միտյան խոսում են կարմիր բանակայինների հետ:

Ապա որն անցնում ե և գալիս ել լի որը իր գործնական, բազմազրադ հարցերով: Զորամասը, վերևից յեկած թղթերը, մաքսանենդները, ակումբային գործերը, կուսակցական ժողովները, բջիջը, կուեկտիվը—սրանք լցնում են Սյոմայի կյանքը: Բայց հենց մի բոպե գաղաք է առնում այս ամենը և նա նստում է Արաքսամերձ անապատի շամբերում, իր տնակի առջև, ձանձրույթը մոտենում ե և կատվի պես քավում նրան:

Մյուս կողմից ել չոգը հարվածում, հաղթում ե ամեն աշխատանք, լուսում ե ակումբը, զորամասը, գյուղը: Յեկ որերն սկսում են ծանրանալ: Արևը լուցկու պես պայմում ե արևելքում, հրդեհում որը, ողը բոցավառվում է դաշտի լայն հնոցում, թիերն ու փշերը այրվում, խարկվում են, ապա հրդեհը կղզիանալով արեմուտքում նվազում, դառնում ե մի վերջին կայծ և մարում ե պպառված մոմի նման:

Այնուհետև ալելի յե լոսում անապատը և նոթերը կիտած ականջ դնում միայն իրեն լսելի ինչ վոր ձայների:

Իր ծառայության գործերից ազատ ժամանակը Սյոման գնույն ե Մաքսիմի մոտ: Սա նրա հին ընկերն է, քաղաքացիական կոհիկների ընկերը, ամուսնացած է: Մարուսիան, մի շատ գեղեցիկ արարած, մտերիմ ե Սյոմայի հետ, սիրով ընդունում ե նրան, և նրանք յերեքով շատ անդամ նստում են մինչեւ կես գիշեր, ասում ենոսում:

Մաքսիմը Սյոմայից մի տարի առաջ եր յեկել Արաքսի ափը ծառայության: Յերբ Սյոման յեկայ՝ Մաքսիմը ալելի մտերմացավ նրա հետ: Մարուսիան իսկույն համակրեց նրան, և ամուսինները նրան դարձրին իրենց տան մարդը:

Առավոտ, յերեկո, ուշ գիշեր—Սյոման կմտներ նրանց մոտ թեյի, ճաշի թե զրույցի, և միենույն է՝ Մաքսիմը տանն ե թե վոչ:

Մարուսիայի և Մաքսիմի ընկերությունը մի փոքր մեղմացնող ժպիտ է Սյոմայի համար սահմանապահ կյանքի չոր ու ցածր անապատում:

— Բարի յերեկո՛, Մարուսիա:

Յեկ Սյոման կանգնեց Մարուսիայենց տան պտտուհանի առջեղ:

— Բարի՛ յերեկո, համեցե՛ք ներս, —զբնդաց Մարուսիային
ձայնը նեղ ու մոռթ պատուհանից:

— Մաքսիմը տա՞նն ե:

— Վո՛չ, դու չի յեկել:

— Ինչպե՞ս, գնացքով պիտի դար:

— Վո՛չ, ավտոմոբիլով կդա: Արի ներս:

Սյոման մտավ անճոռնի սենյակը, վորի հատակը հող և
առաստաղի անտախտակ գերանների յեղեղներից հաճախ կարիք-
ներ են կաթում և ոճեր կախվում:

Անկյունում մոռայլում եր մի հնադարյան մահճակալ, վորի
վրա հանգստանում եր ամուսինների անկողինը: Յերեք տարուրետ
ձագերի նման կակել եյին իրենց մորը—սեղանին:

— Ինչպե՞ս ես, Մարուսիա:

— Շոդ ե:

— Քչը:

— Ի՞նչ ես անում:

— Ջանձրանում եմ:

— Գիտես ի՞նչ նորություն, —չարաճճի ծոր տվեց Մարու-
սիան մանրիկ ժառանգով:

— Ի՞նչ, ցնցվեց Սյոման:

Մարուսիան տարտամորեն զգաց այդ ցնցումը, բայց իրեն
հաշիվ չտվեց: Ինչպես և Սյոման: Բայց բնազդորեն դժկամակեց:

— Մորաքույրս լնձ ձմեռս հրավիրում ե Մոսկվա: Լավ չե՞:

Ու աչքի տակով նայեց Սյոմային:

— Լավ ե, ինչո՞ւ չե, —ասաց Սյոման ներքին դժկամակու-
թյունը խտացնելով:

— Զե՞ն, լավ կլինի մի անցնեմ Մոսկվա: Այս անապատի
լուսությունց հետո...

— Այս, գուցե:

— Ախր մի տես ի՞նչ լուսություն ե: Կարծես գերեզմանի
մեջ ես:

Մարուսիան մանրաժպիտ մտիկ տվեց Սյոմային և չարաճճի
ժպտաց.

— Իսկ դու չե՞ս ուզում Մոսկվա:

— Վոչ, ինչո՞ւ:

— Զե՞ն ձանձրանում:

— Ե, ի՞նչ կտա ինձ Մոսկվան՝ յեթե ձանձրանամ եւ:

Մարուսիան վառեց պրիմուսը և թեյամանը դրեց վրան:
— Սյոմա՛, լսիր, — ասաց Մարուսիան, — դու ինչ վոր Փլեղ-
մայի մեջ ես վերջերս, ի՞նչ ե պատճառը:

— Միթե՞ Փլեղմայի մեջ եմ, — հարցցրեց Սյոման ցրիվ ար-
տահայությամբ:

— Այո, դու ինչ վոր ժանդուաված ես թվում:

— Կարելի յե:

Նրանց զրույցը չեր կպչում, բայց իրենց համար անախորժ
չեր: Դա նրանց սովորական ձևն եր: Այս կցիտուր հարց ու պա-
տասխանները նետած քարերի ընդհատ աղմուկների պես վրդո-
վում եյին սենյակի և դաշտի լուսթյունը: Ու հենց մեկն ու մեկը
դադարում եր խոսելուց կամ յերկուսով մի բովել լուսմ եյին՝
անապատի լուսթյունը լափում եր, մերկում նրա հետ՝ ճշշելով
նրանց յերևակայությունը:

Մարուսիան բաժակներն եր սրբում:

— Լսի՛ր, Մարուսիա, — հանկարծ դարձավ Սյոման նրան
առանց մտածելու թե ինչու, — դու Մաքսիմին սիրո՞ւմ ես:

— Այո, սիրում եմ, հետո՞ ի՞նչ:

— Շա՞տ ես սիրում, սրտի՞ սիրով, թե հենց այնպես, սո-
վորական:

— Զգիտեմ, չեմ մտածել: Յես Մաքսիմին... Բայց ինչո՞ւ
յես հարցնում:

— Զգիտեմ, հենց այնպես:

— Այո՞ւ, վողորմած տե՛ր, — կատակով ծոր տվեց Մարու-
սիան, «խոնարհաբար» սիրում եմ իմ ամուսնուն, «Հնազանդ եմ
նրան» և ային:

— Ինչպե՞ս յեղավ վոր ամուսնացաք:

— Մեր ամուսնությունը մենք եւ չիմացանք: Մաքսիմը լավ
տղա յե, այնքան լավ, վոր իսկի եւ չիմացանք թե ինչպես սկսե-
ցինք իրար հետ ապրել: Մենք հետո տեսանք վոր ամուսիններ
ենք: Զագս գնացինք հայտնի ձեականությունների համար, վոր
մի տեսակ պարտադրում ե Մաքսիմի ծառայությունը, կուսակ-
ցությունը...

Սյոման անգամ իրեն համար աննկատելի ինչվոր բավակա-
նություն եր զգում Մարուսիայի այս բացատրություններից:
Նրան զբաղեցնում եր ուրիշի կյանքի ուրախ, զերմ անկյունները

գիտելու այս փորձերը։ Նա միայն շատ ուրախ եր, վոր իր ժոեր-
մությունը Մարուսիայի և Մաքսիմի հետ թույլ եր տալիս մտնել
սրանց ներքին աշխարհը և դիտել, զվարճանալ ուրիշի բախտով։
Յեվ այս հեռավոր անապատի կարիճների և ոճերի հարևանու-
թյան մեջ, ուր խանձված տարածությունը տիսուր նստում ե վը-
րադ որնիբուն, ուր ամեն ինչ դաժան ու չոր հայացք ունի—այս
բոլորի մեջ այս սենյակը, այս կնոջ ներկայությունը մի մեղմաց-
նող ժամանակ յե նման։ Կյանքի ժամանակ։

— Եյ, դուք, այս ի՞նչ սիրո բացատրությունների մեջ եք, —
լսվեց պատուհանից մի մեղմ ձայն։

Յեվ իսկույն ուրախ։

— Մարուսիա։

— Ոչո՛, Մաքսիմը, արդե՛ն։

Յեվ Մարուսիան վեր թուալ, վաղեց դուրս։

Մաքսիմը ներս մտավ և աչքը զցելով պրիմուսին ծիծաղեց։

— Հիմարուհի՛, ջուրը յեռում ե, թափվում, իսկ սա ժամա-
նակ ե գտել սիրային հերքաթներ պատմելու իր հերոսին։

— Ո՛յ, ո՛յ, ո՛յ, — արեց Մարուսիան և վաղեց դեպի պրի-
մուսը։

Մաքսիմը բեռնավորված եր զանազան ուտելեղենով և մի ա-
չագին սեխով։

— Դու ո՞ւր ես կորել, չես յերեսում, — դիմեց Սյոմային Մաք-
սիմը՝ ձեռի կապոցները դնելով սեղանին։

— Տանն եյի։

— Ինչու յերեկ չեկար ճաշի։ Սպասեցինք։

— Ո՞վ խոստացավ դալու։

— Բայց չոգ եմ ասո՞ւմ, հա՛, ուղղակի լափում և մարդու։

— Ի՞նչ կա քաղաքում, — հարցրեց Սյոման անտարբեր։

— Հա՛ — թռավ տեղից Մաքսիմը — դու կարող ես ինձ չնոր-
հավորել։ Հասանի թագցրած կոնտրաբանութը գտնվել ե քաղա-
քում։ Այսար սատանան տանի, յես միշտ ասում եյի, վոր նա իր
հետ միայն ածելիներ չե բերել։

Սյոման հրմ արեց ու լրեց։

— Իսկ դու մասո՞ւ յես թթվել, — կողքանց նայեց Մաքսիմը
Սյոմային — եհե՛, արդեն ձկուում ես ծառայության տակին։ Մի
տարի ել չկա։

— Հիմարություննե՛ր։

— Իհարկե։ Լսի՛ր, Մարուսիաս ձմռու Սոսկա յև ուզում
գնալ։

— Հա, ասաց։

— Ասում եմ, չթողնեմ։

Մարուսիան ծիծաղեց միայն։

— Մի որ չենք դիմանալ այս քանդվածում, այնպես չե՞, Սյո-
մա։ Ո՞վ կտա մեղ թեյ, ճաշ, նվագ… Յեվ հետո տիսուր կլինի,
սատանան տանի…

«Այո, տիսուր կլինի» համաձայնեց մտքում Սյոման։

— Յեվ տիսուր ե այստեղ, Սյոմա, նկատո՞ւմ ես, — կրկնեց
Մաքսիմը։ — Աչքդ քցում ես այս անապատին՝ սիրտդ չարանում ե։
Մեկ-մեկ վոր տուն ես գալիս՝ սիրտդ կարծես ծաղկում ե։

Սյոման գարձյալ հրմ արեց միայն։

— Ճիշտ ե, գործը շատ ե, ժամանակ չունես տիրելու, բայց
հանգստի ժամերին սիրտդ ճաքում ե։

Մաքսիմն սկսեց խոսել մաքսանենդների մասին, այնտեղից
անցավ զինվորական վարչության նորություններին, քաղաքի անց
ու դարձին։

— Գիտե՞ս ինչ հաջողեցրի քաղ բաժնում — ելինո՞ մեր ակում-
քի համար։ այս կիրակի բերում են, — ասաց Մաքսիմն ու նայեց
Սյոմային։

Սյոման նորից հրմ արեց։

Արդեն թեյը պատրաստ եր։ Մարուսիան թարմ թեյը ածեց
պլազման բաժակների մեջ և առաջ բերեց։

Սենյակում բուրեց թեյի ախորժելի բուրմունքը։

Մաքսիմը ձեռները շինց։

— Մարուսիա, դիմե՞ս ինչ թիւլածքներ եմ բերել։

Մարուսիան դատարկեց տուլրակները և սկսեց ծիծաղելով
քննադատել ամուսնու ճաշակը։

Սենյակը լցվեց նրա ծիծաղով։ Տրամադրություններն աշ-
խուժացան։

Մարուսիան սատեց Մաքսիմի կողքին և ծաղրադեմ կողքանց
մտիկ տվեց նրան։

— Իսկ թաշկինակներն առա՞ր, թե փողը միկիտանում թողիր։

— Փա՞ռք ասում, դեռ ինձ ձեռների վրա տուն չեն բերել, —
ա՞յ թաշկինակներդ։

Յեվ զրապանից հանեց բարակ թղթի փաթեթը։

— Հա՛, ապրի՛ իմ «մարդը»—գոչեց Մարուսիան, վրա պըր-
ծալ թաշկինակներին, բաց արեց և բռնեց ողի մեջ:—ի՞նչ հրա-
շալի բաներ են: Դրա փոխարեն կարելի յէ քեզ մինչեւ անգամ ո-
րել:

— Տե՛ս, գուցե իսկապես մի որ ել սիրահարվես վրաս, —
ժպտաց Մաքսիմը:

«Իբր թե չեք սիրում իրար»—ասաց մտքում Սյոման՝ միաժա-
մանակ բարեմիտ և խանդով:

Մութն ընկել եր արդեն: Բայց նրանք թեյլ ձղելով և սկսելով
ընթրիքը, ասում կատակում եյին, առանց ուշ դարձնելու պատի
ավերակ ժամացույցի անշնորհք չխէլչխկոցին, վոր ամեն բոպե
ձանձրալի կրկնում եր, թե կյանքն անցնում ե:

Սյոման քիշ-քիչ տաքացավ, սրտի անհատիանալի փշերը հալ-
վեցին, նա դարձավ բարի մարդ և սկսեց անգամ յերգել: Ել
չեր զգում, թե ինքը մի փուշ և յերկու վարդենու մեջ կամ մի
վարդենի յերկու կրակի մեջ:

Դուր յեկավ նրան այն զգացումը, վոր ինքը չի նախանձում
նրանց, չի խանգարում, վոր ինքն ել միանում և ամուսինների ու-
րախությանը: Կարծես մի ուրախություն յերեք սրտի մեջ:

Մարուսիան նվազող եր: Վերցրեց գիթառը և սկսեց տընկ-
տընկացնել: Ակորդները թախծով զողանշեցին: Ապա այդ թաղծի
միջից գուրս թուավ Մարուսիայի յերգը, ինչպես զնդուն ճիշով
թոշունը՝ վարդի թփերի սոսափից:

Յեկ հեռավոր Արաքսի յեղեղնուտների մեջ, գիշերային լոռ-
թյան ծոցում Մարուսիայի յերգը Սյոմային ու Մաքսիմին հիշեց-
րին Ռուսական դաշտի կանչող հեռաստանները:

Մաքսիմը վոտը զարկեց գետնին.

— Աստանա՛ն տանի, հիշո՞ւմ ես, Սյո՛մա, այն գիշերը, վոր
յես ու գու գերի ընկանք սպիտակների ձեռքը: Հիշո՞ւմ ես՝ վի-
ճում եյին թե քանի ժամ կապրենք. յես ասում եյի յոթը, զու
թե՝ յերեք: Ինչպե՞ս փախանք, ի՞նչպես պրծանք: Յեկ ահա քա-
նի՞ տարի յէ ապրում ենք: Բայց ժամանակներ եյին, հա՛...

— Հա՛, ժամանակներ եյին—բացվեց Սյոման, — ժամանակ-
ներ եյին: Կրա՛կ: Գինու պիս խմեցինք ու հարբեցինք:

— Դառն ու դաժան եր, բայց լա՛վ եր հեղափոխությունը:
զե՛:

— Բէլ՛:

Ու լցում եյին կոնյակը:

— Սյո՛մա, — գոչեց Մարուսիմը տաքացած:

— Ասա՛:

— Սյո՛մկա, մեկ ուղում եմ Մարուսիային ուրախացնեմ, ու-
ղարկեմ Մոսկվա, մեկ ել չեմ ուղում: Սատանա՛ն տանի, տխուր
կլմնի, ի՞նչ խորհուրդ ես տալիս:

Մարուսիան խորամանկ ժպտում եր:

— Թո՛ղ, Հիմար մի՛ լինի, թող գնա ուրախանա՛: Հը՛, Մա-
րուսիա, — վեր թուավ դեպի նա Սյոման—գնա՛ Մոսկվա, որան մի
լոիր: Լավ չեմ ասո՞ւմ:

— Շա՛տ լավ ես ասում, — պատասխանեց Մարուսիան նվագը
չկտրելով՝ դրա համար ել սիրում եմ քեզ:

Հետո թուավ աեղից, խից կոնյակի բաժակը և անսովոր շար-
ժումով վեր բարձրացնելով.

— Քո կենա՛ցը, Սյոմա:

— Նո՞ւ, սպասինա՛ն տանի քեզ, Սյո՛մա, — գոչեց Մաքսի-
մը, — զու իմ կնոջ սիրար գողացար: Կենա՛ցո:

Հետո զարձավ Մարուսիային և թեր փաթաթելով նրա վզին
ասաց վոգեվորված:

— Թողնո՞ւմ եմ, Մարուսիա, գնա՛:

— Բրա՛վո, բրա՛վո, իմ Մաքսիմո, — ասաց Մարուսիան կա-
տակով՝ դրա համար կարելի յէ քեզ համբուրել:

Ու շրթունքները մոտեցնելով թեթեակի փչեց Մաքսիմի յե-
րեսին:

Մարուսիան կրկին վերցրեց գիթառը և նոր տարափով թափ
տվեց նրա լարերի հնչյունները: Դա «կաղաչկի» յեր: Մաքսիմը
թուավ ու սկսեց հողի հատակին տոփել վոտներով:

— Ա՛յ սատկես դու, այդպե՞ս, — վորոտաց Սյոման ու ինքն
ել թուավ: Յերկու ընկերների աչքերը պսպղացին գիվական ցոլքե-
րով: Նրանց մազերի խոպոսները զնցահարվեցին, ու յերկու հեծ-
գնդի զինվորականները կարծես թուան իրենց ձիերի վրա ու ոլա-
ցան:

Մրցման կերպարանք առավ պարը, յերբ նրանք դեմքերը վըծ-
ուական, աչքերը պլոկած ածելիների պես սկսեցին իրար վըս
ապառնալից պսպղացնել ու մրրկել, կարկտահատել դետինը:

Վայրի բնազգը, ինչ վոր վերհիշումներ կոխվների, հարձակ-
ման, իրար բղկանու կրակը բոցկլտաց նրանց դեմքին, և յերկու
յերիտասարդները, վորոնց մկանները պիրկ ոճերի նման փաթաթ-
վել եյին նրանց, վոսկորներին՝ կարծես պատրաստ եյին իրար
զարկելու և մի վայրկյանում վոչչացնելու իրար:

Վոլորվեցին, փոփոացին, ինչպես յերկու հնոցներ ողի մեջ
ու հանկարծ գիթառի տարափը մի ուժգին հարվածով մտրա-
կեց նրանց, տեղն ու տեղը հանդցրեց, ու ինքն ել դադարեց:
Կանդ առան սաստված, քրտնաթոր, և հելիհեվ նստեցին
սեղանի շուրջը:

Մաքսիմը Եցրեց կոնյակը:

— Մարուսկա՛, կենա՛ցք:
— Կենա՛ցդ, Մարուսկա, — գոչեց Սյոման, և յերկու ըմ-
պակները արագ նետվեցին կոկորդներից ներս:

Արդեն կես գիշեր եր:

Մարուսիան սկսեց յերադել Մոսկվան: Սկսեց բարձր մտածել՝
հետն ել մատներով արթնացնել գիթառի վորմե քնկոտ ակորդը:

Նրանց զրույցը թեերը կախեց: Հոգնություն յեկավ վրա-
ները: Քաղցր հոգնություն—ժպտուրախությունից:

Սյոման սկսեց դիտել Մարուսիային: Նա աճում եր իր գեղեց-
կության մեջ այդ գաղջ գիշերի, փշատիների գաղտազողի հար-
բեցման, կոնյակի հոտի և ծղրիդների խանդավառ ճռվողյունի
մեջ:

Սյոման անկիրք եր նայում Մարուսիային, ինչպես մարդ
կնայի իսկական գեղեցկությանը: Պարը՝ տղամարդու հպարտ խո-
յանքը, ասպետության գեղեցիկ զգացումը թույլ չեր տալիս Սյո-
մային ուրիշ կերպ նայելու այդ գեղեցիկ կոնցը: Յեվ այդպես նա-
յելը դուր եր գալիս նրան այդ բուլեյին: Այո, Մաքսիմը իր ար-
յան ընկերն ե, միասին են կովել հեղափոխության համար, վիճել
մահի հետ, միասին աղատվել մահից և ահա միասին են աշխա-
տում սոցիալիզմի կառուցման մեջ:

Մարուսիան հանդարտ նվազում եր: Մեղմ ու պարզ եր յե-
ղանակը: Նա վոտը վոտին, լիքը կուրծքը գիթառի վրա կախած՝
պոկում եր հնչյունները: Նրա յերկար ճկուն հասակը, բարձր սը-
րունքները, խուզած կարծ մազերի խոպոպները և խաղաղ մատ-
ները, վոր հպում եյին լարերին՝ խկապես հիացնում եյին Սյո-

մային: Բայց յերդը, պարը, նվազը նրա սիրավ լցրել եյին բարձր
զգացումներով:

— «Շա՛տ ե գեղեցիկ Մարուսիան, բայց և Մաքսիմը լավ
տղա յե»— սկսեց մտածել Սյոման՝ առանց հաշիվ տալու թե ին-
չո՞ւ յե համեմատում: Մակայն զգաց, վոր այդ համեմատումը
իրեն մի հանգիստ մտքով ե տոգորում, ներդաշնակում իր զգա-
ցումները:

Ուրախացավ, վոր այդպես ե:

Նա աչքով մի անդամ ել գրկեց Մարուսիայի բարձր, կառու-
ցիկ հասակը, վոր ուռենու պես ճկվել եր գիթառի վրա, և նկա-
տեց նրա կաթնագույն մորթին, վոր ցայտել եր նրա ուսագլխին:
Սյոման աչքերը փախցրեց դրանից, հետո նայեց Մարուսիայի վա-
յելուչ վոտներին, գողարիկ տուֆլիների մեջ:

Ու հանկարծ վեր թռավ:

Մարուսիան զգաց նրա աչքերի պղտորությունը և բնադրով
հասկացավ, վոր իր վոտներից եյին: Բայց հեռու չգնաց, չմտա-
ծեց ավելի, քան կմտածի մի գեղեցիկ կին, վոր սովոր ե ամենքի
հայացքին իր մարմնի վրա, վոր և ամեն անդամ ել «վորեե բան
չի նշանակում»:

«Սյոման դիտում ե իմ գեղեցկությունը»—անցավ նրա մըտ-
քով: Սովորական հիա՛ցք...

Մարուսիան վեր թռավ, գիթառը նետեց անկողնի վրա և
սկսեց քայլել սենյակում: Նրա ոլացիկ յերկար հասակը, չնորհալի
բարակ վոտները բեկրեկվում եյին հպարտ շարժումներով: Նա
գնաց գեղի բաց դուռը և հենվելով նրան՝ սկսեց գիտել դուրսը:
Դուրսը մութն եր: Յերկինքը իր կրակի քրտնքի կայլակները ճա-
կատին ժպտում եր անհասկանալի հավերժության ժպիտով: Ու
Մարուսիայի խոպոպները ու կիսադեմը թաղվելով նրա մուգիա-
պույտ Փոնի մեջ՝ նկատվում եր իրեն պատկեր նրա վրա գծա-
գըրված: Ֆոնի մի կողմում ուրվականի պես մոայլվում եր Մա-
սիսի սիլուետը:

Գիշերը խորանում եր:

Մարուսիան քթի տակ մի յերգ մոմռալով յեկավ նստեց իր
տեղը:

— Նո՛ւ, բարի գիշեր, յես գնացի, — ասաց Սյոման և խլելով
իր պստիկ գդակը՝ ծուռ կպցրեց ծոծրակին և գանդուրները
թափեց հանդուգն ճկատին:

— Ինչո՞ւ յես փախչում, դեռ կա'ց, —վեր թռավ Մարուսիան:

— Վո՞չ, վաղը որապահ եմ:

— Դատարկ բան ե, քի'չ քնիր, —անդեց Մարուսիան, —նըստիր:

Ու քաշեց թևից նստացրեց:

— Զե՛, Մարուսիա, պիտի գնամ:

— Ի՞նչ անհամն ես: Նստիր ելի՛ —ասաց Մաքսիմը և կոնյակը լցրեց:

— Վերցրո՞ւ, —գոչեց նա, վերցնելով իր ըմպակը:

Նրանք չեյին խոսում, այլ արմնելով սեղանին, ականջ եյին գնում Մարուսիայի նվազին: Յերկար կշարունակվեր այս, յեթե վերջապես Սյոման տեղից չշարժվեր:

— Եւ, չնորհակալ եմ, լավ յերեկո անցկացրինք: Բարի գիշեր:

— Բարի գիշեր, —հնչեց Մարուսիայի հստակ, ուրախ ձայնը:

— Ե՞ւ, անհամն ես, բարի գիշեր —մոմոաց Մաքսիմն ու վեր կացավ ճամբռու դնելու Սյոմային:

Սյոման դուրս յեկավ Մաքսիմնեց սենյակից և մտնելով խոտերի ու մթության մեջ՝ մեքնայորեն շոշափեց ատրճանակը:

Անապատը խոժուեց գեմքը նրա վրա և այրված թիւերն ու ազագուն փշերը նոթերը կիսեցին՝ մթնաթաթախ գլուխները ցցելով այստեղից այնտեղից:

Քայլում եր Սյոման և նրա կոշիկները ութմով փախում եր գետինը:

«Լավն ե Մաքսիմը, Մարուսիան ել լավն ե» —կրկնեց Սյոման մտքում և ախրեց, վոր գիշերվա տարածումը բաժանեց իրան այդ զույգից, վորոնցից նա մի ջերմություն եր ստանում այդ անապատի մեջ:

Սյոման մտածում եր Մարուսիայի մասին: Բայց իսկույն Մաքսիմի պատկերը գալիս կցվում եր նրա պատկերին:

Մի անբացարեկի բարություն եր զգում Սյոման Մաքսիմի մեջ: Բարություն ընկերի, մարդու: Զգաց, վոր ինքը սիրում ե նրան և ուրախացավ դրա համար: Կարծես այդ սերը նրան պետք եր մի ուրիշ խոռոված խաղաղացնելու իր մեջ, ուրիշ խոռոված, վորի պատճառը, վոչ ել եյությունը լավ չեր զգում:

«Հիմի նրանք մենակ են և Մաքսիմը նրան կդրկի, կհամ-

բուրի» —մտածեց Սյոման խուսափելով այդ մտքից:

«Արժե Մարզիմը դրան, նա լավ կովող տղա յեր: Մարուսիան ել արժե նրան» —ավելացրեց Սյոման, հեռացնելով առաջին մրածածունը:

Յեվ սրա նման մտքեր սկսեցին պատվել նրա ուղեղում, ճախրել, հեռանալ, մոտենալ:

Սյոման սկսեց մտքերն ուղղել իր վաղվա անելիքների կողմը: Թղթեր կան վարչությունից, վորոնց պետք և պատասխանել: Սկսեց կազմել այդ թղթերի բովանդակությունը:

«Այս, Մարուսիան գեղեցիկ ե», —մտածեց նա հանկարծ, ակամա: Նրանք հիմի գոկախառնվում են, և ինքը չի կարող այնահեղ լինել:

«Նո՞ւ, սատանան տանի» —իսկսաց նա անախորժությամբ և ձայնը բարձրացրեց.

«Ապա ի՞նչ պիտի անեն, հիմա՞ր» ...

Յեվ ծխախոտ վառելով քայլերն արագացրեց:

«Մարուսիան լավն ե և բարի, նրա մասին վոչինչ վատ չպիտի լինի մտքումդ: Վերջապես ի՞նչ գործ ունես ուրիշի բախտավորության մեջ: Տղամա՞րդ յեղիր»:

Յեվ զգաց, վոր մի զդացում բարձրացնում և իրան: Տղամարդու զգացումը հանգեց իր ընկերոջ: Այստեղ իր ընկերը սիրում է մի կնոջ, ինքը նրանց բարեկամն է ու ընկերը: Նրանք մինչեւ գիշերվա կեսի վերջին ջերմ խսութը, յերգն ու հյուրասիրությունը բաժանեցին իր հետ: Ավելին ի՞նչ կարող եյին անել: Յեվ ինչ բաժին վոր ինքը ունի Մարուսիայի հարցում — բայց ի՞նչ բաժին... — նա այդ բաժինը զիշեց ընկերին, ջնջեց այն անախորժախիծը, վոր սողոսկել եր իր սիրու՝ առանց վոր նա հաշիվ տար իրեն:

Առավոտյան, յերբ Սյոման զարթնեց՝ առաջի վայրկենի զգացումն այն եր, վոր իրան ինչ վոր անախորժ բան եր պատահել և յերկորդ վայրկենին հասկացավ: Մարուսիան... Յեվ տհաճություն զգաց, տհաճություն խաղաղ տղամարդու, վորի կյանքը խոռոված և մի նորություն: Ուզեց վեր կենալ — գործի ժամանակ եր, բայց միայն թիւերն հանեց գուրս և ծխախոտը վառելով սկսեց մտածել:

Մեզկություն եր գալիս վրան, չեր ուղում վեր կենալ: Յեվ

ծիւելու գուրեկանության պես քաշում եր նրան յերեկվա անցու-
դարձի հուշը: Նա յերկար կմնար անկողնում՝ յեթե ժամանակը
չխթաներ նրան: Վեր թուավ անկողնից և սկսեց արագ հաղնվել:
Լվացվելու սառը ջուրը գրգռեց նրա շարժվելու տրամադրու-
թյունը: Յեվ նա առանց մի բան ուտելու գնաց պարետային վար-
չություն:

Ամբողջ կեսորը նա գլուխը մխրճել եր թղթերի ու գործերի
մեջ: Դա նրան զրադեցրեց և ուրախացրեց:

«Վերջապես ի՞նչ եմ ուղում... Մարուսիայի՞ն: Վոչ, իհարկե:
ի՞նչ հիմարություն ե այդպես մտածելն անդամ»...

Յեվ նա ձեռքը թափ տալով անցնում եր ուղիւշ թղթերի:

Գործերի, զրադմունքի յեռ ու զեռի մեջ նա նկատեց, վոր
Մարուսիան իր հրապույրով այնքան ել խոցելի չեն նրա համար,
և վոր գիշերս նա ուրիշ բան եր: Դրա պատճառը անշուշտ գիշե-
րային ժամն եր, կոնյակը, յերգը, պարը:

«Յեվ վերջապես մի՞թե յես կին եմ ուղում»:

Գործի տեմպը, կարմիր բանակայինները իրենց բողկի պես
առողջ դեմքերով, պաշտօնի հոգսերը մի չնչով փչեցին նրա գըր
գոված յերեակայության վրա: Նա սթափվեց և ինքնիրան խոս-
տովանեց, վոր ինքը անձնատուր և յեղել ինչ վոր տարտամ, մեղկ
զգացումների, վորոնք հոգնած ու պարապ ժամերի այցելու-
ներ են:

Թեթևացավ: Սկսեց սուլել: Պահակները բերին մի մաքսա-
նենդի, վորին բռնել եյին Արաքսի շամբուտում: Պահակը պատմեց
թե ինչպես բռնեցին: Նա ամբողջ գիշերը հսկելիս եր յեղել: Նրա
չողից լլարած դեմքը և խոր ընկած կապույտ աչքերի մեջ մի
պողպատե խստություն կար, վոր վճռականորեն վանում եր ամեն
որինազանցություն: Սյոման ախորժանքով մտիկ տվեց նրա կենտ-
րոնացած դեմքին և հաճությամբ ընկավ իր պարտականության
վրա: Կյանքի ընդհանուր հոսանքը, նրա վոչ-անձնական հոգսը,
ուժեղ հորձանքը ազդու բալասան եյին Սյոմայի մեղկացող տրա-
մադրությունների համար:

Բայց դա կարճ տեսեց: Սյոման գործը վերջացրեց, ճաշեց և
գարձավ տուն: Ընկնելով մահճակալի վրա՝ նա կարծես ընկավ իր
մեղկության և միայնության որորոցը, վոր հաճելի և վտանգա-
վոր որորով նրան քաշում եր դեպի մի թունավոր անրջանք:

Մարուսիայի կարասլային իրանը հպարտ շարժումով լողաց
պատի, լուսամուտի և այլ առարկաների արանքից և թափանցիկ
մի Մարուսիա յեկավ կանգնեց նրա դիմաց:

«Կինը պե՛տք ե, կյանքի մի պետք»— ասաց մտքում Սյո-
ման: Հենց նրա համար ե պետք, վոր նրա մասին չմտածես,
ինչպես ոդի մասին: Սեր ե, սովորություն և թե ինչ՝ կինը պետք
ե. Յեվ վերջապես չի կարելի այսքան զրադվել մի կնոջով: Այս՝
յեթե ինքն ել Մաքսիմի պես մի կին ունենար այստեղ— մտքում
վոչ մի կին չեր լինի:

Նրան հանգստացրեց իր գործնական դատողությունը: Նա
հանգստացավ, վոր գտավ իր գտրամադրությունների» բուն պատ-
ճառը: Բայց մի՞թե իսկապես ինքը տրամադրություններ ունին
Այո, ունի, անհանդիստ ե: Նա մտածում և Մարուսիայի մասին: Այո, ճիշտ ե:

Բայց մի՞թե նա իրա՛, Մարուսիայի մասին ե մտածում:
Իհարկե, վոչ: Լիներ մի ուրիշ կին Մարուսիայի նման, նրա կող-
քին, իր միտքը կդնար նրա կողմը: Կսիրեր նրան կամ հենց այն-
պես, ժամանակ կանցկացներ հետը, և հարցը կլուծվեր:

Յեվ վերջապես ամոթ ե իր պես տղամարդուն, հեղափոխա-
կանին, վոր կնոջ շրջադրեստի համար այդքան միտք ե մաշում:

Նա քնեց, և քանի վոր գիշերը քիչ եր քնել՝ ընկավ խոր և
կազդուրիչ քնի գիրկը:

Սյոման քնած եր բավական: Բաց դռնից ներս մտավ մի սահ-
մանապահ՝ հրամկադմից, սուր հայացքով նայեց տախտի վրա
մեկնած Սյոմային և մնաց կանդնած:

«Վաղո՞ւց ե քնել սա», ասաց նա կիսաձայն և մոտենալով
Սյոմային՝ սկսեց նրան թոթվել:

Սյոման վեր թռավ, բայց և խկույյն հորանջեց.

— Միտյա՞ , վո՞ր սատանան քեզ բերեց:

Ու ձեռը տարավ ծխախտի տուփին:

— Իսկ գո՞ւ վոր ջհանդամներն ես կորել: Ինչո՞ւ չեկար բջիջէ
ժողովին:

— Ճիշտ ե, հիմար բան եմ, մոռաշել եմ: Յե՞րբ եր:

— Հիմարը այդ հարցն ե: Որը հայտնի յե: Հը՛, ախպե՛ր ջան
դու այդտեղերք ինչվոր գործեր ես բաց արել: Հիվա՞նդ եյիր:

— Վոչ:

— Ապա ինչո՞ւ չեկար ժողովին:
 — Վոչ մի արդարացուցիչ պատճառ: Սխալին եմ, մտից զցել
եմ: Ել չի լինի:
 — Այդ գիտե՞նք: Բայց ինչո՞վ ես զբաղված, վոր վերջերս
պարտականություններդ թուլացրել ես:
 — Վոչնչով: Ասում եմ ելի՛, ել չի լինի:
 — Դրանով չես պրծնի: Վաղը կդաս ըջիջ և բացատրություն
կտաս: Կինոյի հարցն ի՞նչ յեղավ, գրե՞լ ես Քաղբաժին:
 — Վոչ:
 — Նո՞ւ, տեսնո՞ւմ ես: Այդպես չի կարելի: Բանակայինները
վայրենի կյանք չեն կարող վարել այստեղ: Ծաղիոն լավ չի դոր-
ծում, կինո չկա: Շոգ ե: «Անկյունը» դատարկ ե, պատի թերթը
զառանցում ե: Կորտնուեսությունների մասին զեկուցումը պատ-
րա՞ստ ե:
 — Վոչ, բայց կպատրաստեմ շուտով:
 — Ախր գիտեմ, վոր քեզ մի բան պատահել ե:
 Այսման վեր թռավ տեղից:
 — Միոյա՛, դու ինձ մի բան ասա, — վրա ընկալ նա, — դու յե-
կել ես այսոր ինձ կուսակցությո՞ւն սովորեցնելու:
 — Ի՞նչ, — խեթեց Միոյան փշի պես, — կուսակցություն սո-
վորեցնելո՞ւ—ապա ի՞նչ ես կարծում: Այսպիսի կուսակցության
վարպետներին, ինչպես վոր դու յե՞ս կարելի յե յերբեմն սովո-
րեցնել: Ի՞նչ ես քեղանով ներկայացնում, վոր չսովորեցնեմ: Յեվ
այդ վո՞ր մրգանից՝ յես ու դու այլ ես կարիք չունենք վոր մեզ
սովորեցնեն: Դու, ախտե՛ր ջան, այդպիսի խոսքերով ինձ չես
վախեցնի: Սահմանական պրծնի գնա՞ց:
 — Թուլացրել եմ՝ քաշիր:
 — Նո՞ւ և քաշում եմ: Ասենք թջիջը կքաշի, յե՞ս՝ ի՞նչ: Կու-
ռակցություն ե:
 Այսման տաքայավ.
 — Լավ ե, զնա կա՛թ կեր և գլխիս ավետարան մի՛ կարդա:
 — Կկարգամ և զավը կկարգամ— ձայնը բարձրացրեց Միոյան: Ինչո՞վ ես պարձենում—անցյալո՞վդ: Ո՞վ չունի անցյալ,
սատանան տանի: Ամեն մեկը յեթե քեզես անցյալը շիրմա անի ու
հետեւ քնի՝ ո՞ւր կդնա:
 — Դու հիմարություններ ես ասում—մեղմեց Այսման—ի՞նչ

անցյալ, ի՞նչ ապագա: Քեզ ասում եմ, միտու չեր. կարճ ու պարզ:
 — Դատարկ խոսք ե, —համառեց Միոյան, — բջիջում կասեմ:
 — Հա՛, այդպես:
 — Հա՛, այդպես: Հիմի ձայնով կտրիք:
 Միոյան լուց և հանելով ծխախոտը՝ նայեց շուրջը:
 — Լուցկի՛ տուք:
 Այսման վառեց լուցկին: Միոյան սկսեց ծխել:
 — Շոգ ե, սատանա՛ն տանի, — խոսեց նա մեղմ ձայնով, —
չորս նորակոչներ ելի դողացրին: Յեմիլյանին ասացի կոնյակ բե-
րի քաղաքից:
 — Ասել ե՝ ձանձրանո՞ւմ ես, — ժպտաց Այսման:
 — Ինչի՞ պիտի ձանձրանամ, — նորից կծեց իր սուր հայացքով
Միոյան, — կնիկմա՞րդ եմ, ի՞նչ եմ: Ի՞նչ, դու ձանձրանո՞ւմ ես:
 Այսման չեր սպասում, վոր հարցը կվերադառնա իրեն:
 — Յե՞ս, չեմ ձանձրանում, — ասաց նա տարտամ յեղանակով,
— բայց կին չկա, ա՞յ բանն ինչումն ե:
 — Կի՞ն, — ծոր տվեց Միոյան, — տես ի՞նչ ուզեց սիրտը: Աստ-
գա՞ծ ենք, ի՞նչ ենք, վորտեղի՞ց ստեղծենք:
 — Զդիտեմ, բայց կնիկմարդը պիտք ե, — ասաց Այսման, և
զգաց վոր այն չի ասում, ինչ վոր դզում ե: Յեվ նստեց տախտի
վրա:
 — Ի՞ն, — արեց նա, — հազար կին ել լինի այստեղ՝ կարծում
ես մարդու սիրտը հեշտ կկպչի՞ դրանց... Կարծում ես մարդ կին
և ուզում հենց այնպե՞ս:
 — Հապա վո՞նց:
 — Կի՞նը, կինը պիտի ուրիշ տեսակ լինի:
 — Կինը մի տեսակ ե լինում, հիմար, — կտրեց նրան Միոյան:
 — Կնոջ վոչ մի տեսակը չկա, ինչպես և աղամարդու: Մեկը վոր
ձեռդ ընկալ՝ մյուսներն ել արդեն գիտես ինչ են:
 — Փիլիսոփա մի դառնա գլխիս:
 Ու վեր թռչելով՝ պատուհանից խլեց շախմատը.
 — Դե նստի՛, նստի՛, քանի գլուխդ հիմար գրություն և ժի-
մատ անեմ քեզ:
 Սկսեցին շախմատ խաղալ:
 — Թախմալի յե այս այրված անապատը, այս շոգը, մոծակը,
այս չոր հողն ու ջեռացած քարերը, — խոսեց Այսման՝ աչքը շախ-
մատի քարերին հառած:

— Թախծալի՛... ե՛հ, ստեղ չես տեսմ՞լ: Թաղաքացիական կոմի ժամանակ հիշո՞ւմ ես Աստրախանի ստեղները:

— Այստեղ զբաղմունք կար, կռիվը: Նա չեր թողնում, վոր անիծյալ թախծը թափանցի հոգիդ:

— Իսկ այստեղ կռիվ չկա՞: Հիմա՛ր, սա պակա՞ս կռիվ ե— իմպերիալիզմի դեմ այս խաղաղ խրամատային կռիվը: Խրամատի ժեջ ես, անխե՛լք: Զե՞ս տեսնում ինչպես ե ալիքը բարձրանում: Ի՞նչ ասել ե անպատ: Արաքսի ափը— սա Միության ավն ե:

Նա վեր թուալ, թողնելով շախմատը:

— Յես քեզ ճառ եմ ասում: Դու զիտես վոր դա ճշմարիտ ե, իսկ միևնույն ժամանակ թթվում ես քո հոգու մի անկյունում: Թափ տուր քեզ, յե՛կ թիջ, դո՛րծ աշա: Կոմունիստը— թախի՞ծ, հիմար հո չե՞ս: Միևնույն ե, սատանան տանի, Մոսկվա՞ թե Արաքս:

— Նու, նու, լավ, չնորհակալ եմ քաղղթագիտության համար՝ զիշարթացավ Սյոման: Նա Միտյայի մտքերի կարիքը չուներ, բայց Միտյայի խանդավառ զգացմունքները տաքացնում եյին նրան: Նրան հաճելի թվաց իր հավատացած գործի մասին լսելը մեկ ուրիշի ջերմ խոսքերով: Դա սրտապնդիչ եր և կենարար:

Ու քանի խոսում եր Միտյան՝ այնքան ավելի նրա ածելանման պաղ աչքերը լցվում եյին ջերմ փայլով: Նրա դաժան դեմքը մնալով դաժան՝ թվում եր մեղմ:

Բայց Սյոման զգում եր, վոր Միտյան ևս բավականությամբ եր նկարագրում իրենց դրությունը, վորով այս անապատը կապվում եր ընդհանուր հեղափոխական շարժման հետ, շարժման մեջ եր ընկնում և չեր թվում այնքան մոռայլ ու լքված մի վայր: Վոչ, Արաքսի ափն ել աղմուկի մեջ ե: Նրանք այստեղ կատարում են մեծ գործի մի փոքրկի մասը:

Այս զրույցը, Միտյան՝ իր պողպատէ հասակով, կտրուկ, համառ մտքերով, խստակյաց այդ կոմունիստը նրան ուրախացնում, զբաղեցնում եր:

Յեկ նա համարյա չեր զդում այն, վոր նա անվանում եր «թախիծ»:

Նրանք խաղացին և խոսեցին մինչեւ մութն ընկնելը: Հետո թեյ խմեցին: Յերկար խոսում եյին սահմանի անցուդարձից, Ռուսաստանի հացամթերումից, հետո անցան իրենց զորամասի կարիքնե-

րին,—մի զրույց, վոր Սյոմային բերեց կտրեց իր հասարակ ու առողջ առորյային:

Բայց յերբ Միտյան դնաց և մենակ մնացած Սյոման գուրս յեկալ դուռը և աչքը զցեց անապատին՝ անախորժ տարտամությունը յեկալ պաշարեց նրան: Նա սկսեց անցուդարձ անել սենյակում: Հետո կանգ առաջ պատուհանի առջև և կարծես դյուտ արավ, այնքան հետաքրքրեց նրան այն միտքը, վոր թեև շատ վաղուց պարզ եր, բայց պետք ե բոլորվին կենդանի հնչեր՝ վոր նա թեթևանար.

— Զե, կին ե պետք, ուրիշ տեսակ կին:

Մի քանի որ Սյոման զբաղված եր իր պաշտոնի գործերով և ժամանակ չուներ խորանալու իր ձանձրույթի մեջ: Որերը գալիս, ոտարի նման մտիկ եյին տալիս Սյոմային և անցնում: Նա գգում եր նրանց խորթությունը, ինչպես իրեն շրջապատող դաշտի չորությունը, վոր նրա հոգու վրա թախիծ եր ցանում:

Յեկ նա կեսօրի արևից տոչորվելով ճամբար ընկալ դեպի Մարտիսինց տուն: Դեռ չհասած հողաշեն, տուլիի նման տանը, վոր հեռվից դեղնին եր տալիս և բայց դռան սև ստվերով շրջապատի մոռայլի մեջ մի ժպտացող կետի յեր նմանում՝ նրա սիրտն սկսեց բարախել: Յերբ մոտեցավ տանը՝ սև ստվերի միջից զնդաց Մարուսիայի հնչուն ձայնը.

— Սյոմա՞:

Սյոման ներս մտավ, բարեկելով Մարուսիային:

— Ելի՞ թրե ես գալիս ինչվոր տեղեր, վո՞րտեղ ես, մեռա՞ծ, — լսվեց Մաքսիմի ձայնը: Նա գդակը դրել՝ ուստրաստվել եր գնալու:

— Վո՞նց ես, ո՞ւր ես, — հարցրեց Մարուսիան ծիծաղկոտ հայտքով գրկերով նրան:

— Ամբողջ յերեկո սպասում եյինք քեզ, հիմա՛ր— նկատեց Մաքսիմը, — Մարուսիան խորոված եր արել: Քա՞նի անդամ ասել եմ՝ այս շոգերին մի՛ թթվիր, յե՛կ մեզ մոտ: Նախամարդու կերպարանք ես առել: — Նո՞ւ, յես դնացի, դուք զրո՞ւյց արեք: Կդամ: Մաքսիմը գնաց: Սյոման նստեց և լուռ նայեց Մարուսիային:

Սա նստեց և չարածճի աչքերը ճաճանչեց Սյոմայի դեմքին:

— Ինչո՞ւ յես բարկացել:

— Յե՞ս, չեմ բարկացել: Հոգնած եմ:

Իսկապես բարկացած չեր, բայց և հոգնած չեր: Ինչվոր հոգեկան կարկամություն եր զգում, վոր ուրախությունից եր:

Նա թեթևացավ նայելով Մարուսիային: Յեվ իսկապես այդ կինը զարմանալի հեշտ փարատում եր ամեն մռայլ բան կյանքի մեջ: Նրանից բուրում եր մի ջերմ մտերմություն, ինչպես զարունքից: Սյոման սկսեց գիտակցել, վոր Մարուսիայի առնը միակ վայրն ե, ուր նա կարող ե իր թախիծը բուժել:

Նրանք սկսեցին զրուցել: Մեկը այն զրույցներից, վոր մտերմուների մեջ և լինում—հաճելի մի նյութից մյուսը: Այդ մտերիմ զրույցը Սյոմայի մեջ ծնեցրեց այն միաքը, վոր ինչպես իր և Մաքսիմի մեջ, նույնպես և իր և Մարուսիայի մեջ անջրականեց չկան, վոր իրենք յերեք մտերիմներ են:

Մարուսիայի մեջ բնազդն սկսեց իր աշխատանքը: Նա նկատեց, վոր Սյոման ինչ վոր «տրամադրություն» և սկսել: «Տղամարդը գիտե շուտ տրամադրվել և շուտ ել մոռանալ»— մտածեց նա և վորոշեց նշանակություն չտալ դրան՝ բնական համարելով այդ ամեն տղամարդու մեջ: Մարուսիան համակրանք եր տածում դեպի Սյոման: Յեվ այնքան այդ մտերմությունը վստահացնում եր նրան, վոր նա չեր վախենում «վոչ մի բանից»:

Արդյոք կարո՞ղ ե Մարուսիան ինձ ևս սիրել... Մաքսիմի հետ»—ծագեց մի այսպիսի չարածճի միտք Սյոմայի մեջ, բայց նա խկույն և եթ մտրակեց իրեն. «Ի՞նչ անհեթեթություն»: Յեվ շարունակեց. «Ի՞նչ հիմար բան ե այս զույգ ասածը. ինչո՞ւ «զույդ», և վո՞չ «յերեք», «չորս» և այլն:—Դարձյալ հիմար բան ես ասում»—ընդհատեց իրեն Սյոման և միտքը շրջեց ուրիշ կողմ:

Բայց մտքերը անզգալի կերպով տոգորվում եյին այդ տրամադրությամբ: Սյոման չեր մտածում, այլ անորոշ ձեւերով զգում եր, վոր լողում ե այդ մտքերի հոսանքում: Ճիշտը՝ այդ հոսանքը նրան տարտամորեն քշում տանում եր դեպի «զույդը»: Յեվ նա Մարուսիայի վոսկեվողկույզ գանգուրների, հպարտ գլխի հետեւից նշմարում եր Մաքսիմի դուրս լողացող բարի և աղնիլ ճակատը, վոր անբաժանելի եյության պես նկատվում եր Մարուսիայի հետ:

Դա «զույդն» ե, բնական, դարերով հաստատված զույդը: Բայց ինչո՞ւ յեր Սյոմային թվում, թե Մարուսիան, վորի ամբողջ վերաբերմունքը դեպի իր ամուսինը պիտի լիներ մի «կորեկտ» սեր գեղի իր ամուսինը՝ այդ Մարուսիան նկարվում եր նրա առջև իբրև անվերծանելի հանելուկ: Այդ Մարուսիայից չնչում եր մի անսպառ զերմություն, վոր տարածվում եր իր շուրջը, տաքացնում, մեղմացնում ամեն իր մոտ կանդնած եյակի: Սյոմայի առջև նա մի անհուն աշխարհ եր մտերմության, կյանքի, ուրախության, վորին կարող են դիմել ամենքը: Նա այնպես եր զգում թե Մարուսիան ինչպես մայր, ինչպես քույր, ինչպես մարդ, մեկինը չե միայն, նա այնքան անհուն ե և լի գեղեցկությամբ ու զգացումներով, վոր չի ամփոփվի մի հոգու մեջ:

Յեվ ինչպես Մարուսիան հեշտացնում ե այսպիսի մտքերը: Ի՞նչ թեթև իրագործելի յե թվում ամեն բան, յերբ նայում ես Մարուսիայի «յերածշական» դիմագծերին, վորից ամեն ստոր, նվաստ, մեղավոր միտք վեհանում ե: Ամե՞ն ինչ կարելի յե Մարուսիայի հետ ու այդ ամեն ինչը գեղեցկանում ե Մարուսիայի հետ: Նա հեշտացնում ե ամեն յերեակալայություն:

Ահա թե ինչու Սյոման իրեն չեր համարում խորթ ու ավելարդ՝ Մարուսիայի և Մաքսիմի հետ, այլ ձուլված նրանց հետ:

«Ի՞նչ կլինի, յեթե յես Մարուսիային սիրեմ»—հանկարծ մըտածեց Սյոման:—«Մաքսիմը... թող չիմանա Մաքսիմը, անդամ Մարուսիան: Ո՞ւմ եմ խանգարելու:

Սյոման կարմբեց այդ մտքից և լսելի կերպով հեաց:

Կարծես մութ գրի միջից մի անցք գտավ, վորտեղից մի լույս թեթևացնող կերպով ժպտաց նրան: Նա ագահ վրա ընկալ այդ մտքի վրա:

Հանկարծ նա նկատեց, վոր բավական ժամանակ նրանք լուել են:

Լսվեց Մաքսիմի ձայնը: Սյոման զգաց իր սրտի տրոփիյունը: Յեվ յերբ Մաքսիմը շառագունած և ժպտալի մտավ ներս՝ Սյոման նայելով նրա թարմ ժպտախին՝ խկույն ցըիվ տվեց իր մեղկ մտքերը: Ինկերոջ անդիտակ մտերմությունը, նրա միամտությունը դիպավ Սյոմայի յերազանքին և լույսի պես վանեց նրան: Նա թափ տվեց իրեն:

Մաքսիմն սկսեց պատմել իրենց տանից ստացած մի նամակի:

ծիծաղելի բովանդակությունը, վոր լցրեց սենյակը նոր, աշխույժ տրամադրությամբ: Մարուսիան վեր թռավ և սկսեց անց ուղարձ անել սենյակում:

Սյոման սկսեց գիտել նրան: Մարուսիան զարմանալիորեն աճում, գեղեցկանում եր նրա առջեւ: Նա նոր սկսեց նկատել նրա բարձր հասակը, սլացիկ գեղեցկությունը, վոր մարդու սիրտը լցնում ե աշխուժով:

Սյոման ուղեց թափ տալ իրեն և ուշը դարձնել ուրիշ կողմ, բայց զգաց վոր այլևս անկարող ե չմտածել Մարուսիայի այդ գեղեցկության մասին:

Դարձյալ անախորժ թափիծը յեկավ ափրեց նրա հոգուն: Յեզ նա պարզեց իր համար մի բան, վոր ինքը այլևս անկարող ե գեժմադրել իր մտքերին, վոր ինքը հենվում է հենց այն մտքերի վրա, վորոնք իրեն տանելու յեն անդունդ:

«Վոչ, Մարուսիայի մասին կմտածի նա, բայց Մաքսիմից ծածուկ, Մարուսիայից ծածուկ»:

Քրտինքը տվեց վրա: Նա խեց գդակը:
— Ո՞ւր, — թռավ նրա առաջ Մարուսիան:
— Գնում եմ, գործ ունեմ:
— Թո՛ղ, ի՞նչ գործ, ճաշում ենք:

Սյոման չլսեց, գնաց:
Հասնելով տուն՝ ընկալ տախտի վրա և սկսեց ծխել: Անդամ Փիզիկապես նա թույլ եր զգում իրեն, այնքան հոգեկան թույնը թուլացրել եր նրան:

Հիմի պարզ ե. նա հիվանդ ե «Մարուսիայի մտքերով»:
Բայց ինչ արագ բացից հիվանդությունը: Սա կարող է կեղտոտել ընկերական հարաբերությունը: Մի այնպիսի ընկերի, վորի հետ քաղաքացիական կոիվների կրակների միջից միասին են դուրս յեկել, վորի հետ հաղթել են և հիմա միասին կառուցանում են:

«Ամոթ ե, — շնչաց Սյոման, — գուր տղամարդ չես, այլ փալամի կտոր»:

Բայց պարզ տեսնում եր, վոր այդ խոսքերը զուր են, վոր ինքը կաշկանդված ե, և ինչ վոր մի բան պիտի կատարվի: Յեզ այդքանը, վոր նա կարծում եր թե ուշ պիտի կատարվի, ահա կատարվում է հիմա, և արագ: Արագ պարզվեց իր համար, վոր ինքը սիրում ե Մարուսիային:

Վորոշեց չգնալ Մարուսիայինց: Հետեւալ որը կրկին մխրճվեց իր պաշտոնական գործերի մեջ: Աշխատեց համոզել իրեն, վոր այսպիսի «վատ» մտքերով չի կարելի մոտենալ Մաքսիմին: Վորոշեց թեկուղ ամբողջ մի շաբաթ, մի ամիս չգնալ նրանց կողմը, մինչև վոր անցնի «Հիմարությունը»:

— Սյոմա', գուր այն որը նեղացա՞ր մի բանից, ի՞նչ ե պատահել քեզ—լավեց Մարուսիայի ձայնը:

Նա ներս մտավ և կանգնեց Այոմայի դիմաց:

— Հը, ի՞նչ ե պատահել: Մաքսիմն ասում է հիմարացել ես: Ասա՛, ի՞նչ հիմարություն ե:

— Նստի՛ր, Մարուսիա:

— Կնսուեմ, գուր ասա՛, ինչի՞ փախար հանկարծ նեղացած:

— Յես նեղացած չեմ, Մարուսիա:

— Ապա ի՞նչ ե պատահել քեզ:

Սյոման նայեց Մարուսիային, վորի աչքերում թեթևակի նըկատվում եր կանացի թափանցումը գաղտնիքների: Մարուսիան ամբողջ եյությամբ գրկեց նրան: Ու այն ըստեցին այնքան հեշտ թվաց Սյոմային իր խոռվիքի պատճառը նրան հայտնելը, վոր հենց այն ե պիտի հայտներ, բայց հենց փորձեց այդ, իսկույն զգաց, վոր դա ամենից դժվար բանն եր աշխարհում:

— Զանձրալի յե այստեղ, Մարուսիա, — ասաց նա:

— Զանձրալի յե, գիտեմ: Հենց Մաքսիմն ել այդ ե ասում քեզ համար: Ուրեմն յե՛կ մեզ մոտ, հաճախ յեկ:

— Զե՛, Մարուսիա, յես չեմ ուղում իմ ձանձրույթս բերել ձեզ մոտ:

— Գուցե տուն ես ուղում գնալ:

— Տո՛ւն, ի՞նչ կա ինձ համար տանը: Ինձ համար վոչ մի հանդիսատ տեղ չկա:

— Ի՞նչ ես վնասում, վոր չես գտնում այստեղ կամ տանը, — հարցրեց Մարուսիան լուրջ դեմքով:

— Վոչինչ, — և Սյոման աչքերը զցեց գետին:

Մարուսիան վեր կացավ:

— Զեմ պնդում, գուցե քեզ համար մեզ մոտ ևս ձանձրալի յե: Այդ կարող ե պատահել: Բայց յես ու Մաքսիմը միշտ ել ապառ սում ենք քեզ—այդ իմացի՛ր: Մեղ համար ել պետք ե ընկերությունը: Վերջապես թո՛ղ հիմարությունները, այսոր թեյին յեկ մոտ, կապասենք:

Յեվ ուզում եր հեռանալ, բայց Սյոման ձեռով արեց.

— Լսի՛ր, Մարուսիա: Ճիշտն ուզո՞ւմ ես: Յես միշտ զգում եմ, վոր կարող եմ խանգարել ձեզ... ամուսիններիդ:

— Մեզ խանգարե՞ս, — զարմացավ Մարուսիան:

— Պարզը խոսենք. դուք ամուսիններ եք. կուզենաք ձեզ համար ասել-խոսել ա'յն, ինչվոր ձեզ ե հաճելի: Ի՞նչ գործ ունեմ յես ձեզ մոտ:

Մարուսիան ծիծաղեց.

— Նո՛ւ, գաղտնի խոսակցության համար ժամանակ կդառնվի:

Յեվ վերջապես ամուսինը չի փախչի:

Սյոմային դուր չեկավ վո՛չ այդ ծիծաղը և վո՛չ ել այն միտքը, վոր գաղտնի խոսակցություններ ունենում են նրանք, կարծես դա նոր բան լիներ նրա համար:

Յեվ ինչո՞ւ այդ աշկարա փաստը, վորի մասին գիտեր նա, վորը ծիծաղեցնելու չափ հայտնի և որինական բան ե՝ նրան այդպես ծանր խոցեց, յերբ դրա մասին խռավեց: Կարծես դա իսկապես փաստ դառապ, յերբ Մարուսիան ինքն ասեց այդ:

Սյոման սրտնեղեց:

«Կարող եյիր այդ բանն իսկի՛ ել չասել»— ասաց մտքում և նոթերը կիտեց:

— Մարուսիա՛, այնպես ես խոսում, կարծես ամուսին չունենաս և չես սիրում, — ասաց Սյոման և ասաց հանկարծ, վոր չմտացի չասել, — մի՞թե դու այդքան ել պահանջ չունես ամուսնուդ և ետ յերկար մենակ մնալու:

— Ինչո՞ւ չե, յես սիրում եմ Մաքսիմին: Բայց Հո չեմ կարող ամբողջ որը քիթ քիթ հետը նստել: Ուրիշ մարդիկ ել են հետաքրքիր:

Այս խոսքերը հանգստացրին Սյոմային:

— Մարուսիա, կարո՞ղ եյիր ուրիշին սիրել, — հանկարծ հարցուց Սյոման և զգաց, վոր ինքը ընկած է մի զառիվայր մակարդակի վրա և գլորվում է ակամա և արագ:

— Ի՞նչ հարց ե դա, — զարմացավ Մարուսիան:

— Վոչինչ: Տեսական հարց: Կարո՞ղ ե մի կին, վոր սիրում ե իր ամուսնուն՝ այդ ըստեյին զգալ, վոր հնարավոր ե և մի ուրիշին սիրել:

— Հնարավո՞ր, ինչո՞ւ չե: Բնդհանրապես կարող ե: Մերը

շառվում ե, սերը հանգչում ե: Ամեն բան կարող ե պատահել:

— Կարո՞ղ եյիր դու յերևակայել, վոր դու մի որ չես սիրել Մաքսիմին, այլ մի ուրիշին:

Մարուսիան մտածեց.

— Մաքսիմի՞ն... վոչ, յես նրան չեմ կարող չսիրել:

— Ամենելի՞ն:

— Ամենելին ել չե: Զեմ մտածել այդ մասին:

— Ապա մտածի՛ր:

Մարուսիան սկսեց մտածել.

— Ո՞վ ե իմանում, ինչե՞ր չեն պատահում կյանքում: Կարող

է, իհարկե: Բայց յես հիմա զգում եմ, վոր սիրում եմ Մաքսիմին:

— Իսկ Մաքսիմը:

— Մաքսիմը, ո՛, նա ինձ շատ ե սիրում:

Նրանք լսեցին:

— Այս, — շարունակեց Մարուսիան, — դա ինձ համար մեծ ուրախություն ե այս անսպասում: Առանց Մաքսիմի, ի՞նչ մեղքս ծածկեմ, յես այստեղ չեյի կարողանա գործ կատարել:

«Մարուսիան շատ ե գեղեցիկ—մտածեց Սյոման—և ի՞նչ պիտի անեմ յես»...

Յեվ նա, մտիկ տվեց նրա ձյունեղեն ուսերին, նեղ իրանին, վոր ուռենու պես ճոճվում եր ման գալու ժամանակ և բարակ, յերկար վոտներին, վոր յերածշոության պես քայլում եյին սենյակի յերկարությամբ:

«Մարուսիան աղետավո՞ր կերպով գեղեցիկ ե»— կրկնեց մըտքում Սյոման և ճնշվեց այդ զգացման ծանրության տակ:

Մարուսիան նայեց Սյոմային և մի անախորժ բան զգաց: Վոր արդեն կոտրվել ե այն սահմանաքարը, մինչեւ ուր մի տղամարդ կարող եր մոտենալ իրեն: Յեվ իրեւ փորձված բժիշկ, վոր դնում ե ճիշտ դիակնողը և գիտե վոր տվյալ հիմանդրությունը թեև թեթև նշաններ ունի, բայց անցնելուց առաջ դեռ մի ծանր չըջան ունի անցնելու և պատրաստվում ե յերկար ինամքի—այնպես Մարուսիան վորոշեց «Հիվանդլությունը» և լրջորեն իրեն հետ քաշեց:

«Պատմություն ե սկսում»—մտածեց Մարուսիան և մոտենալով պատուհանին՝ ձեռքերը ծալեց կրծքին: Նա դուրս եր նայում, խել Սյոման ճնշված դիտում եր Մարուսիայի կանգնվածքը, վորի մեջ մի հատուկ բան կար, վոր նվաճում եր մարդու—բարձր հասակի հրամայող, սաստող շեշտը, տիրական գեղեցիկությունը, հաղթող հպարտանքը:

«Սա ինձ ամեն բան պիտի անել տա»— կայծկլուց Սյոմայի դիմում:

Անդիմադրելի, բնաղբային մի ուժ, հրաբխային հարվածը պես նրա հոգու խորքերի տակից՝ խոռվեց Սյոմային: Յեվ տուածին անդամ նա տեսավ, վոր անց և կացել սահմանը: Նա միայն մի բան վորոշեց: Վոր նա չի կարող դավաճանել իր ընկերին, և չի կարող մեղնել աղետալի զգացմունքը գեղի Մարուսիան: Ուստի և դա կմնա ծածուկ յերկուսից ել: Թող տեի տարիներ թերկութ: Միակ յելքը սա յե, քանի վոր նա անդարձ «Հիմարացից» և արդեն: Յեվ ահա այս յելքը—այս թույլտվությունը, վոր դավաճան զգացմունքը դա և ծածուկ բնակվի նրա հոգու մեջ.—հանգըստացրեց Սյոմային:

Մարուսիան հրաժեշտ տվեց նրան տուն գնալու համար, բայց Սյոման ընկերացալ նրան մինչև նրանց բնակարանը:

Սյոման մի նոր կենդանություն նկատեց իր մեջ: Կենդանություն, վոր զգում ե մարդ՝ խոհերից վճիռների և դործողությունների անցնելիս: Նա նկատեց նաև, վոր իր մեջ մեկ ուրիշը իրենից անկախ գործում ե, կարգադրում, հրամայում և հիմի հայտնվել ե արդեն: Յեվ թելադրում ե:

Յեվ արդեն պարզ ե: Սյոման սիրում ե Մարուսիային: Ճիշտ և ծածուկ, իր մեջ, բայց դրա մեջ հույս կա, վոր ընկերական պարտականությունը հարվածող այս հիվանդագին զգացմունքը մի յելք գտնելով դուրս կդա իր հոգուց և կանհետանա:

Մի քանի որ Սյոման ալլրեց այդ հոգեկան վիճակով: Սակայն այդ մի քանի որը վոչ թե հանդատյան որեր յեղան, այլ ավելի շուտ պարզեցին նրա խարուսիկ վիճակը, վորին ապավինել եր նա: Նա իրեն զգաց մի հորձանքի մեջ, վորն այլևս տանում եր իրան, և ինքը դիմադրել չեր կարող:

Նա սկսեց կովել իր հետ: Արդյոք չե՞ր կարելի հեռանալ այս պատմությունից: Չե՞ր կարելի յերազել մի ուրիշի մասին: Գըտնել Մարուսիայի նմանին: Ավելի գեղեցիկը: Նա սկսեց պատկերացնել ուրիշին, նրա նմանին, նրա քրոջը: Բայց նրան զարմացրեց սիրուայդ անիմաստ կամ իմաստուն հիպնոզը, վոր կաշկանդում, կապում ե մարդու սիրտը միայն մի եյակի, միայն մի հոգու հետ: Բայց յեթե այդ եյակի արտաքին նմանությունն անդամ չեր կարող գոհացնել, մարդկային հոգու քմահաճույքներին՝ ուրեմն, ի՞նչն ե այն հատուկ եյությունը, վոր մի արարածի դարձ-

նում ե միակը, միայն այդպիսին: Իսկ յեթե Սյոման այնպես սիրի Մարուսիային, վոր ընդմիշտ կապվի նրա հետ, անկարող նրան թողնելու... իսկ յեթե Մարուսիմը այնպես ե սիրում իր կնոջը, վոր նույնպես անկարող ե թողնել կիշել Սյոմային... իսկ յեթե Մարուսիան, վոր անշունչ առարկա չէ, վոր անկոս գնա նրան, ուղիրեն տանում ե...

Մարուսիան մենակ եր: Նա հարթուկում եր յերեսսրբիչները: Նրան տեսնելով Սյոման ուշքի յեկալ: Զգաց, վոր ճամբին ավելի հեշտ եր մտածել իր անելիքի մասին, քան թե անել: Բայց ի՞նչ ե ուզում անել:

Մարուսիայի լուրջ գեմքը և բացակա Մաքսիմի ներկա պատկերը խայթեցին նրան:

— Նո՞ւ, պատմի՛ր, ի՞նչ կա, — սկսեց հասարակ ձեռվ Մարուսիան, յերբ Սյոման նստեց:

— Վոչինչ: Յեթե ինձ ուղարկեյին մի ուրիշ վայր, շատ լավ կլիներ, — ասաց հանկարծ Սյոման, չսպասելով թե այդ պիտի ասի:

— Ոհո՛, գու ուզում ես հեռանա՞լ այստեղից—ժպտաց Մարուսիան:

— Յեթե հնար լինի՛...

— Ուստասասա՞ն ես ուզում:

— Միենույն ե թե ուր:

նրանք լուցին:

— Մեղ համար տիսուր կլինի—խոսեց Մարուսիան կարծեաբնքն իրեն:

— Ինչո՞ւ պիտի տիսուր լինի—հարցրեց Սյոման և դգաց վոր սիրտն ուժգին զարկեց:

— Դե՛, սովորել ենք իրար:

— Ուրիշ ընկերներ չատ կան:

— Շատ կան, և նրանց հետ ել լինում ենք, բայց...

— Բայց...

— Մաքսիմը չատ լավ ե զգում իրան քեզ հետ: Բնկերություն ե՝ ինչքան չլինի:

«Սա ինձ ամեն քան պիտի անել տա»— կայծկուց Սյոմայի գլխում:

Անդիմաղբելի, բնազրային մի ուժ, հրաբխային հարվածք սկս նրա հոգու խորքերի տակից՝ խոռվեց Սյոմային: Յեվ առաջն անդամ նա տեսավ, վոր անց և կացել սահմանը: Նա միայն մի բան վորոշեց: Վոր նա չի կարող դավաճանել իր ընկերին, և չի կարող մեղնել աղետալի զգացմունքը դեպի Մարուսիան: Ուստի և դա կմնա ծածուկ յերկուսից ել: Թող տեսի տարիներ թերկուզ: Միակ յելքը սա յէ, քանի վոր նա անդարձ «Հիմարացել» և արգեն: Յեվ ահա այս յելքը—այս թույլավությունը, վոր դավաճան զգացմունքը գա և ծածուկ բնակիլի նրա հոգու մեջ.—Հանդըլստացրեց Սյոմային:

Մարուսիան հրաժեշտ տվեց նրան տուն գնալու համար, բայց Սյոման ընկերացավ նրան մինչեւ նրանց բնակարանը:

Սյոման մի նոր կենդանություն նկատեց իր մեջ: Կենդանություն, վոր զգում և մարդ՝ խոհերից վճիռների և գործողությունների անցնելիս: Նա նկատեց նաև, վոր իր մեջ մեկ ուրիշը իրենից անկախ գործում ե, կարգադրում, հրաժայում և հիմի հայտնվել և արդեն: Յեվ թելագրում ե:

Յեվ արգեն պարզ ե: Սյոման սիրում է Մարուսիային: Ճիշտ ծածուկ, իր մեջ, բայց գրա մեջ հույս կա, վոր ընկերական պարտականությունը հարվածող այս հիվանդագին զգացմունքը մի յելք գտնելով դուրս կգա իր հոգուց և կանհետանա:

Մի քանի որ Սյոման ապրեց այդ հոգեկան վիճակով: Սակայն այդ մի քանի որը վոչ թե հանգստյան որեր յեղան, այլ ավելի շուտ պարզեցին նրա խարումիկ վիճակը, վորին ապալինել եր նա: Նա իրեն զգաց մի հորձանքի մեջ, վորն այլևս տանում եր իրան, և ինքը դիմադրել չեր կարող:

Նա սկսեց կովել իր հետ: Արդյոք չե՞ր կարելի հեռանալ այս պատմությունից: Չե՞ր կարելի յերազել մի ուրիշի մասին: Գըտնել Մարուսիայի նմանին: Ավելի զեղեցիկը: Նա սկսեց պատկերացնել ուրիշին, նրա նմանին, նրա քրոջը: Բայց նրան զարմացրեց սիրուայդ անխմասա կամ իմաստուն հիպնոզը, վոր կաշկանդում, կապում և մարտու սիրտը միայն մի եյակի, միայն մի հոգու հետ: Բայց յեթե այդ եյակի արտաքին նմանությունն անդամ չեր կարող գոհացնել, մարդկային հոգու քմահաճույքներին՝ ուրեմն, ի՞նչն ե այն հատուկ եյությունը, վոր մի արարածի դարձ-

նում ե միակը, միակ այլպիսին: Իսկ յեթե Սյոման այնպես սիրի Մարուսիային, վոր ընդմիշտ կապվի նրա հետ, անկարող նրան թողնելու... իսկ յեթե Մաքսիմը այնպես ե սիրում իր կոնջը, վոր նույնպես անկարող և թողնել կ զիջել Սյոմային... Իսկ յեթե Մարուսիան, վոր անշունչ առարկա չե, վոր անխոս դնա նրան, ով իրեն տանում է...

Մարուսիան մենակ եր: Նա հարթուկում եր յերեսսրբիչները: Նրան տեսնելով Սյոման ուշքի յեկավ: Զգաց, վոր ճամբին ավելի հեշտ եր մտածել իր անելիքի մասին, քան թե անել: Բայց ի՞նչ ե ուզում անել:

Մարուսիայի լուրջ գեմքը և բացակա Մաքսիմի ներկա պատկերը խայթեցին նրան:

— Նո՛ւ, պատմի՛ր, ի՞նչ կա,—սկսեց հասարակ ձեռվ Մարուսիան, յերը Սյոման նստեց:

— Վոչինչ: Յեթե ինձ ուղարկեյին մի ուրիշ վայր, շատ լավ կլիներ, —ասաց հանկարծ Սյոման, չոպասելով թե այդ պիտի առի:

— Ոհո՛, դու ուզում ես հեռանա՞լ այստեղից—ժպտաց Մարուսիան:

— Յեթե հնար լինի՛...

— Ուռսաստա՞ն ես ուզում:

— Միենույն ե թե ուր:

Նրանք լոեցին:

— Մեզ համար տիսուր կլինի—խոսեց Մարուսիան կարծեանքն իրեն:

— Ինչո՞ւ պիտի տիսուր լինի—հարցրեց Սյոման և դժաց վոր սիրտն ուժգին զարկեց:

— Դե՛, սովորել ենք իրար:

— Ուրիշ ընկերներ շատ կան:

— Շատ կան, և նրանց հետ ել լինում ենք, բայց...

— Բայց...

— Մաքսիմը շատ լավ է զգում իրան քեզ հետ: Ծնկերություն ե՝ ինչքան չլինի:

— Իսկ դո՞ւ ինչպես...

— Յե՞ս, —և Մարուսիան այնպես մնշեց հարթուկը, վոր մերկ ճերմակ ուսը ուռչելով դուրս լողաց զգեստի տակից:

Սյոման նկատեց այդ և շփոթվեց:

— Այս, դու, —ասաց Սյոման և զզաց, վոր ձայնը իրենը չեք, այլ մի ուրիշ մարդու, վորին ինքը լուսմ է: Յեվ հաղաց հուզմունքից խեղդված:

Այդ նկատեց Մարուսիան և բնաղբաբար լոեց:

— Մարուսիա, գիտե՞ս ինչ, —ասաց Սյոման դարձյալ եր համար ոտարութիւնով, —յես սիրում եմ քեզ:

Այս ասելով խկույն մտածեց, «ի՞նչ շուտ յեղավ այս ամենը»:

Յեվ սակայն անսանելի հաճույք զզաց, ինչպես պատերազմի ժամանակ վաղուց սպասված մարտը սկսելիս: Այսինքն «վերջապես, ինչ կլինի՝ կլինի»:

Լուսթյուն տիրեց: Սյոման սպասում եր անսպասելի մի բանի: Ահա փոթորիկը կսկսվի:

— Յես զգում եյի այդ, —պատասխանեց Մարուսիան խուլ և չանգիստ:

Յեվ գլուխը կախ շարունակեց հարթուկելը: Լոեցին, բավական յերկար:

— Յեվ հետո՞ —դողալով հարցրեց Սյոման և աչքերը մթնոծ նայեց Մարուսիային:

— Հետո՞ ... հետո վոչինչ: Դու կմնաս մեղ բարեկամ և ... կմոռանաս: Կատառահի: Հասկանում եմ:

Բոլորովին չեր սպասում Սյոման այսպիսի վախճանի: Նա ինչ վոր հիմար ճամբի վրա յեր, վորից հետ գալ չեր կարող, ինչպես և կանգնել—պետք եր առաջ գնալ: Ու վեր թոչելով մոտեցավ Մարուսիային: Սա վոչ մի շարժում չտրավ:

— Մարուսիա:

Պատասխան չեղավ:

— Մարուսիա, —և թեւ տարավ Մարուսիայի ուսին, —թուլյ տուր Մարուսիա:

Մարուսիան հանդարտ շարժումով ուսն աղատեց և շարունակեց հարթուկելը:

Աղա հանգիստ ասավ.

— Նստի՛ր տեղու:

— Մարուսիա, —շնչաց Սյոման, —յես վոչինչ չեմ կարող ասել քեզ բացի այն, վոր հիմա լսեցիր: Գուցե նեղացա՞ր: Լսի՛ր, բան եմ ասում: Զե՞ս լսում: Նո՞ւ, մնաս բարո՛վ:

Սյոման դուրս թռավ գոնից:

— Սպասի՛ր—հրամայեց հետեւից Մարուսիան:

— Ի՞նչ ե, —խիստ ձայնով հարցրեց Սյոման, կանգնեց և աչքերը խոժողած նայեց գետնին:

— Գնա՛ տուն, բոլոր հիմարություններդ թո՛ղ այնտեղ և ելի յե՞կ: Ամոթ ե քեզ պես տղամարդին, վոր այդպես փալաս ես դառնում: Վերջապես դու Մաքսիմի ընկերն ես:

Սյոման սպասեց, վոր Մարուսիան շարունակի, դա դուր յեկալ նրան: Նա ելի կանգնեց, վոր Մարուսիան շարունակի եր խայթոցը, բայց Մարուսիան հարթուկում եր և չեր նայում նրա կողմը:

Սյոման պոկլվեց տեղից և արագ քայլերով գնաց տուն:

Ամոթը, խղճի խայթը, իր նվաստացումը և Մարուսիայի բարեկամությունը այնպես խանգարելու զգացումը նրան խարանեց շիկացած յերկաթի պես: Նա բաց արեց կոնյակի շիշը և բռնեց բերանին:

Մինչև ուշ գիշեր բերնքսիլայր ընկած եր տախտին, բայց քունը չեր տանում:

Այնուհետև մի քանի որ կամ պաշտոնատեղին եր կամ տանը: Զեր վճռում գնալ «նրանց կողմը»:

Միայն մի շաբաթ հետո յեկավ Մաքսիմը և սկսեց միամիտ պատմել ընկերներից մեկի թյուրիմացությունները մաքսային վարչության հետ:

— Գնանք մեղ մոտ ճաշի, —հանկարծ ասաց Մաքսիմը:

Սյոման չհամարձակվեց խոսել:

— Այո՛, այո՛, վե՛ր կաց: Մարուսիան սպասում ե քեզ:

«Մարուսիային»... Սյոման և՛ զարմացավ, և՛ թեթևություն զգաց: Ուրեմն Մարուսիան ներել ե և մոռանում ե: ինքը և՛ս թեթև ու մոռանալի համարեց իր արածը:

Ի՞նչպես Մարուսիան փարատում ե և հեշտացնում ամեն գժվար բան:

Գնացին: Ներս մտնելիս Սյոման աչքի տակով փնտուց Մարուսիային: Բայց նա տանը չեր:

— Վո՞րակեղ և Մարուսիան:

— Գնացէլ եւ գյուղ: Կարծեմ ընկերները ներկայացում են իշխազմակերպում յերկաթուղու կայարանի բանվորների և սահմանապահների համար: Մարուսիան չի սիրում խաղալ, բայց պարտականություն է հանձն առել: Շուտով մեղ գյուղում բնակուրան կտան, ել կարիք չի լինի այդպիսի բաների համար ահադին ճտմբա կտրել: Մարուսիան սիրում է ժխոր: Հիմար Յեղորովն ինձ առում է մի՛ թողնի Մարուսիային աղերանց մեջ՝ կիսեն:

— Դո՞ւ ինչ ես ասում:

— Հիմարություն, ի՞նչ պիտի ասեմ . ո՞վ կարող է խլել Մարուսիային: Մարուսիան ի՞ր ե, ի՞նչ ե: Յել վերջապես ամեն բանից վախենալով ո՞ւր կդնա: Լա՛վ սոցիալիզմ կշնենք, յեթե կը նիկներս գնենք վանդակ:

— Զե՞ս խանդում:

— Իսկի՞:

Մարուսիան յեկավ: Նա հասարակ և ընդհանուր ձեռվ ասաց . Բարի ո՛ր:

— Բարի ո՛ր,—շշնջաց Սյոման և նայեց Մարուսիային:

Սա դարձյալ ընդհանուր ձեռվ ասաց.

— Մեր կոլեկտիվում զեկուցում կա այս յերեկո փոքոգիսմների մասին:

Մարուսիայի ամբողջ եյությունից չնչում եր մի հանելուկ: Վերջապես ի՞նչ և նա . մտերիմ հոգի՞ , դավադի՞ր, թե կոկետ: Նրանից բուրում եր մի ջերմ հարազատություն, վոր ուղղակի դրկում եր մարդու: Զարմանալի հեշտ և թվում ամեն բան նրա հետ,—և՛ կյանքը, և՛ մահը, և՛ անկումը, և՛ վերածնությունը:

Մարուսիայի բարձրուղեց հասակը և հպարտ գծերը դարձյալ հնչեցին Սյոմային: Նրա կարճ շրջազգեսար և թևերի, ուսերի բացվածքները չնորհալի ընկվածքով վիժում ելին ցած, մինչ ինքը Մարուսիան սլանում եր դեպի վեր գլխի, ուսերի ու վզի վհռական բոնվածքով: Նա նիշար եր թվում, բայց հասուն միանները մատնում ելին մի գիրդ ու պիրկ մարմին:

Սյոման զգում եր, վոր վերջնականապես տեղի յե ավել և ընկճվել: Վոր այդ գեղեցկության դիմագրել չի կարող: Վոր նա մի բան կանի:

Ճաշը պատրաստ եր: Նստեցին սեղանի շուրջը: Մարուսիան բացեց կոնյակի շիշը:

— Քո կենացը, Սյոմա , ասաց Մարուսիան, — շատ մի ախրի, քեզ կլծենք աշխատանքի:

Խմեցին առաջին ըմպակները: Խմեց նաև Մարուսիան:

Սյոման քիչ-քիչ բացվեց: Կարկամությունը, վորի պատճառը այն գեղքն եր, կորցրեց իր սրությունը: Ուրեմն Մարուսիան կամ ներել է իրեն և նշանակություն չի տալիս, կամ կարող է պատահել չի իմանում ինչով ծածկի անցյալի մերկ մարմինը, վոր աչքի չերեա:

Մարուսիան վերցրեց գիթառը և սկսեց հանդիսա ու լուրջ նվագել: Մաքսիմը կրկին վոգեռը վեց:

Դուրսը ճամբի ծայրին մի ճիւղոր յերկաց, վոր յերագում եր՝ սանձով քաշ տալով մի ուրիշ ձի: Նա վեր ու վար եր նետվում ձիու վրա՝ գալով դեպի այս կողմը և փոշին քառասմբակ պայթում եր ձիերի սմբակների տակից:

Մոտեցավ. սահմանապահ կարմիր բանակային եր:

Մաքսիմը դուրս յեկաղ.

— Ի՞նչ կա, Յեմելյա՞ն:

— Շտապ գրություն, — ասաց կարմիր բանակայինը և պայուսակից հանեց մի ծրար:

Մաքսիմը առավ ծրարը, ստորագրեց գրքույկը: Կարդաց:

— Նո՞ւ, լավ, — մոմուց Մաքսիմն ու ծոծրակը քորեց:

— Ի՞նչ կա, — հարցրեց Մարուսիան:

— Իսկույն զնում եմ պարետային վարչություն:

— Յե՞րբ կգաս:

— Զդիտեմ: Դուք վերջացրեք ձեր ճաշը:

Գործը սովորական եր, և Սյոման չհարցրեց նրա մասին:

Մաքսիմը նստեց ձին և առաջ ընկավ: Կարմիր բանակայինը խթեց իր ձիուն և մոտենալով նրան՝ զնաց պահելով մի պատշաճ հեռավորություն:

Մաքսիմի գնալուց հետո Սյոման կարծես ընկավ թակարդը: Կարծես մի աներեւյթ ձեռ նրա համար դավ նյութեց, վորից աղավել չեր կարողանալու: Կոնյակից և յերաժտությունից տաքացած արյունը քունքերի մոտ զարկեց նրան լսելի ուժով, և նա աչքերի տակով նայեց Մարուսիային, վորը անհոգ յերեւյթով կնտկնտացնում եր դիթառը և զարթեցնում անկապ ակորդներ իր յերկարուկ, գողարիկ մատներով:

Լուռ ելին։ Սյոման չեր լսում նվազը, և դժու եր, վոր դա
ծածկում եր անհարմար լուսությունը։ Նա գուրս եր նայում։

Հանկարծ նրանց հայացքներն իրար հանդիպեցին։

Մարուսիան կատակ-լուրջ դեմք շինեց և սուր նայելով Սյո-
մային՝ շրթունքները ուռեցրեց։

— Հո՛ւ, յերեխա՛...

Ու շարունակեց նվազը։ Սյոման չպատասխանեց։ Մարուսիան
ներողամիտ ու կիսափլիտ նայեց նրան։ Անսահման կանացի մեղ-
մություն կար նրա այդ հայացքի մեջ, չոյոդ, գուրգուրիչ մի
ցոլք։ Յեվ ի՞նչպես Մարուսիայի այդ մեղմ, խաղաղ զարմանքը,
հանդիստ խոսքերը անբացատրելի ուժով մեղմացնում, հեշտ եր
դարձնում ամեն ծանր, մեղսալից միտք, փոխելով անմեղ, հա-
սարակ խաղի ամեն վարմունք, վոր կարող եր թույլ տալ Սյո-
մայի բորբոքված յերեակայությունը, կարծես պատրաստ զիջե-
լու ամեն ինչ, վոր թերաղը մարդու քմահած սիրառ։ Յեվ դա
Մարուսիայի գեղեցկությունն եր, վոր իր ներդաշնակ զծերով
ուղղակի յերգում, նկարվում եր նրա սլացիկ մարմնի ձևերում,
թի՞ նրա մեղմ, քրոջական, գրեթե մայրական խոսքերի, գուրգու-
րիչ ժամայքը—բայց դա այլպես եր։ Յեվ դա ավելի յեր բոր-
բոքում, գրավում Սյոմային։ Մարուսիայի այդ գեղեցկությունն
ու խոսքերը գրկում ելին Սյոմային, նա ընկղմվում եր այդ ան-
դունդը՝ զգալով մի քաղցր գլխապտույտ, և մեղվանում եր պար-
զապես։ Սյոման սկսեց մտածել, վոր այդ չոյիչ, գուրգուրիչ կնոջ
մեջ ավելի կա սեր ու գգվանք, քան թե պետք է միայն մի եյակի։
Սերը—մի՞թե մեկինն է միայն։ Սերը—մի՞թե սեփականություն է
դա։ Մեկի՞ սեփականությունը։ Ողը, արեը, ջուրը, կրակը—մի՞-
թե մեկինն է միայն։ Ինչո՞վ է սերը տարբեր ողից, արեից, ջրից,
կրակից։ Վո՛չ, սերը մութ բան ե։ Ինչպես և բնությունը։ Ողը,
արեը, ջուրը, կրակը։ Սերը չգիտե, թե ում է գնում։ Նա տունկի
պես ե։ Պոկի՞ր տունկը իր հողից— կարծես նա բողոքում է իր
արմատի կտրտված թելիկներով։ Բայց տնկում էս նրան ուրիշ հո-
ղում՝ այնպես ե աճում, ծաղկում, կարծես այստեղ եր բուսել։
Հիմարությո՛ւն— սերը սեփականություն չե։

Մարուսիայի ամեն բան թույլարող, այնքան մտերիմ թվա-
ցող գեղեցկությունը Սյոմային հեշտացնում եր այս մտքերն ա-
նելիս։ Յեվ Սյոման առաջին անդամ պարզ տեսավ, վոր ինքը ուր

վոր գնում և հիմա, մղվում մի բանի, վոր այլ ժամանակ կսասա-
վեր անդամ մտածելուց։ Յեվ նա վճռեց, վոր դա նույնքան հեշտ
ու ախորժ կլինի, վորքան և Մարուսիան գեղեցիկ ու մտերիմ և
իրան։

Մարուսիան դադարեց նվագելը և դարձյալ նույն կատակ-
լուրջ ձեռվ ասաց։

— Զես ամաչո՞ւմ . . . «սիրահարվել ե»։ — Ասացե՞ք խնդրեմ։
Կ'անչ ռոմանտիկա։ Վոչի՞նչ, վոչի՞նչ, կմոռանա՛ս։

Ապա ընդուստ շարժումով վեր թուչելով մոտեցավ Սյոմային և
ձեռը նրա ուսին հպած՝ կոացավ նայեց նրա աչքերի մեջ։

— Յերեխա՛ . . .

Սյոման ձեռը տարավ Մարուսիայի իրանը գրկելու։

Մարուսիան թեթեակի հետ պահեց իրան ու գնաց դեպի գե-
թառը։ Սկսեց մեղմ յերգել գիթառի նվագակցությամբ։

Հետո աչքերը խոժուեց Սյոմայի վրա ու մեղմ ձայնով սաս-
տեց։

— Նո՛ւ, Սյոմկա, բավական ե։ Թո՛ղ հիմարությունները։
Յեր քեզ ասացի, վոր թողնես։ Խսկ դոււ . . .

Սյոմայի աչքերին կարծես մի փառ յեկավ։ Մարուսիան թվաց
ինչ վոր մշուշի մեջ, շա՞տ հեռու։ Նրա սիրան ուժգին զարկեց, և
նա ծանր հեալով վեր կացավ, մոտեցավ Մարուսիային։ Աս շա-
րունակեց նվագելը։ Բայց այլևս լուրջ եր։

— Հետո՞—, ասաց լուրջ, և կողքանց նայելով շարունակեց
ձանկուտել գիթառը։

Սյոման անվճռական, հարբածի պես կանգնել եր նրա մոտ։

— Հետո՞—, կրկնեց Մարուսիան բարձր և նվագը կտրեց։

Սյոման լուռ եր։

— Սյո՞մա, դու հիմար չե՞ս, — ասաց Մարուսիան մտերմական
շեշտով, — յես ուրիշի կինն եմ, հասկացի՞ր։

Սյոման դարձյալ լուռ մնաց։

— Գնա տե՛ղո— ասաց խիստ տոնով Մարուսիան։

Սյոման պղտոր աչքերով նայեց Մարուսիային։

— Սյոմա՞ , գո՞ւ գժվել ես, — սկսեց Մարուսիան, բայց յերք
հանկարծ վեր նայեց Սյոմային, նկատեց մի այնպիսի գեմք և աչ-
քեր, վոր իրեն հիշեցրեց իր քեռուն, վորին սպիտակները մորթե-
ցին նրա աչքի առջև, և նա տեսավ դաշույնը նրա կոկորդին
քսելիս։

Չեր սպասում, բայց հիմա ուշ եր այլիս: Սյոման կարծես նրա հայացքին եր սպասում. հանկարծ բռնեց նրա ուսերից և քաշ տվեց դեպի մահակալը:

— Սյո՞մա, —սաստեց նրան Մարուսիան ցած ձայնով և հետ մղեց նրան:

Սյոման խոպոտ մի բան ասաց, վոր կոկորդում խեղղվեց, և կրկին կպավ Մարուսիայի ուսերին: Մի տեսակ հեշտ ու քաղցր եր թվում նրան այս քայլը, վոր նա անում եր: Բոնաբարության մասին չեր մտածում, այլ իր արածը համարում եր մի վարմունք, վոր Մարուսիան թույլ պիտի տար նրան անշուշտ: Նրան թվում եր, վոր ինչ ել անելու լիներ, Մարուսիան վերջիվերջո կներեր նրան վորպես ընկեր, վորպես մտերիմ, վորպես գեղեցիկ և բարի կին: Հետո զգաց մի այնպիսի մղումն, վորին դիմադրելու վոչ թե ուժը, այլև ցանկությունը կորավ: Մնաց տարերային խելագար մոլեզնությունը: Նրան այնպիս եր թվում, թե ինքը չե այդ անողը, այլ մի եյակ, վոր կոխկրտելով թե իր և թե Մարուսիայի բոլոր հասկացողությունները՝ գալիս եր անցնելու նրանց վրայով:

Մարուսիան թեթևակի դիմադրեց նրան՝ կարիք չտեսնելով լուրջ, մարմնական ուժի՝ հույս ունենալով այլ կերպ արգելելու: Բայց Սյոման սկսում եր իրան մոռանալ: Նա մինչև անդամ դըժ-դոհությամբ ծամածուց դեմքը, վոր այդ կինը դիմադրում է, չի զգում այն անհուն քաղցրությունը, վոր կա իր վարմունքի մեջ:

— Սյոմա՛, թող, — ճչաց մեղմ Մարուսիան և կատվի պես դուրս վոլորվեց նրա դրկից:

— Թո՛ղ ինձ, ասում եմ, դո՛ւրս գնա, — դոչեց Մարուսիան՝ ջանալով դուրս վազել: Սյոման հարձակվեց նրա վրա և կրկին դրկելով նրան՝ սեղմեց թերը: Ահա համբուրեց: Մարուսիան փախցրեց դեմքը: Շատ սառն, անախորժ և հասարակ թվաց Սյոմային այդ համբուրը: Կարծես այն վսեմ եյակը փախավ Մարուսիայի մարմնից և տեղը թողեց դեմքի անկյանք մորթին: Նա չհամբուրեց «Մարուսիային»:

Յեվ ինքը բաց թողեց Մարուսիային:

— Բանդի՛տ, — ճչաց Մարուսիան դողահար բարկությամբ և դուրս վազեց սենյակից՝ մազերը խոխիվ:

Մի կարմիր բանակային եր անցնում հարեան տան մոտով: Նա նկատեց Մարուսիայի հուզումը, և կանգ առավ մի պահ: Մա-

բուսիան ներս փախավ և մազերը ժամաներով սանրելով հրամայեց.

— Դնա՛ իսկույն այստեղից:

Սյոման խլեց գդակն ու դուրս գալով՝ արագ քայլեց դեպի տուն:

«Մի՞թե նա այդպես հասարակ ե նրան հպելիս»—մտածեց նա և զայրացավ իր արածի վրա:

Ամբողջ գիշեր նա խմում եր ու տախտի վրա ծխում: Բայց չեր կարողանում հարբել: Յեվ դռանը նայելով սպասում եր Մաքսիմին: Նա մի տեսակ անտարբերություն եր զդում դեպի Մարուսիան: Շատ կոպիտ դիմավակ իր սրտին նրա հանդիմանությունը, անսպասելի, ծանր քարի պես: Իր վարմունքի վրա նա չեր անդրադառնում:

Ամբողջ յերկու որ նա շփոթ ու անձուկ տրամադրությամբ անցկացրեց՝ գնալով պարետային վարչություն: Իրեն թվում եր թե իր բոլոր զգացումները մի անդամից փշրվեցին, և նա վոչնչով կապված չե Մարուսիայի հետ: Յեվ ուրախացավ:

Բայց սպասում եր Մաքսիմին: Ինչո՞ւ—ինքն ել չգիտեր:

Նա Մաքսիմին սպասում եր տանը, բայց պատահեց ճամբին, յեղեգնուտի մոտ:

Մաքսիմն ուզում եր կողքից անցնել արագ: Բայց յերբ հավասար դեռները տարան ատրճանակներին, բայց և ըստ ոռվորության իսկույն թողին:

— Նո՞ւ, —արեց Սյոման:

— Նո՞ւ . . . —կրկնեց Մաքսիմը և ծանր շունչ քաշելով, նայեց Սյոմային, լոեց մի փոքր և ապա իրան տիրելով՝ ասաց, — յես քեզ շան սատակ կանեյի այս բոպելիս, յեթե չլիներ կուսակցական դիսցիպլինան:

— Յես ե՛լ նույնը, —կարճ կտրեց Սյոման ցած ձայնով:

Կգաս կուսակցական դատի: Կտեսնվենք, —սպասնաց Մաքսիմը:

— Գիտեմ, —պատասխանեց Սյոման մռայլ:

Մաքսիմը կրկին նայեց Սյոմային, ուզում եր մի բան ասել
ավելի ծանր, ավելի ազդու, բայց միայն ասաց.

— Լի՛րը և հանդուգն մարդ, ա՛յ թէ ինչ...

Սյոման շուռ յեկավ գնալու:

— Բանդի՛տ, —բուռնցքով սպառնաց Մաքսիմը և կարճ կա-
պեց պատմությունը, վորովհետև անկյունից թուրք գյուղացիներ
յերեացին:

Ու արագ հեալով գնաց պարետային վարչություն:

Սյոման գնաց իր ճամբան: Բայց կարծես նրա մեջքը մեկը
դաղեց կրակե մարակով: Այդպես զգաց նա մինչև Մաքսիմի ան-
հետանալը: Հետ նայեց: Նա անցել եր անկյունը:

Ուրեմն սրա՛ համար եր սպասում Մաքսիմին: Սպասում եր,
վոր Մաքսիմը ևս վորակի իր արածը: «Բանդի՛տ...» Սա ել. ե
ասում այդ խոսքը: Յեվ Սյոման հիմա՛ յեր պարզ պատկերաց-
նում, վոր իր արածը, վոր առաջ այնպես թեթև, քաղցր, յերա-
զային եր թվում, հիմա մի կոպիտ, իրական բան և այլն:

Յերեկոյան նրա մոտ յեկավ Միտյան:

— Կուսակցական դատը տեղի կունենա յերեք որից հետո, —
ակսեց նա առանց նախարանի և կանգնեց սենյակի մեջ տեղ:

Սյոման բութ հայցքով նայեց նրան և յերեսը շրջեց դեպի
պատուհանից դուրս:

— Հը՛մ, —շարունակեց Միտյան, —գո՛րծ բացվեց: Կարող ե
դատը շատ լուրջ վերջանալ, —ավելացրեց նա՝ տեսնելով վոր Սյո-
ման չի խոսում, —և քեզ կարող են... այո...

— Այդ մեկը ներողություն կանես, —սառը կտրեց Սյոման:

— Վո՞նց թէ: Գիտե՞ս ինչ ես արել, —քննող աչքերով նայեց
նրան Միտյան:

— Գիտեմ... —պատասխանեց Սյոման ցած ձայնով, լոեց և
ապա հանդիսա հարցրեց: —Ի՞նքն ե դանդատվել Մաքսիմին, թե
Մաքսիմն ե հարցրել...

— Դա կարեոր չե: Մաքսիմն ե դանդատվել թիջին:

— Ավելի լավ. ով տուժել ե՝ թող նա ել բավարարվի:

— Ի՞նչպես թէ ով տուժել ե. կարծում ես միայն Մաքսիմին
ե տուժել կամ Մարո՞ւսիան, —և Միտյան մոտեցավ Սյոմային ու
բուռնցքը հպեց նրա քթին, —այստեղ տուժել ե կուսակցական ե-
տիկան: Հասկանո՞ւմ ես: Դու գիտե՞ս թէ ինչ ես արել: Բոնարար-
ման փորձ: Խելքդ կորցրե՞լ ես:

Սյոման լոեց:

«Ուրեմն իմ արածը նկատվում ե իբրև բռնաբարման փորձ»—
մտածեց նա խայթելով այդ բառից: «Յեվ ուրիշ վոչի՞նչ—միայն
բռնաբարությո՞ւն»: Նրան շատ անախորժ թվաց այդ պաղ, գա-
տարանական բառը: Ինչպես տաք մարմնին սառ յերկաթը: Շատ
եր կոպիտ, անխնա և անլերապահ—«բռնաբարությո՞ւն»:

Բջիջը քննություն նշանակեց: Զեականությունները քիչ եյին,
բայց ձեւականությունների մեջ շատ բաներ կային, վոր մեքենա-
կան եյին, կարծես իբրև՝ Սյոմային չլերաբերող: Ոտար, կոչտ
առարկայի պես ընկնում եր շարունակ նրա զգացումների թելերի
մեջ և կտրտում, ցալիցնում—«բռնաբարությո՞ւն»:

Նախադահում եր Միտյան: Ճիշտ ե՝ նրա արձիճե կերպարան-
քը չեր սարսափեցնում Սյոմային, բայց նրան հիշեցնում եր քա-
զաքացիական կոխվների Միտյային, վորն իր ձեռքով յերկու ըո-
պեցնում գնդակահարեց իր ընկերոջը մի հանցանքի համար: Միտ-
յայի ձեռը չեր գողա և Սյոմայի առջե, բայց անցել են այդ որերը
և գործը ուրիշ եր հիմա:

Մյուս ընկերները մոայլ նայում եյին հատակին և լուսմ:
Այնտեղ եյին Մաքսիմն ու Մարուսիան: Սա ավելի հանդիսա եր
յերեսը, քան պետք եր մի նման դատի ժամանակ:

— Ի՞նչպես եք ներկայացնում դեպքը, պատմեցե՞ք, — դիմեց
Միտյան Մարուսիային:

Մարուսիան սկսեց պատմել:

— Յես չգանգատալեցի Մաքսիմին: Յես մի որ թագցրի դեպ-
քը, ճիշտն ասած փորձելու համար, թե արդյոք կարելի՞ յե մոռա-
նալ... Բայց վերջը վճռեցի հայտնել Մաքսիմին, և դա վոչ նրա
համար, վոր Մաքսիմը կարող եր հարցնել ինձ, թե ինչո՞ւ Սյո-
ման, ընկեր Միտյանովը, չի գալիս մեզ մոտ, վո՞չ նրա համար, վոր
իմ թագցնելը այդ դեպքում կարող եր ավելորդ կասկածների և
տանջանքների տեղիք տալ, այլ պարզապես նրա համար, վոր իմ
և Մաքսիմի, և յեթե ուզում եք նաև ընկեր Միտյանովի ինքնասի-
րությունից ցած բան կլիներ այդպիսի անարժան գաղտնիքներ
պահելը: Յես կարծում եմ, ընկեր Սյոման ևս համաձայն կլինի

ինձ հետ, վոր յես պարտավոր եյի հայտնել այդ դեպքը Մաքսիմին: Յես հայտնեցի և խոսք առա Մաքսիմից, վոր նա իրեն կուսակցականին վայել կերպով կպահի: Նա կատարեց իր խոստումը: Յես ուրախ եմ: Բայց նա վոր հայտնեց բջիջին—դա իր գործն ե... թերեւս յես...

Մյոման սաստիկ ցանկացավ լսել վերջին խոսքերի շարունակությունը, բայց Մարուսիան չվերջացրեց:

— Շատ լավ, պատմեցե՞ք ինչպես յեղավ:

Մաքսիմը մոայլվեց և դաժան կերպարանք առավ: Մարուսիան ծամծմեց շրթունքները:

— Յես կպատմեմ—միջամտեց Մյոման:

— Ընկե'ր, մի' խանդարեք—ընդհատեց նախագահը:

Մարուսիան պատմեց դեպքը հասարակ ձևով, առանց ընդգծելու, առանց ծանրացնելու:

Մի քանի հարց ուղղելով Մաքսիմին և Մարուսիային՝ նախագահը դիմեց Մյոմային.

— Ընդունում եք ձեր հանցանքը, ընկե'ր:

— Այսինքն ինչպես,—հարցրեց Մյոման, —դուք հարցնում եք ձեականի՞ կողմից... թե...

— Ընդունում եք բոլոր ձեականի և բովանդակության կողմից... վոր դուք ցանկացել եք բունաբարություն գործ դնել—չկարողացավ ավելի մեղմ և հավաք խոսքով արտահայտվել նախագահը:

— Դուք տերմինները ջոկելո՞վ եք խոսում, թե՞ կարիք կաձեղ...—զայրացավ Մյոման:

— Խնդրեմ առանց հուղվելու և վիրավորվելու, —կտրական խոսեց նախագահը—պարզ՝ ընդունում եք ձեր հանցանքը:

— Յես ասում եմ՝ դուք տերմինների մասին հասկացողություն ունե՞ք, թե յերեխայի պես եք գործ ածում բառերը...

— Դուք վիրավորում եք, ընկե'ր— ձայն տվին բջիջից լուս ընկերները:

— Յեթե դուք կարծում եք, թե յես եմ ձեղ վիրավորում և վոչ թե դուք ինձ,—այս ժամանակ յես հրաժարվում եմ բացատրություն տալուց:

Յեվ Մյոման վեր կացավ:

— Մյոմանակ գործը կհանձնվի. ուղղակի կվէ կուսակցական կոլեգիային:

— Ինչպես կուպե՞ք:

— Դա աններելի վերաբերմունք ե, ընկե'ր, — ձայնը բարձրացրեց բջիջի անդամներից մեկը, — դա կոմունիստին վայել չե: Փոխանակ անկեղծ խոստովանելու հանցանքը, դուք բոնում եք ինչվոր մեշշանական փրկած դիրք և ուղում եք գործը ճգճգելով քնացնել: Դա հեղափոխականի վարմունք չե:

Մյոման կողքանց խեթ մտիկ տվեց նրան:

— Դուք յերեխա յեք, — ասաց նրան Մյոման, — և լավ կլինի այդ ձեռով չխոսեք:

— Ի՞նչ ձեռով ե խոսում սա, — դոչեցին բջիջի մյոււ անդամները, — ի՞նչ ե յերեակայում իրան, — հանձնեք գործը կուսկոլեգիային, պրծավ գնաց:

— Ուրեմն առաջարկ կա գործը հանձնել կուսկոլեգիային: Համաձա՞յն եք:

— Այո, այո, համաձայն ենք: Թե չե, ի՞նչ ե սա իսկապես...

Բոլորը վեր թռան և սկսեցին մի անդամից խոսել, բողոքել: Իսկ Միտյան ծխախոտը վառելով հեռացավ սեղանից: Մյոման արագ դուրս գնաց:

Նրա հետեւից պայթեց մի տաք վիճաբանություն:

— Նա խենթացել ե, հանդուգն ե դարձել:

— Վերջապես ի՞նչ ե ուզում: Ընդհատակյա աշխատա՞նք ե ասում, քաղաքացիական կոի՞վ—դիտենք, յոթը կաշի մաշել ենք դրանց մեջ, ի՞նչ ե ուզում ասել դրանով: Գլխներիս խա՞ն ե ուզում դառնալ:

— Նու, ընկե'ր, այլ ևս ավելորդ ե մեր խոսելը: Նա պիտի յենթարկվի բջիջի պահանջին: Համենայն դեպս մենք մեր դատավճիռը կարձակենք: Վե'րջ տվեք:

— Ի՞նչ ե, — շարունակեց բողոքողը—վոր հեղափոխական ե, կոմունիստ, պետք ե աջ ու ձախ բռնաբարի՞ և բացատրություն ել չտա՞: Ո՞վ ե նա....

— Լավ, լավ, մի' տաքանա, — սաստեց Միտյան մեղմակի և ժողով գնաց դուրս:

Մյոման դուրս գալով բաց դաշտը՝ դանդաղ գնում եր: Նա

չեր կարողանում հաշիվ տալ կատարվածի մասին՝ այնքան համուռն և անսպասելի կոպիտ եր թվում նրան այդ բարսը:

— Միւնույն ե, բջիջը իր գատավձիռը կլայացնի և կհանձնի կուսկուեգիյն, չես փախչի, ախպե՛ր ջան,—լովեց Սյոմայի հետեւ Միւյայի ձայնը:

Սյոման կանգնեց և դեմքը չուռ տալով Միւյայի կողմը՝ ասաց թիւռ ձայնով:

— Դո՞ւ ինչ ես ձեռ առնում մարդու:

Միւյան դեմքը մոտեցրեց նրա դեմքին՝ սուր հայացքը խրեց նրա աչքերի մեջ.

— Ե՛յ, սատանի լակոտ. դու կարող ես կուսակցությունից դուրս թռչել, իմացի՛ր այս:

— Թո՛ղ այդ ձեր,—խոսեց խուլ ձայնով Սյոման և վերեկց ներքեւ մտիկ տվեց Միւյային:

— Իսկի Ե՛լ չեմ թողնի այս ձեր—սեղմեց Միւյան, —քեզ ասում եմ դուրս կվանդեն քեզ կուսակցությունից, հասկանո՞ւմ ես, չա՞ն վորդի, խելքդ գլո՛ւխդ հավաքի:

Սյոման համառ, կողքանց մտիկ տվեց Միւյային և արհամարհանքով լոեց:

Առաջ շարժվեցին:

— Լսի՛ր, — ասաց Միւյան, դու ինձ մի բա՛ն ասա կարճ ու պարզ, դու ուզե՞լ ես նրան բռնաբարել:

Սյոման նայեց Միւյայի խայթիչ աչքերին և տեղի տվեց.

— Այո:

Միւյան անսպասելի իր համար զարմացավ.

— Զո՞ոտ վազմի, — ապա ինչու բջիջում չասիր, վոր դու ուզում եյիր նրան բռնաբարել:

— Յես չեյի կարող նրան վիրավորել:

— Ո՞ւմ:

— Մարուսիային: Նա կվիրավորվեր այդ կոպիտ, անասնական բառից:

— Ուրեմն դու ուզո՞ւմ եյիր բռնաբարել, — նո՞ւ, այդպես կարճ կապի:

— Այո, միակ կարճ, մեշանական խոսքը, ճիշտ ե: Վորանողի ձեզ նեղություն չպատճառի մտնելու ավելի խորերը: Դա հեշտ ե ձեզ համար...

— Նո՞ւ, նո՞ւ, նո՞ւ, սկսե՞ց լեզու ածէ լը: Դու, ախալեր ջան, պարզն ասա՝ խրիել եմ կեղաստ պատմության մեջ, ուզում եմ մաքուր դուրս պրծնել:

Սյոման լուռ մնաց: Նա աչքերը վայրահակ՝ լսելի շնչում եր և ավելի մտածում թիջնում անց ու գարձի մասին քան թե լուռում:

— Մեշանական խո՞սք, — հեղնեց Միւյան և ըրթունքը ծամածուց, — ամեն ծծկեր հիմի գործ և ածում այդ բառը: Ինչ վոր ատամիդ տակ չի ընկնում, դժվարդ գալիս ե, մեղքդ ճկում ե տակին և ուզում ես խուսափել կեղտոտ գեղերտիրի պես՝ — մեշանական խո՞սք ե, ասա՛ ու պրծի՛ր . . . Արգեն աշխարքը բամբառում ե մեղ, վոր համայնացրել ենք նաև կինը, վոր մենք քանդում ենք մարդկային գոյության բոլոր հիմքերը . . . Կոպիտ ըըռնաբարություն, խառնակեցություն արա և յերբ կուսակցական ընկերներդ քեզ պատին են սեղմում — անոլանի՛ր մեշանականություն: Ահա սա՛ յե մեշանականությունը: Դա հեշտ ե քեզ համար ասելը:

— Դու խմանո՞ւմ ես, թե ինչեր ես խոսում — հանկարծ հարձակվեց Սյոման Միւյայի վրա:

— Այո, այո, — վակեց նրա ձայնը Միւյան, — խմանում եմ: Դու միայն մի վախեցնի ինձ և լսի՛ր: Կոպաս թիջնը և ամեն ինչ կխոստովանես, վոր ուզել ես բռնաբարել, բջիջը վորոշում կտա, կուղարկենք կուտ կոլեգիային: Յերկարացնելու միտքը թո՛ղ, չե՛ս պրծնի: Սա կուսակցություն ե, հորս տղան չե:

— Դու չե՞ս սովորեցնելու ինձ այդ բանը:

— Նո՞ւ, ավելի լավ: Վազը կրկին կհավաքվենք. Կոպաս թիջն և կխոստովանես: Իմացա՞ր:

— Առանց իմ խոստովանության պարզ և ամեն բան: Յես զարմանում եմ, թե ինչպես դու չես հասկանում: Մաքսիմը հայտնել ե, Մարուսիան ասաց բոլորը: Ուրեմն ել ի՞նչ վաստեր են պետք: Գործը պարզ ե առանց իմ խոստովանության: Այո, ըըռնաբարման փորձ: Գիտեմ, գործը կհասնի կուսկուեգիային և նա վճիռը կհանի, կուսակցությունից դուրս կանեն, թերեւ ժամանակվ, թերեւ և ով գիտե . . . ընդմիշտ:

— Յեկ գա քեզ համար վոչի՞նչ բան ե: Հա՞:

Սյոման համառ նայեց նրան և շարունակեց:

— Հիմարություններ մի՛ ասի: Լսի՛ր: Յես նրան ուզեցի

բոնաբարել—յեթե այդպես ես ուզում, և ինձ ազա՛տ թող: Յտե՛
սություն:

Յեկ Սյոման արագ-արագ հեռացավ:

Սյոման չգնաց բջիջ, ուր նշանակված եր յերկրորդ նիստ նրա-
գործը քննելու համար: Բջիջը վորոշում հանեց, —վտարել Սյոմա-
յին կուսակցությունից և իր վորոշումն ուղարկեց ԿՎՀ կուսկո-
լեգիային:

Սյոման հարցի քննության ժամանակ յերեան երեսել կոմու-
նիստին վոչ վայել վերաբերմունք. փոխանակ անկեղծորեն խոս-
տովանելու իր վոչ կոմունիստական արարքը՝ նա վիրավորում ե
բջիջի անդամներին, անվանելով յերեխա և այլն և հրաժարվում
ե բացատրություն տալուց:

Կուսկոլեգիան արձանագրելով, վոր այդ հանցանքի համար
Սյոման արժանի յեր կուսակցության շարքերից վտարվելու, սա-
կայն նկատի ունենալով նրա կողմնակի ներազով խոստովանելը իր
հանցանքը, յերիտասարդ հասակը, կատարած ընդհատակյա աշ-
խատանքը, հեղափոխության մատուցած ծառայությունները և
վոր նա առաջին անդամ ե նման հանցանք կատարում, նաև նկատի
առնելով սահմանապահ զորամասի հատուկ պայմանները՝ Սյոմա-
յին հայտնել ամենախիստ նկատողություն՝ վերջին նախադպուշա-
ցումով:

Կուսկոլեգիայի վորոշումը հայտնվեց բջիջում, գրվեց լրա-
գրում և գարձակ սահմանամերձ շրջանի խոսակցության առար-
կա:

Սյոման մի քանի որ խմում եր և անընդհատ ծխում: Ամեն
բան, ամեն առարկա, ամեն մարդ մերկացավ կարծես, սկսեց յե-
րեալ բոլորովին պարզ, հասարակ գույնով:

Իրականության գույնով...

Ճախուտներ, շամբեր, աղուտներ և այրված թփեր...

Սեպտեմբերի արեւը փռել եր իր վոսկեթել սավանը անապա-

տի վրա, ուր Սյոման և Միտյան ձիավորված գնում եյին սահ-
մանամերձ ճամբով:

— Հիմարություններ ես ասում—«Մարուսիան ինձ չհասկա-
ցավ»—ասում եր Միտյան՝ համառ ինչպես միշտ,—Մարուսիան
չի կարող ամեն իր գեմը վազողի գիրիկն ընկնել: Նա ուրիշի կին
է, հասկացի՛ր:

— Սեփականությո՛ւնը ասա:

— Սեփականությո՞ւնը: Այսինքն թեկուզ սեփականությունն
այնքան ժամանակ, այն չափով, վոր ինքը կամովին գնում ե
մեկին և մեկը՝ նրան: Նո՞ւ, քեզ չի դալիս, չի սիրում, վախում ե
ամուսնուց, հասարակությունից, սիրում ե ամուսնուն, վերջապես
խորը չի մտածում այդ մասին: Կամք չունի—քի՞չ բան կարող ե
պատահել: Ազատ չե՞:

— Ազատ ե:

Յեկ Սյոման հառաչեց:

— Ազա՛տ ե, ազա՛տ, ճիշտ ե, —բորբոքվեց հանկարծ Սյոման
և գոչեց: — Բայց լսիր, Մի՛տյա... Ափսո՞ս չեր հեղափոխու-
թյունը... Ափսոս չե՛ր հեղափոխությունը, վոր և վո՛չ վոքինը
չեր, ամենքին եր և ամենք ել ազատ եյինք նրան սիրելու: Յեկ
այնուեղ տղամարդությո՛ւն կար, կրակվել կար, թռչել, ընկնել
կրակի ու փոթորկի բերանը: Այնուեղ ամենք մի բան գիտեյինք,
վոր մեղնից ով ալելի մեծ սիրով կրանա նրա գիրկը և կվերցնի
ալելիին—կարո՞ղ ե, իրավունք ունի: Միրո՞ւմ ես, տղամա՞րդ ես,
թռի՛ր, գնա՛, վերցրո՛ւ: Անձնվիրության, սիրո, քաջության տեղ
եր: Իսկ ի՞նչ ե սա, այս կինը... Ինչքան շատ ես սիրում, այնքան
վատ քեզ համար...

— Նո՞ւ, տեսնո՞ւմ ես:

Սյոմային դուր չեկավ Միտյայի համաձայնելը իրան: Կար-
ծես միայն ինքն ուներ իրավունք այդպես մտածելու, ինչպես ինք-
նասպանության դիմուղը, վոր այդ գործը համարում ե միայն ի՛ր
կամքին յենթակա բան և համաձայն չե, վոր դա կատարվի ուրի-
շի ձեռքով: Յեկ սկսեց տրանջալ.

— Ուրիշի սեփականությո՞ւնը... Սուտ ե. սերը սեփակա-
նություն չե՝ սերը ամենքին ե և ամենից շատ նրանը, ով շատ ե
սիրում:

— Մաքսիմն ավելի շատ և սիրում, — սկսեց գրզուի Միտյան:

— Մարուսիան չգիտե, վոր ինքը վոչ իր ամուսնուն ե, վոչ իմը և վոչ ել ինքնիբենը, — համառում եր Սյոման տանջվելով, վոր չի կարողանում իրեն տանջուածքերին ձև տալ և արտահայտել, — այո՛, հոգին չես չափի, նրա հատակին չես հասնի: Մարուսիան «ուրիշի սեփականություն» չես: Նրա հոգու դռանը փականք ե դրված — մեշշանականության փականքը: Դա նրան թույլ չի տալիս հոգին բանալու և դուրս նայելու այս բարձր, անհուն յեթերը, վորտեղից արեի հետ մեզ ե գալիս բնական սերը:

Միտյան ուղեց հասկանալ նրան:

— Սպասի՛ր, — և ձիու սանձը քաշեց, կանդ առավ, Սյոման հետեւց նրան, — սպասի՛ր: Դու ուզում ես խառնակեցությո՞ւն ամեն բանի: Պարզ ասա, առանց գեղեցիկ խոսքերի:

— Բնությունը կհավասարակշռի՛, — պատասխանեց Սյոման հասկանալով նրան, ավելի քան նա ասաց, — վոչի՞նչ չի քայլայի: Ավելի բնական դույգեր կկազմվեն:

— Կինը տղյալ մոմենտին նրա՛նն ե, ով ամենից շատ և սիրում նրան, այսպես չասացի՞ր:

— Այո:

— Նո՞ւ, ուրեմն Մաքսիմն ավելի շատ և սիրում Մարուսիային, — դարձյալ գրգռեց Միտյան: Յեվ կինը նրանն ե, ու ամենից շատ սիրում է կինը ինքը — պրծավ գնաց: Ի՞նչ ես խելքիդ զոռ տալիս:

— Նրա՛ն և սիրում կինն ամենից շատ, ով ամենից շատ սիրում է իրան կնոջը, — համառեց Սյոման գրդաված:

— Սովեստությո՞ւն, հիմարությո՞ւն, չարժե մի դրոշ, — ու Միտյան ձին քշեց, — դու խենթացել ես:

Սյոմայի ձին ինքը գնաց հետեւց և հավասարվեց: Նրանք յերկար ժամանակ լուռ կարկառում եյին ճամբան՝ դիպչելով նրան ու վեր-վեր թուչելով: Զախ կողքին լուռում եր չամբուալը: Դաշտը ժագառում եր գեղին յերանդներով, իսկ ողի մեջ մղղում եր հեռվից հասնազ զողանջը ուղարկի, վոր չեյին յերեռում: Արել ուրախության պես լցվում եր հոգու մեջ:

Սյոման մտածում եր Մարուսիայի մտաին: Հանկարծ պարզ պատկերացրեց նրան: Ահա նա՝ ուսենու ձկուն հասակով, խնկադույն մաղերի գանգուրներն ինչպես վողկույզներ դլիսին գրած,

աչքերն առավոտայան լճակների պես ջինջ և հասակի այն հպարտ, հրամայական սլաքը, վոր խենթացնում եր իրան...

Ու հանկարծ մի խայթոց զգաց: Ծանր, ծանոթ խայթոց, վոր նրան պատահում եր միայն մի վայրկյան, յերբ նրա յերկայության առջև կանդնած մշուշը — զգայությունը բթացնող մշուշը — մի վայրկյան ճեղքվում եր և միջից լույսի պես ցայտում եր սիրած կինը կենդանի, իրական, իրրե մի սեեռյալ հիվանդագին պատկեր: Աղետալի՛ Մարուսիան:

Սյոմայի աչքերը կրակով լցվեցին: Նա դեմքը ցնցեց, վոր թափ տա իր աչքերից այդ պատկերը:

Մի խորին զգացում՝ ճշմարիտ, ինչպես կյանքը, զնդում եր խորունկից նրա հոգու մեջ:

— Լսի՛ր, Միտյա, հո զիտես, ինձ համար ավելի բարձր բան չի յեղել և չկա, քան հեղափոխությունը: Բայց նրա չափ ճշմարիտ ե, վոր յես սիրում եմ այս կնոջը: Բայց լսի՛ք...

— Նո՞ւ, — պղղպատի պես զարկեց նրան Միտյան:

— Յես դիտեմ, վոր ամեն անկարգ քայլ, ամեն սխալ հարգածում ե մեր վերելքին, հեղափոխությանը, սոցիալիզմին: Յես սիրում եմ հեղափոխությունը, նրա յերկաթե գիսցիպիլինան:

Միտյան չպատասխանեց, այլ քշեց իր ձին: Սյոման զնաց կողքից: Դարձյալ շամբուալը լուռում եր, հեռվում պապղում եր Արաքսի կոտրաված դաշույնը, իսկ ավելի հեռուն, ուղղակի յերկնքի մեջ հետեւի վոտների վրա պառկած և առաջինների վրա հենված անքթիթ նայում եր Մասիսը իրրե մի հսկայական սփինքս:

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍՎԱՐԱՌԱԿՈՒՄ

Վերջապես հասալ և այդ վերջին բոպեն:

Ստարտը տվին:

Նրանք թռչում են:

Զկալովը, Բայդուկովը, Բելյակովը:

Սալառնակն ուղղվեց դեպի Հյուսիսային Սառուցյալ ովկյանոսը, դեպի Բեեռ, դեպի Հյուսիսային Ամերիկա:

Յերկրագունդը մնաց Ներքեռում: Յերկիրը հետ և սողում:

Հետզետե հետեռում մնաց Մոսկվան, անծայրածիր դաշտերը, անտառները, քաղաքները, մնաց Խորհրդային Միությունը, և նրանք ընկան սառուցյների, մշուների, սառնամանիքների աշխարհը:

Նրանք պիտի կտրեն անցնեն այդ ահավոր աշխարհը, անցնեն Հյուսիսային Բեեռը, մտնեն մի այնպիսի աշխարհ, ուր վոչ վոք մտել վոչ հեքիաթներում, վոչ յերազներում:

Ահա յեթե կանցնեն այդ մահվան աշխարհը, յեթե կկտրեն կանցնեն—ապա նրանք իրենց կյանքում նորից մի անդամ կծնվեն: Բայց այդպես ե քաջերի որենքը:

Յեկ թռչում են յերեք կտրիճները:

Վարում ե Զկալովը:

Մեկ սլանում ե ամպերից վեր, մեկ սուզվում ե անդունդը, մեկ լուսամուտ ե ճեղքում ամպերի մեջ: Կոփի ե տալիս Զկալովը, նրան ոգնում ե Բայդուկովը, սրանց ոգնում ե Բելյակովը: Հետո Հերթը խլում ե Բայդուկովը, նրան ոգնում ե Զկալովը, ոգնում ե Բելյակովը:

Բուքը պարում է չար պար, ձյունը ծեծում ե նրանց, քամին ժտրակում: Սակայն թռչում են նրանք: Նրանց թռիչքը չունի վերադարձ կիսաճամբին:

Կա նպատակ—պետք ե հասնել այդ նպատակին:

Այսպես ե քաջերի որենքը:

Թռչում ե սալառնակը և նրա հետ թռչում են աղոսպելները, Փյուղելաժները, լյուկերը, պուլտերը, պելինդատորները: Թռչում ե խորհրդային տեխնիկան: Ողի մեջ ե խորհրդային տեխնիկան Սառուցյալ ովկյանոսի վրա:

Կոփի ե այնտեղ, քաջերի կոփիվը: Կամ կանցնեն՝ և կդառնան հերոսներ, կամ կընկնեն՝ կրկին կդառնան հերոսներ: Այդպես ե քաջերի որենքը:

Յեկ իսկապես—ուղ՞ը են թռչում: Ո՞վ ե թռել այդ աշխարհը, ցույց տվել ճամբան: Ո՞ւր կիջնեն՝ յեթե սալառնակը խանդարիվ: Ո՞ւմ կկանչեն ողնության՝ յեթե նեղն ընկնեն: Ո՞վ կա ներքեռում: Վոչ վոքն ե այնտեղ— մա՛հը:

Սակայն ահ չունի Զկալովը, չի վախենում Բայդուկովը, ծիծաղում ե Բելյակովը:

Նրանց սալառնակն անպարտելի յե: Այդ սալառնակի վրա ջանք են դրել խորհրդային մասնագետները, բանվորները, խորհրդային մտքի, կամքի, ճարտարության ծաղիկը:

Վո՛չ, սալառնակն անպարտելի յե: Նրան ճեռքերի վրա պահում են Միության 170 միլիոն Խորհրդային ժողովուրդները: Այդ ճեռքերն են թռցնում սալառնակը:

Վո՛չ, սալառնակն անպարտելի յե:

Յեկ ահա յերբ կես դիշեր յեղալ, յերբ կոփի եր տալիս անկուն Զկալովը, հաշվում եր Բելյակովը, Բայդուկովը մի փոքր թիկնը տվեց պատին և մի բոպե յերազեց...

Ո՞ւր մնաց տեսնես Հայրենիքը... Խորհրդային Միությունը: Ին՞չ ե անում այս ժամանի Հայրենիքը:

Քնած ե այս ժամին Ռուսաստանը, Ռուկրախնան, Բելառուսիան, Վրաստան, Հայաստան, Աղրբեջան, Թուրքմենիստան... Հեռավոր Արևելք... Քնած են Հսկայի քնով: Միայն ո՞վ վիտե կարմիր սահմանի վոր տեղամասերում հերոսացան քանի՛ կարմիր բանակայիններ:

Մուշ մուշ քնած ե հիմա նաև նրա փոքրիկը անկողնիկի մեջ: Նա խմորե թաթիկը դրել ե փոքրիկ սրտի վրա: Նա հանդիսա և ինչպես անմեղ անդորրություն:

Բայդուկովը ժամաց և աչքերը փախցրեց իր մանկիկի դեմքից...

Մի ուրիշ պատկեր։ Ահա իր լաբարատորիայում գյուտերի մեջ խորասուղված է մի խորհրդային գիտնական։

ԱՀա գործարանների անծայր սրահների յերկայնքով շարանշարան կազմ ու պատրաստ են կոմբայներ, տրակտորներ, ավտոմեքենաներ, թնդանոթներ, տանկեր...

Ահա կոլտնտեսական դաշտերի անհունություններ, ուր փըռ-
ված գնում ե կորչում անբավ բերք:

Այդ բոլորը մնացել ե հեռու, հեռու, շատ հեռվում . . .

Բայց ահա մի վսեմ կերպարանք։ Նա առնական է, խրոխառ հանդիստ։ Նրա խորասույզ հայացքը խուզարկում է Սառուցյալ ովկիանոսը։ Նրա գլխի ստվերը հանդիստ շարժվում է քարտեզի վրա։ Ծխամործը վեր է վոլորում կապույտ մի ծուխ, վորը պտափում է խաղաղ սենյակի մեջ, գծում քարտեզի վրա։

Մի յերկրորդ առնական կերպարանք հստած է դիմացը։ Նրա գինվորական բաճկոնը կրծքի վրա հանդիսաւ յելնում-իջնում եւ նա ևս հայացքն հառել է քարտեղին։

Նրանք յերկուսը մտածում են, նրանք հետևում են քարտեցին, կարծես այստեղ մի բան են տեսնում:

Բայդուկովը շատ լավ է հասկանում թէ ու'մ են տեսնում նը-
րանք:

Զկալովին, Բայդուկովին, Բելյակովին:

Տեսնում են նրանց թուիչքը, գիտեն թե այս ժամկին ու'ր են ողաջուները, գիտե՛ն թե ինչ կոխիլ են տալիս յերեք քաջերը:

Նրանք հուսով ու սիրով հետեւմ են այդ կովին: Հետեւմ
են ծնողի, մեծ յեղբոր, ընկերի հոդացողությամբ:

Նրանք հսկում են Միության խաղաղության վրա, Հսկում են նաև յերեք հերոսների կյանքի վրա:

Նրանք այստեղ են ահա, ահա սավառնակի մեջ, ահա իրենց հետ։ Ապա կարծում, եք մենա՞կ են ողաչուները։ Վոչ, վո՞չ։ Ողաչուների հետ են այս բապեցիս Մինաթյան բոլոր ժողովուրդները։ Յեվ կատեք այդ ո՞վ ե թուզում իսկապես։ Յերեք ողաչուները։ Վո՞չ, վո՞չ։ Թուզում ե խորհրդային ժողովրդի միագը, կամքը։ Այդ մեծ Ստալինի փողին ե թուզում հերոսների հետ։

Յերբ առաջին անգամ վոտ դրին Ամերիկայի հողի վրա՝ զարմանքով նկատեցին, վոր անցել եյին Սառուցյալը, Բենուը, Ալյասկան, մտել ոտար աշխարհ։ Ա վոչ մի բոպե չեյին զգացել այդ ոտարությունը։

Ամբողջ ժամանակ սավառնակի մեջ եր Հայրենիքը և մեծ Ստավինը:



Պատ. Խմբագիր՝ Ա. Ղազարյան
Տեխ. Խմբագիր՝ Ստ. Ալբունյան
Մրբագրիչ՝ Հ. Մանուկյան

յար.

		5	7
1.	Ըստ այլ շեմ	—	62
2.	Գը հւնց շ	—	" 74
3.	Կրամաքայլից	—	" 78
4.	Երկար շ	—	" 122
5.	Դաշտավայրից Կայունացած		

Գլավլիտի լիազոր Ա.—3064. Հրատ. 4474

Պատվեր 115. Տիրաժ 4000

Թռւղթ 62×94 Տպ. 8 մամ.

Մեկ մամ. 38,4 նիշ, Հեղինակային 6¹/₈ մամ.

Հանձնված ե արտադրության 31 հունվարի 1938 թ.

Ստորագրված ե տպագրության 17 փետրվարի 1938 թ.

ԳԻՆԼ 3 Ռ.

2-40



27930